KONRAD ADENAUER STIFTUNG

SLU

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ս. Խաչիկյան, Ա. Քթոյան

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

(ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ)

Հեղինակներ՝ Ս. Խաչիկյան, Ա. Քթոյան

Խմբագիր՝ Մ. Մովսիսյան

ԵՐԵՎԱՆ 2021

Բովանդակություն

Նախաբան....7

1. Պատերազմի ազդեցությունը տնտեսության կառուցվածքի վրա....8

2. Պատերազմի սոցիալական ազդեցությունը և մարդկային կապիտալը....24

3. Պատերազմի ազդեցությունը մակրոտնտեսական իրավիճակի վրա....38

4. ՀՀ ֆինանսական համակարգը. մինչ և հետպատերազմյան իրողությունները....51

5. ՀՀ արտաքին առևտուրը և դրա առանձնահատկությունները հետպատերազմյան շրջանում....72

6. *Ներդրումներն ու ներդրումային միջավայրը՝ հետպատերազմական իրավիճակի համատեքստում*....83

7. Խաղաղությունը և ֆինանսատնտեսական զարգացման մակարդակը....92

Ամփոփում....97

Օգտագործված գրականություն....103

Հավելված....106

2020 թվականի դարաբաղյան վերջին պատերազմը Հայաստանի Հանրապետության համար շատ բան է փոխել: Թե՛ Հայաստանը, թե՛ Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանը կանգնած են մեծ մարտահրավերների առջև: Միանգամայն բնական է, որ ներկայումս հանրային բանավեճերը հիմնականում ընթանում են պատերազմի անմիջական հումանիտար հետևանքների շուրջ: Լեռնային Ղարաբաղից հազարավոր հայ փախստականներ նաև 2020 թվականի նոյեմբերի 9-ի հրադադարից հետո դեռ գտնվում են Հայաստանում, հատկապես մայրաքաղաք Երևանում: Մարդկանց հեռանկար է պետք, քանի որ հրադադարի արդյունքում նրանցից շատերն այլևս չեն կարող վերադառնալ իրենց հայրենիք: Բացի այդ, այս պատերազմի ընթացքի և արդյունքների վերաբերյալ ներքաղաքական բանավեճերը դեռ երկար կշարունակվեն: Միևնույն ժամանակ անհրաժեշտ են կառուցողական քննարկումներ, թե ինչպիսին պետք է լինի Լեռնային Ղարաբաղի և այնտեղ բնակվող հայերի համար ապագա տեսլականը, և թե ինչ է դա նշանակում կոնկրետ Հայաստանի Հանրապետության համար:

Մեզ համար՝ որպես «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամ, հստակ է, որ Հայաստանը Եվրոպա է: Բայց ավելի քան վեցշաբաթյա պատերազմի ընթացքում, ցավոք, պարզ դարձավ նաև, որ Արևմտյան Եվրոպայում Լեռնային Ղարաբաղի հակամարտության նկատմամբ հետաքրքրությունն այնքան մեծ չէր, որքան արժանի էին հազարավոր զոհվածների, վիրավորների և փախստականների հանգեցրած իրական իրադարձությունները: Չնայած և՛ Հայաստանը, և՛ Ադրբեջանը ընդգրկված են Եվրամիության այսպես կոչված «Արևելյան գործընկերության» մեջ, հետևաբար նաև հատուկ հարաբերություններ ունեն Բրյուսելի հետ, արձագանքները շատ զուսպ էին: Դրա պատճառները բազմաթիվ են և շատ բարդ, և հնարավոր չէ դրանք այստեղ քննարկել:

Սույն ուսումնասիրությամբ մենք միանգամայն գիտակցաբար անդրադառնում ենք պատերազմի տնտեսական հետևանքների թեմային: Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետության խնդիրն է հնարավորինս արագ ստեղծել նախադրյալներ պատերազմի հետևանքները հաղթահարելու համար, միաժամանակ նաև նախանշել այն նոր հեռանկարները, որոնք կապահովեն Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության կյանքի անվտանգությունն ու

հուսալի ապագան: Արդեն 2020 թվականի հոկտեմբերի վերջին՝ այսինքն պատերազմի կեսերին, փորձագետներն սկսել էին ուսումնասիրությունները: Վերլուծությունները տևեցին մինչև 2021 թվականի փետրվարի վերջը: Այսկերպ հնարավոր եղավ անմիջապես նախապատերազմյան և հետպատերազմյան ժամանակաշրջանի հիմնական տնտեսական տվյալները համեմատել միմյանց հետ և ներառել վերջնական վերլուծության մեջ: Պատերազմի ընդհանուր մակրոտնտեսական հետևանքների մասին տեղեկություններից բացի, այս գրքույկի ուսումնասիրությունները կենտրոնացած են այնպիսի թեմաների վրա, ինչպիսիք են պատերազմի սոցիալական հետևանքներն այսպես կոչված մարդկային կապիտալի, ներդրումների միջավայրի, արտաքին առևտրի նոր պայմանների, ինչպես նաև ֆինանսական համակարգի տեսանկյունից:

«Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամը և Հայաստանի Տնտեսական լրագրողների ակումբը սերտորեն համագործակցում են արդեն մի քանի տարի: Այս ընթացքում իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ տնտեսական քաղաքականության ոլորտում: Ուրախ ենք, որ այս գրքույկով իրականացրել ենք ևս մեկ համատեղ նախագիծ «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի և Տնտեսական լրագրողների ակումբի միջև, և մաղթում ենք բոլորին հետաքրքիր ընթերցանություն:

Դր. Թոմաս Շրապել

Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի

«Քաղաքական երկխոսություն Հարավային Կովկաս»

Տարածաշրջանային ծրագրի տնօրեն

Այս հետազոտությունը նախաձեռնել ենք անցած տարեվերջին, երբ ակնհայտ էր այն փաստը, որ պատերազմի ավարտից հետո մեր երկիրը հայտնվելու է բազմաշերտ ճգնաժամային իրավիճակում: Գաղափարի իրականացումն այս անգամ ևս հնարավոր դարձավ «Տնտեսական լրագրողների ակումբի» (ՏԼԱ) լավագույն գործընկերոջ՝ Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի աջակցությամբ:

Ստեղծված պայմաններում հիմնավոր մտահոգություններն ու իրականությունը խեղաթյուրող տեղեկատվական խառնաշփոթը ցույց տվեցին, որ առաջացած և դեռևս սպասվող սոցիալ-տնտեսական խնդիրները, տնտեսության վրա պատերազմի հետևանքները մասնագիտական վերլուծությունների և օբյեկտիվ գնահատականների կարիք ունեն:

Երկու արհեստավարժ տնտեսագետների՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտներ Արմեն Քթոյանի և Սոս Խաչիկյանի եռամսյա ուսումնասիրության արդյունքում այսօր ունենք վերլուծություն, որտեղ ներկայացվում է Հայաստանի տնտեսության վրա ղարաբաղյան 2-րդ պատերազմի ազդեցությունը, դրա հետեւանքների հաղթահարումը՝ կարճաժամկետ եւ երկարաժամկետ հեռանկարում:

Վստահ ենք, որ այս վերլուծությունն օգտակար տեղեկատվական և ուղղորդող նյութ կլինի ոչ միայն փորձագետների, վերլուծաբանների, այլև՝ հետպատերազմյան շրջանում երկրի տնտեսական քաղաքականության մշակման համար:

Աննա Բաղդասարյան

Տնտեսական լրագրողների ակումբի նախագահ

Նախաբան

Ճակատագրի դառը հեգնանքով հայի յուրաքանչյուր սերունդ ունենում է իր պատերազմը, երբեմն՝ ոչ մեկը։ Ճակատագրի հեգնանքը կարծես պատմական օրինաչափության վերածվելու հավակնություն ունի, որը խախտելու, փակ շրջանից դուրս գալու համար պետք է լավ սերտենք ներկա և նախորդ պատերազմների դասերը։ Վերջինները որքան էլ որ դառն են, այնուհանդերձ դրանցում է ապագայում նոր պատերազմներից խուսափելու ուղին ու բանալին։

Ստորև մեր կողմից փորձ է արվել ուսումնասիրել մերօրյա Գոյամարտի սոցիալ-տնտեսական հետևանքները, տնտեսական համակարգի տարբեր բաղադրիչների վրա դրա հնարավոր ազդեցությունն ու ռիսկերը։ Այդ նպատակով դիտարկվել են տնտեսության կառուցվածքային դիտակետը, մարդկային կապիտալի վրա պատերազմի ազդեցությունը, մակրոտնտեսական իրավիճակի հնարավոր փոփոխությունները, ինչպես նաև՝ կատարվել է ֆինանսական համակարգի, արտաքին առևտրի ու ներդրումների վերլուծություն՝ հետպատերազմյան իրավիճակի համապատկերում։

1. Պատերազմի ազդեցությունը տնտեսության կառուցվածքի վրա

Տնտեսության կառուցվածքն էական ազդեցություն ունի ցանկացած երկրի սոցիալական, քաղաքական ու այլ ոլորտների գործունեության վրա: Դա հատկապես արտահայտվում է այնպիսի երկրներում, որոնք գտնվում են հակամարտությունների մեջ: Այս տեսանկյունից կարևոր նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության տնտեսության կառուցվածքային առանձնահատկությունների ուսումնասիրությունը, որը հետխորհրդային ամբողջ ժամանակաշրջանում կրել է Ղարաբաղյան հակամարտության բացասական հետևանքները:

Ակնհայտ է, որ տնտեսության կառուցվածքով են պայմանավորված համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ձևավորման բազմաթիվ գործոնները: Բացի այդ, ՀՆԱ-ի հաշվարկման մեթոդաբանությունը նույնպես կարևոր է այդ արդյունքի իրական պատկերը հասկանալու և հետագա ռազմավարություն մշակելու համար: Դրա անհրաժեշտությունն ընդգծվեց հատկապես ղարաբաղյան 44-օրյա պատերազմից հետո, քանի որ պաշտոնական վիճակագրությունը հնարավորություն չի տալիս իրականացնել արդյունավետ հաշվառում և դրա վրա հիմնված հետազոտություններ: Մասնավորապես, որոշ հետազոտողներ կարծում են, որ այն ռեսուրսները, որոնք ոչնչացվել են պատերազմի արդյունքում, ՀՆԱ-ի հաշվարկման ընթացքում պետք է դիտարկել որպես վերջնական սպառման ապրանքներ և ծառայություններ նույնիսկ այն պարագայում, երբ նրանք նախատեսված էին արտադրության միջանկյալ սպառման նպատակով[1]: Ընդհանրապես, գործող մեթոդաբանության համաձայն, միջանկյալ սպառման արժեքը չի ներառվում ՀՆԱ-ի հաշվարկման մեջ, քանի դեռ չի դարձել վերջնական սպառման ապրանք կամ ծառայություն՝ ստեղծելով նոր արժեք: Սակայն ակնհայտ է, որ պատերազմական իրավիճակներում միջանկյալ սպառման ապրանքները և ծառայությունները կարող են ոչնչանալ՝ դեռևս վերջնական արժեք չստեղծած: Այդ դեպքում խնդիր է առաջանում պատերազմի նյութական կորուստների հաշվարկման և ՀՆԱ-ի հետ կապված ցուցանիշների վերագնահատման տեսանկյունից: Որպեսզի պատկերացում կազմվի ՀՆԱ-ի և միջանկյալ սպառման հարաբերակցության մասին, ապա նշենք, որ վերջին տասնամյակում ՀՀ-ում, միջանկյալ

[1] The Effect of War on Economic Growth. Clifford F. Thies and Christopher F. Baum, Cato Journal, Vol. 40, No. 1 (Winter 2020). DOI:10.36009/CJ40.1.10. p10

սպառումը կազմել է համախառն թողարկման 35,5-36,6 և ՀՆԱ-ի 49,6- 51,2 տոկոսը[2], իսկ 2019թ-ին ՀՀ-ում ապրանքների և ծառայությունների թողարկումը կազմել է մոտ 9 034. 1 մլրդ. դրամ, իսկ միջանկյալ սպառումը՝ 3 210.3 մլրդ դրամ[3]: ՀՀ տնտեսության համար միջանկյալ սպառման մակարդակը բավականին բարձր է, որն անհրաժեշտ է հաշվի առնել հատկապես տնտեսության կառուցվածքային բարեփոխումների իրականացման և զարգացման հետագա ռազմավարության մշակման նպատակով: Հետևաբար, ղարաբաղյան 44-օրյա պատերազմի ընթացքում ունեցած տնտեսական կորուստների ազդեցությունը ՀՆԱ-ի վրա գնահատելու համար կարևոր նշանակություն ունի մեթոդաբանական արդի մոտեցումների կիրառումը վիճակագրական տվյալների բազայի ձևավորման առումով, որի պարագայում կտրվի տնտեսության վիճակի հնարավորինս ճշգրիտ գնահատական՝ դրանից բխեցնելով տնտեսության կառուցվածքի հետագա բարելավման ուղղությունները:

Հետպատերազմյան տնտեսությունների կառուցվածքային փոփոխությունները գրեթե մշտապես կրել են այդ երկրներում պատերազմից հետո տեղի ունեցող քաղաքական գործընթացների ազդեցությունը: Մարդկային, տարածքային ու տնտեսական մեծ կորուստները հանգեցնում են քաղաքական փոփոխությունների, որն օրակարգ է բերում ռազմավարական նոր ծրագրեր: Հետազոտությունների մեջ հիշատակման է արժանի Երկրորդ համաշխարհային պատերազմի վերաբերյալ ներկայացված այն թեզը, որի համաձայն հետպատերազմական Եվրոպայում ազգայնականությունը վերաարժևորեց իր դերակատարումը, հաղթանակած երկրների կառավարությունները միջազգային հարաբերություններում առավել ընդգծեցին ազգային շահերը, իսկ պարտված երկրների ազգային կառավարությունները փորձեցին վերահաստատվել՝ սահմանելով օրինականության ու ներառականության նոր կանոններ՝ էթնիկական ավելի մեծ հիմքերով, քան մինչ պատերազմն էր[4]: Այսինքն և՛ հաղթող, և՛ պարտվող երկրների կառավարությունների գործողություններում ընդգծվեցին ազգային գործոնները: Դա բնականաբար հանգեցրեց ռազմավարական նոր ծրագրերի ներդրման, առաջացնելով տնտեսության կառուցվածքային համապատասխան փոփոխություններ: Կարևոր է նշել, որ գործունեության ազգային ուղղվածություն ունեցող կառավարությունները տնտեսական

[2] Տես՝ https://www.armstat.am/am/?nid=202

[3] Տես՝ «Հայաստանի ազգային հաշիվներ 2020», Վիճակագրական ժողովածու, ՀՎԿ, Երևան 2020թ., էջ 23.

[4] Ahonen, P. (2017). Germany and the Aftermath of the Second World War. Journal of Modern History, 89 (2), doi:10.1086/691523, p.383.

ոլորտում կարևորում են ներքին ռեսուրսների համախմբումը և արդյունավետ կառավարումը: Ինչի արդյունքում տնտեսությունը որոշ չափով փակվում է, օտարերկրյա ներդրումները նվազում են, արտարժույթի փոխարժեքը բարձրանում է: Նմանատիպ իրավիճակ է այժմ Հայաստանում, որտեղ ներմուծումից տնտեսության մեծ կախվածության պայմաններում ԱՄՆ դոլլարի նկատմամբ ՀՀ դրամը հաշված օրերի ընթացքում արժեզրկվեց մոտ 8%-ի չափով՝ հանգեցնելով ներմուծվող ապրանքների գների բարձրացմանը: Հետպատերազմական տնտեսության կառուցվածքային փոփոխության ընթացքում պետք է հաշվի առնել այս գործոնը ոչ միայն ներմուծման փոխարինման տեսանկյունից, այլև այն առումով, որ ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների կախվածությունը ներմուծվող ապրանքներից ստացվող անուղղակի հարկերը բավականին մեծ է, մասնավորապես ավելացված արժեքի հարկի 60-65 տոկոսը գանձվում է սահմանին:

Երկրորդ աշխարհամարտի հետպատերազմական Գերմանիայի տնտեսության վերականգնման մեջ նույնպես մեծ դերակատարում ունեցան կառուցվածքային փոփոխությունները: Հայտնի «Մարշալի պլանի» համաձայն Գերմանիան մեծ աջակցություն ստացավ ԱՄՆ-ից՝ տնտեսության կառուցվածքային փոփոխությունների և վերականգնման նպատակով, սակայն մինչ այսօր այդ պլանի նպատակների հետ կապված քննարկումներն իրականանում են տարբեր ուղղություններով: Հելգեի և Ալբրեխտի (Helge and Albrecht) կողմից իրականացված ամփոփ հետազոտության համաձայն «Մարշալի պլանի» իրագործումը նպատակ է ունեցել ոչ միայն վերականգնել հետպատերազմական Գերմանիան, այլև ստեղծել Արևմտյան Եվրոպայի երկրների միջև ուժեղ տնտեսական կապեր՝ զսպելով Արևելյան Եվրոպայում հաստատված խորհրդային կարգերի տարածումը[5]: Տնտեսական նոր կապերի ստեղծումն ուղեկցվել է տնտեսության կառուցվածքի էական փոփոխություններով, ստեղծվել են նոր աշխատատեղեր, բարելավվել է բարեկեցության մակարդակը: Այսինքն «Մարշալի պլանը» մի կողմից եղել է աջակցություն ավերված տնտեսության վերականգնմանը, մյուս կողմից ունեցել է տնտեսական, սոցիալական և քաղաքական մեծ ազդեցություն ամբողջ տարածաշրջանի վրա: Ըստ էության տնտեսության վերականգնման նպատակով հատկացվող մեծածավալ միջազգային օգնությունները կարող են ունենալ ոչ միայն սոցիալական կամ տնտեսական, այլ նաև

[5] Helge Berger, Albrecht Ritschl, "Germany and the Political Economy of the Marshall Plan, 1947-52: A Re-Revisionist View", in: Barry Eichengreen (ed.), Europe's Post-War Recovery, Cambridge: Cambridge University Press, 1995, pp. 199-245.

քաղաքական նպատակներ: Դա նշանակում է, որ միջազգային աջակցության համատեքստում տնտեսության վերականգնումը կարող է հանգեցնել նաև քաղաքական ծրագրերի վերանայման:

Հետպատերազմական Գերմանիայի տնտեսության կառուցվածքային փոփոխությունների շրջանակում արժե ուշադրություն դարձնել այն փաստի վրա, որ քաղաքականություն մշակողները ածխի արդյունահանման ծավալների կրճատմանը զուգահեռ՝ որը Գերմանիայի տնտեսության համար ուներ հսկայական նշանակություն, սկսեցին կարևորել տեխնոլոգիական արդիականացումը և նորարարությունները[6]: Այդպիսի փոփոխության դասական օրինակ կարելի է համարել Գերմանիայի Ռուհրի ածխի խոշոր հանքերից մեկի փակումը 1950-ական թվականների վերջին և դրա փոխարեն Ռուհր-Բոխումի համալսարանի (Ruhr-Universität Bochum) հիմնումը[7], որն այդ տարածաշրջանի հանքահումքային արդյունաբերության արտադրական հզորությունները փոխարինեց գիտակրթական խոշոր կենտրոնի: Բնականաբար այդ գործընթացն իրականացվեց տարիների ընթացքում՝ տնտեսության կառուցվածքային էական փոփոխությունների արդյունքում:

Հետպատերազմական Ճապոնիան, որը նույնպես Երկրորդ համաշխարհային պատերազմում պարտված պետություն էր, բնութագրվում էր ոչ միայն տնտեսության, այլև հասարակության աղետալի վիճակով: Այս ժամանակաշրջանին վերաբերող հետազոտություններում նշվում է, որ Ճապոնիայի անվերապահ կապիտուլյացիայից հետո ճապոնացիները կորցրեցին իրենց ազգային հպարտության և ինքնության զգացողությունը[8]: Պետք է նշել, որ ըստ մամուլի բազմաթիվ հրապարակումների և պետական ու հասարակական կառույցների հայտարարությունների, այդպիսի զգացողություն առկա է նաև մեր հասարակության մոտ՝ Ղարաբաղյան պատերազմից հետո: Հետևաբար պատերազմի հետևանքների հաղթահարման նպատակով տնտեսության կառուցվածքային փոփոխություններին զուգահեռ պետք է աշխատել նաև հասարակության մտածելակերպի և գործելաոճի փոփոխության ուղղությամբ:

---

[6] Transformation Experiences of Coal Regions: Recommendations for Ukraine and other European Countries. Center for Environmental Initiative Ecoaction. p27. https://germanwatch.org/sites/germanwatch.org/files/Study_Transformation_Experiences_Coal_Regions_EN.pdf (Last view was at 16.01.2021)

[7] See at: https://www.britannica.com/place/Bochum (Last view was at 19.12.2020)

[8] Kenkichiro Koizumi, "In Search of 'Wakon': The Cultural Dynamics of the Rise of Manufacturing Technology in Postwar Japan." Technology and Culture 43, no. 1 (2002), 40

Տնտեսության առողջացման համատեքստում Ճապոնիան կենտրոնացավ ոչ միայն ներքին ռեսուրսների համախմբման, այլ նաև արտասահմանյան բիզնեսի հետ համագործակցության վրա: Տեխնոլոգիական ուղղվածություն ունեցող ճապոնական բիզնեսն սկսեց աշխատել արտերկրի հայտնի ընկերությունների հետ միասին, ունենալով նրանց երաշխիքները՝ հետևաբար նաև սպառման կայուն շուկան[9]: Այդպիսի համագործակցությունը զարգացրել է ճապոնական ընկերություններին, որոնք հետագայում կարողացել են կայանալ որպես գիտության և կրթության վրա հիմնված ինքնուրույն ընկերություններ՝ նպաստելով Ճապոնիայի տնտեսության վերականգնմանը:

Հետպատերազմական Գերմանիայի և Ճապոնիայի՝ որպես պարտություն կրած երկրների, վերականգնման ու զարգացման բարձր տեմպերին զուգահեռ, հետազոտություններում նշվում են նաև ոչ այնքան հաջողված փորձեր: Մասնավորապես, առկա է համալիր վերլուծություն, որի համաձայն նախկին Բոսնիայի և Հերցոգովինայի (որն որոշ չափով կարելի է նմանացնել ղարաբաղյան հակամարտության հետ, որպես հետխորհրդային իրավիճակ) վերականգնման ընթացքում պետականաշինության գործընթացն ու ժողովրդավարացման խթանումը չեն իրականացվել այդ ժողովրդի ներկայացուցիչների միջոցով՝ ովքեր պետք է հաշվետու լինեին քաղաքացիներին, այլ իրականացվել են դրսից նշանակված վարչարարների, տեխնոկրատների և դիվանագետների միջոցով, ովքեր հաշվետու են եղել այլ երկրների[10]: Այսինքն սոցիալական, տնտեսական և քաղաքական գործընթացներում չեն գործել հանրային մասնակցության և վերահսկողության ինստիտուտներ, ինչը վկայում է այդ ժամանակաշրջանում Բոսնիայի և Հերցոգովինայի ժողովրդի ու իշխանության միջև էական խզման մասին: Հենց այդպիսի խզման արդյունքում է, որ չեն կարողանում ապահովել հետպատերազմական տնտեսության զարգացում:

Կատարված ուսումնասիրությունները և հետազոտությունները ցույց են տալիս, որ տնտեսության կառուցվածքային փոփոխությունները պատերազմներից հետո՝ հատկապես պայմանական պարտություն կրած երկրներում, եղել են անխուսափելի գործընթացներ: Մինչպատերազմական Գերմանիայում ածխի և պողպատի արդյունահանումը՝ ըստ այդ հետազոտությունների, եղել է բավականին բարձր մակարդակի վրա, որը հանդիսացել է

[9] Shigeru T. Otsubo, Post-war development of the Japanes economy, April 2007, Nagoya University, Japan. p15

[10] Caner Sancaktar, Political and Economic Reconstruction in Bosnia-Herzegovina, Journal of Balkan Research Institute-2018, p228

տնտեսության շարժիչ ուժը: Սակայն պատերազմից հետո ոչ միայն Գերմանիայում, այլև Ճապոնիայում շեշտադրում է կատարվել կրթության, գիտության և տեխնոլոգիաների վրա, ապահովելով մեծ հաջողություններ: Արևմտյան Եվրոպայում կարևորվել են տնտեսական նոր հարաբերությունների հաստատումը, որը բնականաբար ուղեկցվել է տնտեսության կառուցվածքային փոփոխություններով: Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ նմանատիպ փոփոխություններն արդյունավետ չեն եղել Բոսնիայի և Հերցոգովինայի պարագայում: Նշենք, որ այս դեպքում ինչպես պատերազմների մասշտաբները, այնպես էլ աշխարհաքաղաքական իրավիճակները եղել են տարբեր:

Ըստ էության, տնտեսության կառուցվածքային փոփոխություններն անխուսափելի են պատերազմից հետո: Սակայն երաշխավորված արդյունավետությունը կախված է բազմաթիվ՝ այդ թվում քաղաքական գործոններից:

Հայաստանի Հանրապետությունը տնտեսության կառուցվածքի առումով զարգացման համար նպաստավոր փոփոխություններ չի ունեցել հետխորհրդային ժամանակաշրջանում: Դա են վկայում ինչպես հետազոտությունների արդյունքները, այնպես էլ պաշտոնական վիճակագրությունը: Մասնավորապես, Ա. Եղիազարյանի կողմից իրականացված համապարփակ հետազոտության համաձայն «...աճի հիմնական գործոնների շարքում կարելի է առանձնացնել տնտեսության և կենսագործունեության մեկնարկային պայմանների կայունացումը՝ շնորհիվ միջազգային դրամաշնորհների և արտոնյալ վարկերի, ռազմավարական նշանակության ենթակառուցվածքներում (էներգետիկա, տրանսպորտ և հեռահաղորդակցություններ), լեռնահանքային արդյունաբերությունում և արդյունաբերության առաջնային մշակման ճյուղերում կատարված օտարերկրյա ներդրումները, ինչպես նաև մասնավոր տրանսֆերտների աճող ծավալները: Եթե կառուցվածքային առումով փորձենք բնորոշել հայաստանյան հասարակության հետխորհրդային զարգացումը, ապա պետք է հաստատել, որ այն ինդուստրիալ հասարակությունից վերափոխվել է ագրարայինի»[11]: Այդպիսի ցուցանիշներով բնութագրվող տնտեսությունը հեռու է ռազմական արդյունաբերություն ունենալուց: Ավելին, ռազմական արդունաբերություն չունեալու պարագայում առնվազն անհրաժեշտ է ուժեղ տնտեսության

[11] Ա. Եղիազարյան, «Հայաստանի տնտեսության կառուցվածքային վերլուծությունը (հատվածային, զբաղվածության և եկամտային ասպեկտներ)», 21-րդ ԴԱՐ», թիվ 3 (55), 2014թ., էջ 42

առկայություն, որը կարող է սպասարկել պետության անվտանգության հետ կապված ռազմական ծախսերը:

ՀՀ վիճակագրական կոմիտեի վերջին՝ 2016-2019թթ. ցուցանիշները վկայում են, որ ՀՆԱ-ի շուրջ 65-70 տոկոսը ապահովվել են տնտեսական գործունեության տեսակների 40 տոկոսը, մասնավորապես գյուղատնտեսությունը, առևտուրը, մշակող արդյունաբերությունը, շինարարությունը, ֆինանսական և ապահովագրական գործունեությունը, էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարումը, և անշարժ գույքի հետ կապված գործունեությունը[12]: Դիտարկվող ժամանակաշրջանում ՀՀ տնտեսության կառուցվածքում արտահանելի գործունեության տեսակների մասնաբաժինը բավականին փոքր է, իսկ ռազմական արդյունաբերության և դրա հետ սերտ փոխկապված ոլորտների մասնակցությունը ՀՆԱ-ի արտադրությանը բացակայում են: Ավելին, դրանք ոչ ճկուն ոլորտներ են և անհրաժեշտության դեպքում՝ կարճ ժամանակում, չեն կարող վերափոխվել պատերազմական իրավիճակին համապատասխան:

Վերոնշյալ հիմնավորումներն ամրապնդվում են նաև հետևյալ հետազոտության մեջ ներկայացված պնդումներով. «Վերջին շուրջ երկու տասնամյակների ընթացքում (տնտեսության) կառուցվածքային տեղաշարժերի օբեկտիվ և տրամաբանական բնույթը դեռևս չի նշանակում, որ այդ տեղաշարժերը ցանկալի են և օպտիմալ՝ հասարակության, պետության և երկրի երկարաժամկետ նպատակների իրագործման տեսանկյունից: Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ տնտեսության նոր կառուցվածքի ձևավորումը և գործարկումը որպես կանոն տեղի է ունենում ցածր տեխնոլոգիական հենքի վրա... Տնտեսության կառուցվածքի ոչ արդյունավետ բնույթը դրսևորվում է նրանով, որ վերջին տարիներին առաջանցիկ տեմպերով զարգացում են ապրել տնտեսության այն ճյուղերը, որոնք որակյալ աշխատուժի նկատմամբ մեծ պահանջարկ ներկայացնել չեն կարող»[13]: Ըստ այս հետազոտության՝ տնտեսության կառուցվածքի ոչ օպտիմալ բնույթը, ցածր տեխնոլոգիաները, ցածրորակ աշխատուժը եղել են տնտեսական գործունեության հիմնական բնութագրիչները, որտեղ որևէ անդրադարձ չկա ռազմական արդյունաբերության կամ այդ ուղղությունն սպասարկող ոլորտների առկայության մասին:

[12] Տես՝ «Հայաստանի ազգային հաշիվներ 2020», Վիճակագրական ժողովածու, ՀՎԿ, Երևան 2020թ., էջ 28,

[13] Վահագն Խաչատուրյան «ՀՀ տնտեսության կառուցվածքային փոփոխությունները և դրանց գնահատումը», Բանբեր ՀՊՏՀ 2019.3, էջ 66-67,

Դրանք հետազոտության մեջ բացակայում են, քանի որ ՀՆԱ-ի կառուցվաքի մեջ չկան այդպիսի ցուցանիշներ: Այսինքն ուսումնասիրվող հետազոտությունների մեջ, ինչպես նաև պաշտոնական վիճակագրության հրապարակումներում, ռազմական արդյունաբերության կամ դրան սպասարկող ոլորտների վերաբերյալ ցուցանիշներ չեն ներկայացվում:

Վերոնշյալ ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում առաջ է գալիս կարևոր հարցադրում. եթե մոտ երկու տասնամյակ միջազգային դրամաշնորհները, տրանսֆերտները և օտարերկրյա ներդրումներն ապահովել են ՀՀ տնտեսական գործունեության հիմնական առանցքը, սակայն արդյունքում ինդուստրիալ հասարակությունը վերափոխվել է ագրարայինի, իսկ տնտեսության հիմնական գործոններ են դարձել ցածրակարգ տեխնոլոգիաները և ոչ որակյալ աշխատուժը, ապա անհասկանալի է, թե զարգացման ի՞նչ ռազմավարություն է գործել այդ ժամանակահատվածում և քաղաքական պատասխանատվություն կրող իշխանություններն ինչպե՞ս են պատրաստվել հավանական պատերազմին:

Կարծում ենք, որ այլ երկրներից ու միջազգային կազմակերպություններից ստացված օժանդակությունները կարող էին օգտագործվել միայն սոցիալական, տնտեսական ու քաղաքական արդիականացման շրջանակներում և չէին կարող ուղղվել ռազմական արդյունաբերության զարգացմանը: Սակայն պետության ընդհանուր արդիականացումը շրջադարձային պետք է լիներ բարեկեցության ապահովման, տնտեսական ներուժի հզորացման ու հանրային կառավարման արդյունավետության բարձրացման առումով, որի արդյունքում հնարավոր կլիներ ներքին ռեսուրսների կենտրոնացման միջոցով ձևավորել ռազմական արդյունաբերություն, կամ էլ՝ դրա անհնարինության դեպքում, ստեղծել տնտեսական, սոցիալական ու մարդկային կապիտալի բարձր արժեք, որն ունակ կլիներ դիմագրավել հավանական պատերազմը: Այժմ 25-ամյա այդ շրջանը բաց է թողնված, տնտեսության ներկա կառուցվածքում բացակայում է ռազմական արդյունաբերությունը, գործող տնտեսական համակարգը չի կարող սպասարկել պատերազմական իրավիճակը, տնտեսության հիմնական բնութագրիչներից գյուղատնտեսությունը և հանքարդյունաբերությունը՝ որոնք ձևավորվում են ՀՀ տարածքներում, չեն նպաստել տարածքային համաչափ զարգացմանը, տարածքային տնտեսության վերաբերյալ չկա հայեցակարգային մոտեցում: Այսինքն ՀՀ-ում չի եղել պատերազմական իրավիճակին բնորոշ տնտեսական, սոցիալական և քաղաքական ոլորտների

համակարգային մոտեցում: Դրա արդյունքում ստեղծվել է այնպիսի իրավիճակ, որ այդ ոլորտների զարգացումն այժմ պայմանավորված է միմիայն պատերազմի արդյունքների հաղթահարմամբ: Արդեն ստիպված պետք է մշակել տնտեսական, սոցիալական ու քաղաքական համակարգերի արդիականացման այնպիսի հայեցակարգային ուղղություններ, որոնք մի կողմից կնպաստեն պատերազմի արդյունքների հաղթահարմանը, մյուս կողմից կապահովեն ազգային ու պետական անվտանգություն՝ հաջորդ հավանական պատերազմներին դիմագրավելու համար:

Այս համատեքստում հետաքրքիր է դիտարկել միջազգային հետազոտությունների շրջանակում Հայաստանի և Ադրբեջանի վերաբերյալ տնտեսական, սոցիալական ու քաղաքական մի շարք ցուցանիշների հրապարակումը, որոնք բնութագրում են պետության փխրունությունը-ամրությունը պատերազմական իրավիճակում: Այս ուսումնասիրությունն արժեքավոր կարող է լինել հետագա ռազմավարության մշակման տեսանկյունից, քանի որ ՀՀ հանրային ու պետական շրջանակներում մշտապես առաջնահերթություն է դիտարկվել ժողովրդավարական իրավիճակը, որից էլ ածանցվել են տնտեսական և այլ ցուցանիշներ: Սակայն Ղարաբաղյան պատերազմը ցույց տվեց, որ եթե ժողովրդավարական առաջընթացը չի փոխակերպվում տնտեսական կամ ռազմաղիվանագիտական ցուցանիշի, ապա պետական կառավարման համակարգը խնդիրներ է ունենում պատերազմին դիմագրավելու հարցում:

Աղյուսակ 1.

Պետության փխրունության ցուցանիշը և մատրիցան 2016թ. դրությամբ[14*]

	Փխրունության ցուցանիշ	Արդյունավետություն	Օրինականություն	Անվտանգության արդյունավետություն	Անվտանգության օրինականություն	Ձիված ընդհարումների ցուցանիշ	Քաղաքական արդյունավետություն	Քաղաքական օրինականություն	Կառավարման ռեժիմի տիպ	Տնտեսական արդյունավետություն	Տնտեսական օրինականություն	Նավթի արդյունահանում կամ սպառում	Սոցիալական արդյունավետություն	Սոցիալական օրինականություն	Տարածաշրջանային ազդեցություն
Կոնգոյի Ժող. Հանր.	23	13	10	X	X	Պատ.	X	X	ժող	X	X		X	X	Աֆր.
Ադրբեջան	10	3	7	X	X	□	X	X	ԱՎՏ	X	X	28	X	X	Իսլ.
Հայաստան	6	2	4	X	X	□	X	X	ժող	X	X		X	X	
Մեծ Բրիտանիա	0	0	0	X	X	□	X	X	ԺՈՂ	X	X	+	X	X	

Պետության փխրունության ցուցանիշը հաշվարկվել է 167 երկրների համար: Այն կարող է ընդունել 0-25 միավոր՝ որքան ցուցանիշը մոտ է 0-ին, այնքան պետությունն ամուր է իր գործառույթներն իրացնելու տեսանկյունից: Եվ հակառակը՝ որքան մոտ է 25-ին, այնքան պետությունը դիտարկվում է որպես «փխրուն» և ինստիտուցիոնալ առումով ոչ կայուն: Արդյունավետության և օրինականության ինդեքսներից յուրաքանչյուրը կարող է գնահատվել 0-3 միավորով, միայն «տնտեսական արդյունավետության» ցուցանիշը կարող է ունենալ առավելագույնը 4 միավոր: Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, որպես բնութագրիչներ են ներկայացված «նավթի արդյունահանման կամ սպառման ցուցանիշները», ինչպես նաև «տարածաշրջանային ազդեցության» շրջանակում մուսուլման և աֆրիկացի ժողովուրդների գերակայությունը: Այդ գործոնները գնահատման տեսանկյունից չնայած լրացուցիչ միավորներ չեն տալիս երկրներին, սակայն ազդեցություն են ունենում աղյուսակի մեջ ներառված առանձին

[14] Monty G. Marshall, Gabrielle Elzinga-Marshall, "Global Report 2017, Conflict, Governance and State Fragility"Center for Systemic Peace, pp.44-51

[*] Աղյուսակում նշված գույները մեկնաբանվում են հետևյալ կերպ. Սև - ծայրահեղ փխրունություն՝ 4 միավոր (վերաբերում է միայն տնտեսական արդյունավետության ցուցանիշին), Կարմիր – բարձր փխրունություն՝ 3 միավոր, Մանուշակագույն – չափավոր փխրունություն՝ 2 միավոր, Դեղին – ցածր փխրունություն՝ 1 միավոր, Կանաչ – փխրունություն չկա՝ 0 միավոր

ցուցանիշների հաշվարկման համար: «Պատ» և «□» նշումները ցույց են տալիս երկրների մասնակցությունը զինված հակամարտություններին: Մասնավորապես՝ «Պատ» նշումը ցույց է տալիս վերջին 5 տարվա ընթացքում պետության անմիջական մասնակցությունը պատերազմական գործողություններին: Իսկ «□» նշումի առկայության դեպքում՝ որն առկա է ինչպես Հայաստանի, այնպես էլ Ադրբեջանի և Մեծ Բրիտանիայի պարագայում, նշանակում է պետության անմիջական մասնակցություն պատերազմական գործողություններին վերջին երկու տասնամյակներում[15]: «ԺՈՂ», «ժող», «ԱՎՏ» և «ավտ» նշումները համապատասխանաբար նշանակում են տվյալ երկրներում ուժեղ և թույլ ժողովրդավարական, ինչպես նաև ուժեղ և թույլ բռնատիրական (ավտորիտար) կառավարման համակարգեր:

Պետության փխրունության ինդեքսը հավաքում է միավորներ 8 ցուցանիշների գծով և դասակարգվում 0-ից՝ «փխրունություն չկա», մինչև 25՝ «ծայրահեղ փխրունություն»:

Որևէ երկրի փխրունությունը սերտորեն առնչվում է պետության կարողությանը, որը վերաբերում է հակամարտությունների կառավարմանը, հանրային քաղաքականության իրականացմանը, հիմնական ծառայությունների մատուցմանը, համակարգի ճկունությանն ու պահպանմանը, կյանքի որակին, մարտահրավերներին ու ճգնաժամերին արդյունավետ արձագանքնմանը և կայուն զարգացման ապահովմանը: Պետք է նշել, որ այս ցուցանիշների ապահովման առումով խնդիրներ առաջացան ՀՀ-ում՝ Ղարաբաղյան պատերազմի ժամանակ, քանի որ ակնհայտ էր, որ չապահովվեց, մասնավորապես, հակամարտության արդյունավետ կառավարում, համակարգի ճկունություն, կամ ճգնաժամային իրավիճակների արագ արձագանքում:

Աղյուսակ 1-ում ներկայացված փխրունության ցուցանիշը վերոնշյալ հետազոտության շրջանակներում հաշվարկվել է հետևյալ կերպ.

Պետության փխրունության ցուցանիշ = (1)Արդյունավետության միավոր + (2)Օրինականության միավոր (առավելագույնը 25 միավոր)

որտեղ՝

[15] Center for Systemic Peace (https://www.systemicpeace.org/) կազմակերպության կողմից իրականացված հետազոտության մեջ որպես այդ ժամանակաշրջան, դիտարկվել է 1992-2011թթ ժամանակահատվածը: Հայաստանը և Ադրբեջանը ներկայացվել է Ղարաբաղյան հակամարտության ուղղակի մասնակցության տեսանկյունից, իսկ Մեծ Բրիտանյան՝ Իրաքի դեմ իրականացված ռազմական գործողությունների առումով:

(1) *Արդյունավետության միավորը = Անվտանգության արդյունավետություն + Քաղաքական արդյունավետություն + Տնտեսական արդյունավետություն + Սոցիալական անվտանգություն (առավելագույնը 13 միավոր)*

(2) *Օրինականության միավորը = Անվտանգության օրինականություն + Քաղաքական օրինականություն + Տնտեսական օրինականություն + Սոցիալական օրինականություն (առավելագույնը 12 միավոր)*

Արդյունավետության և օրինականության միավորների հաշվարկման հիմքում ընկած են սոցիալ-տնտեսական մի շարք ցուցանիշներ:

Աղյուսակ 1-ում Կոնգոյի Ժողովրդական Հանրապետության և Մեծ Բրիտանիայի ցուցանիշները ներկայացված են որպես այդ շարքում «ամենափխրուն» և «ամենաամուր» երկրներ: Հայաստանը և Ադրբեջանը զբաղեցնում են միջին դիրքեր, սակայն Հայաստանը ինստիտուցիոնալ և ժողովրդավարական կառավարման տեսանկյունից գնահատվել է ավելի արդյունավետ ցուցանիշներով: Համաձայն աղյուսակ 1-ի՝ «փխրունության» տեսանկյունից ՀՀ ամենաանբարենպաստ ցուցանիշները վերաբերում են տնտեսության արդյունավետության և օրինականության ոլորտներին, որը համապատասխանում է սույն աշխատանքի նախորդ դրույթներում ներկայացված հետազոտության արդյունքներին: Բացի այդ, 2016թ-ի դրությամբ Հայաստանի համար գնահատվել է կառավարման ժողովրդավարական համակարգ, միևնույն ժամանակ տնտեսական արդյունավետության ու օրինականության ցածր ցուցանիշ (տես աղյուսակ 1):

Տնտեսության կառուցվածքային փոփոխության անհրաժեշտությունը հետպատերազմական ժամանակաշրջանում կարող ենք քննարկել նաև ըստ մարզերի: Այս դեպքում պետք է հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

1. ՀՀ տնտեսական նոր արժեքի հսկայական մասը ձևավորվում է Երևանում, որին մասնակցում է հանրապետության բնակչության ավելի քան 35%-ը[16]:

[16] Խաչիկյան Ս.Վ., «Տեղական ինքնակառավարման հիմնախնդիրները Երևանի տնտեսական զարգացման համատեքստում», Հայկական տնտեսագիտական հանդես N1 2020թ, էջ 98

2. Երևանի կառավարման ֆինանսական բեռը կենտրոնացած է ՀՀ պետական բյուջեի վրա և Երևանը, որպես տեղական ինքնակառավարման տնտեսական միավոր գրեթե որևէ նոր արժեք չի ստեղծում[17]:
3. Տարածքային համաչափ զարգացման քաղաքականությունը տապալված է և աղքատության մակարդակը մարզերում Երևանի համեմատ մնում է բարձր:

Մասնավորապես՝ 2019թ-ի մի շարք ցուցանիշների գծով ՀՀ տնտեսության մեջ առկա են հետևյալ կառուցվածքային առանձնահատկությունները

Աղյուսակ 2.

Երևան քաղաքի տնտեսական մի շարք ցուցանիշներ 2019թ-ին[18] (տոկոս)

	Համախառն ներքին արդյունք	Արդյունա-բերություն	Շինարարություն	Մանրածախ առևտուր	Ծառայություններ
Հայաստանի Հանրապետություն	100	100	100	100	100
Երևան	54.1[19]	37.7	55.3	73.3	83.4

Ինչպես երևում է աղյուսակ 2-ի տվյալներից, ՀՀ ՀՆԱ-ի հիմնական մասը ստեղծվում է մայրաքաղաք Երևանում: Մտահոգիչ է այն փաստը, որ հանրապետությունում մատուցվող ծառայությունների ընդամենը մոտ 15%-ը, իսկ մանրածախ առևտրի մոտ 25%-ն է մատուցվում բոլոր 10 մարզերում, իսկ դրանց համապատասխանաբար 85%-ը և 75%-ը մատուցվում է Երևանում: Այսպիսի անհավասարության դեպքում պետք է մտածել տնտեսության կառուցվածքային այնպիսի փոփոխության մասին, որ հնարավորինս նվազեցվի Երևանի տեղական ինքնակառավարման ֆինանսական բեռը ՀՀ պետական բյուջեի վրա: Ակնհայտ է, որ մարզերի սոցիալական վիճակը բնութագրող այսպիսի ցուցանիշներն իրենց հերթին ապահովվում են տնտեսության մյուս գերակա ճյուղից՝ գյուղատնտեսությունից: Այսինքն գյուղատնտեսությունը, որը ՀՆԱ-ի կառուցվածքի մեջ ունի համեմատաբար ամենամեծ տեսակարար կշիռ (վերջին տարիներին դրա մասնաբաժինը ՀՆԱ-ում տատանվել է 11.7-17.6 տոկոսային միջակայքում[20]), հիմնականում կարողանում է սպասարկել ընդամենը մարզերի բնակչության առևտրի, ծառայությունների և նմանատիպ այլ կարիքների համար՝ այն էլ Երևանի

[17] Տես՝ նույն հետազոտությունը:
[18] Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանը թվերով, ՀՀ ՎԿ 2020, էջեր 25, 26, 33, 42, 43
[19] Ներկայացված է 2018թ-ի ցուցանիշը, քանի որ 2019թ-ի պաշտոնական ցուցանիշը բացակայում է: Ոչ պաշտոնական տեղեկատվությամբ այն մոտավորապես համապատասխանում է 2018-ի ցուցանիշին:
[20] https://www.armstat.am/am/?nid=202

համեմատ բավականին փոքր ցուցանիշներով: Այս դեպքում ավելորդ է դիտարկել ռազմական արդյունաբերությունը, կամ էլ այնպիսի տնտեսությունը, որը կարող է հավելյալ ՀՆԱ-ի հաշվին ձեռք բերել պետության անվտանգության համակարգեր և ռազմական տեխնիկա:

Տնտեսության կառուցվածքի տեսանկյունից մարզերի կամ տարածքային տնտեսության որևէ կիրառական մոտեցում Հայաստանում գոյություն չունի, բացի մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերից, որոնք մշակվում են մարզպետարանների կողմից: Հետևաբար տնտեսության կառուցվածքային փոփոխությունների համատեքստում անհրաժեշտ է դիտարկել նաև այդ գործոնը՝ հատկապես ՀՀ տնտեսության մեջ գյուղատնտեսության գերակա դերի պարագայում: Պետք է նշել, որ տարածքային տնտեսության հետ կապված կառուցվածքային փոփոխություններն անհրաժեշտ է քննարկել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համատեքստում:

Կատարված ուսումնասիրությունները և վերլուծությունները ցույց են տալիս, որ հետխորհրդային ամբողջ ժամանակաշրջանում ՀՀ տնտեսությունը մեծ կախվածություն է ունեցել՝ և շարունակում է ունենալ, ներմուծումից: Ինչպես նշում են հետազոտողները, տնտեսության կախվածությունը միջազգային օգնություններից ու տրանսֆերտներից բավականին մեծ է, տեխնոլոգիաները և աշխատուժը հիմնականում բարձրակարգ չեն, տնտեսության կառուցվածքում մեծ դեր ունեն գյուղատնտեսությունը, հանքարդյունաբերությունը, առևտուրը և դրանց հետ փոխկապված վերամշակման ճյուղերը: Հետևաբար տնտեսության կառուցվածքային հետպատերազմական փոփոխությունների համատեքստում պետք է հաշվի առնվեն այս գործոնները:

Կարևոր է նշել, որ հետխորհրդային ժամանակաշրջանը համընկնում է Ղարաբաղյան հակամարտության հետ և ըստ էության դժվար է գնահատել, թե տնտեսության ներկա անարդյունավետ վիճակի հիմնական պատճառը կառուցվածքային փոփոխությունների բացակայությունն էր, թե Ղարաբաղյան հիմնախնդրով պայմանավորված զարգացումները: Ակնհայտ է, որ ՀՀ-ում չի իրականացվել տարածքային համաչափ զարգացման քաղաքականությանը նպաստող գործողություններ, մարզերը գոյատևում են գյուղատնտեսության հաշվին՝ ՀՆԱ-ում էական է գյուղատնտեսության դերը, միջազգային ծրագրերն ու ֆինանսական աջակցության միջոցներն արդյունավետ չեն եղել առնվազն տնտեսական ոլորտում: Կարևոր է նշել, որ բոլոր ոլորտներում եղել են զարգացման ծրագրեր: Սակայն ծրագրերի մշակման

տրամաբանությունը և դրանով պայմանավորված արդյունավետությունը ոչ միայն Հայաստանում, այլ նաև ուրիշ երկրներում, երբեմն խնդրահարույց են, որն արձանագրել են Համաշխարհային Բանկի փորձագետները: Նրանց կողմից կազմված զեկույցներում նշվում է, որ տարբեր զարգացող երկրներում օժանդակության արդյունավետության հանդեպ աճող հիասթափությունը հանգեցնում է զարգացման նախագծերի առավել խիստ գնահատմանը[21]: Եթե դիտարկենք համեմատության մեջ, ապա կարելի է փաստել, որ չնայած «Մարշալի պլանը»՝ որպես տնտեսության վերականգնման և կառուցվածքային փոփոխությունների աջակցության ծրագիր, արդյունավետ էր Գերմանիայի և Արևմտյան Եվրոպայի երկրների համար, ապա Համաշխարհային Բանկի շատ ծրագրեր անարդյունավետ էին բազմաթիվ երկրների համար: Նմանատիպ աջակցության ծրագրերը արդյունավետություն չեն ապահովել նաև Հայաստանում: Դրանք հիմնականում ուղղված են եղել ենթակառուցվածքների բարելավմանը, տարածքային զարգացմանն ու սոցիալական ոլորտի բարեփոխումներին, սակայն այսօր ակնհայտ է, որ համակարգային զարգացում չի արձանագրվել կառավարման կամ սոցիալ-տնտեսական քաղաքականության գրեթե ոչ մի ուղղությունով: Կարծում ենք, որ այս տեսանկյունից կառավարման ժողովրդավարական համակարգի դերը նույնիսկ էական չէ, քանի որ աղյուսակ 1-ի տվյալների համաձայն, չնայած ժողովրդավարական համակարգեր են գործում ինչպես Հայաստանում, այնպես էլ Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետությունում, այնուամենայնիվ վերջինիս դեպքում տնտեսական արդյունավետության, օրինականության և այլ ցուցանիշներ գտնվում են բավականին վատ վիճակում: Ավելին, տնտեսական արդյունավետության տեսանկյունից դրանք վատ են նաև Ադրբեջանի ավտորիտար համակարգի պայմաններում գործող համանման ցուցանիշի հետ համեմատած:

Այսինքն պետք է հասկանալ, թե ինչու է կառավարման համակարգը Հայաստանում բնութագրվում ժողովրդավարական, սակայն տնտեսության հետ կապված ցուցանիշները դրսևորվում են անարդյունավետությամբ: Դա նշանակում է, որ կառավարման ժողովրդավարական սկզբունքները բավարար չեն տնտեսական արդյունավետության համար, քանի որ միջազգայնորեն ավտորիտար ճանաչված Ադրբեջանի կառավարման համակարգն

[21] Justin Yifu Lin, «New Structural Economics, A Framework of Rethinking Development», World Bank Policy Research Paper 5197, February 2010, p.11

ապահովում է տնտեսության ավելի մեծ արդյունավետություն, որը դրսևորվեց նաև պատերազմում:

Այսպիսով, Ղարաբաղյան պատերազմը ցույց տվեց, որ ՀՀ տնտեսության ներկա կառուցվածքը ոչ մի ձևով փոխկապված չէ պատերազմական իրավիճակի հետ: Այս տեսանկյունից կատարված հետազոտությունները բացահայտեցին հետևյալ առանձնահատկությունները:

- ՀՀ տնտեսության կառուցվածքային հիմնական ոլորտներից ոչ մեկը չեն սպասարկում պաշտպանական և անվտանգության համակարգերը: Այդ ոլորտներից ամենամեծ արդյունք ապահովող ուղղությունը՝ գյուղատնտեսությունը, հիմնականում սպասարկում է մարզերի բնակչության սոցիալ-տնտեսական ծախսերը, իսկ մյուս մասն ուղղվում է դեպի վերամշակող արդյունաբերություն:
- Տարածքային համաչափ զարգացման քաղաքականությունը որևէ արդյունք չի տվել և Երևան քաղաքում ստեղծվում է ՀՆԱ-ի կեսից ավելին: Այսինքն Երևան քաղաքը համարվում է տնտեսության աշխարհագրական կառուցվածքի կարևոր տարր:
- Պետության կառավարման ձևը՝ ժողովրդավարական կամ ավտորիտար, գրեթե ազդեցություն չի ունենում տնտեսական արդյունավետության ցուցանիշի վրա: Նշանակում է, որ տնտեսության զարգացման համար ավելի կարևոր են նրա կառուցվածքային առանձնահատկությունները, քան թե պետության կառավարման համակարգի բնույթը: Դա արտահայտվեց մեր հանրապետության պարագայում, երբ առնվազն 2016թ-ից միջազգայնորեն ժողովրդավարական չափանիշներով բնութագրվող ՀՀ իշխանությունները չկարողացան ապահովել տնտեսության կենսունակ համակարգ և արդյունավետ կառուցվածք՝ ստեղծելով անբարենպաստ պայմաններ հավանական պատերազմի համար:

ՀՀ տնտեսության կառուցվածքում ստեղծված այս իրավիճակը հաղթահարու նպատակով անհրաժեշտ են համալիր գործողություններ, որոնք պետք է նպատակաուղղված լինեն փոխել ոչ միայն կառուցվածքային ուղղությունները, այլև ներդնել նոր մոտեցումներ, փոխկապվածություններ և համագործակցության ձևեր: Մասնավորապես, փորձելու ենք հիմնավորել, որ այս պայմաններում ՀՀ տնտեսության կառուցվածքային փոփոխությունները պետք է իրականացնել հետևյալ ուղղություններով:

- Ապահովել ՀՆԱ-ի աճի բարձր տեմպեր՝ տնտեսություն-գիտություն-բանակ մեդելի ներդրման միջոցով: Կարճաժամկետ, ինտենսիվ և տեխնոլոգիաների վրա հիմնված վերապատրաստման դասընթացների մշակումը և ներդրումը տնտեսության բոլոր ոլորտներում պետք է դառնա պետական քաղաքականության առանցքային ուղղություններից մեկը:
- Ներդնել տարածական զարգացման համակարգ, որը կփոխարինի տարածքային համաչափ զարգացման քաղաքականությանը: Այդ համակարգի գլխավոր առանձնահատկությունը տարածքային զարգացման նկատմամբ կլինի այն, որ ՀՀ տարածքային տնտեսությունը կդիտարկվի ոչ թե մարզերի, այլ առանձին կլաստերների մեջ մտնող տնտեսական գործոնների տեսանկյունից:
- Կատարել էական փոփոխություններ պետական կառավարման համակարգում՝ այն դարձնելով առավել ուղղձիգ և մեծացնելով պետության դերը: Այդ համակարգն օգտագործել սոցիալական և մարդկային կապիտալի հետևողական զարգացման նպատակով:

2. Պատերազմի սոցիալական ազդեցությունը և մարդկային կապիտալը

Գիտելիքի դերն ու նշանակությունն արդի տնտեսական, քաղաքական, սոցիալական և այլ ոլորտներում էական բարձրացել է: Բանակի արդիականացման ու պետության անվտանգության ապահովման տեսանկյունից գիտելիքի վրա հիմնված որոշումների կայացումն աստիճանաբար ձեռք է բերում առաջնահերթ կարևորություն: Դա ակնհայտ դրսևորվեց Ղարաբաղյան երկրորդ պատերազմի ընթացքում, երբ ոչ միայն զենքի, այլև մարտավարական գործողությունների, կազմակերպական աշխատանքների մակարդակում անհամեմատելի էր հակառակորդի առավելությունները: Այդ պատերազմում տեխնոլոգիաները՝ որտեղ գիտելիքի գործոնը հսկայական է, ունեցան վճռորոշ դեր:

Տեխնոլոգիաների դերը մեծ էր նաև ռազմաքաղաքական համատեքստում, քանի որ ՀՀ-ում այդ ոլորտին վերաբերող և պետական մակարդակով ընդունված փաստաթղթերը կյանքի չեն կոչվում, կամ էլ անտեսվում է կրթության և գիտելիքի գործոնը: Մասնավորապես, ՀՀ ՊՆ

ռազմավարական գործողությունների շրջանակում ներդրված է «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի 2018-2024 թվականների արդիականացման ծրագիրը», որտեղ նախատեսված է հետևյալ դրույթը: «...Զսպման համակարգի կարևորագույն բաղկացուցիչ է հանդիսանում ռազմաքաղաքական և դիվանագիտական մեթոդներով զսպումը, որը նախատեսում է ՀՀ արտաքին քաղաքական ջանքերի և հավաքական պաշտպանության գործուն մեխանիզմների համադրում: Այդ նպատակով նախատեսվում է զարգացնել դաշնակցային պարտավորությունների իրավապայմանագրային դաշտը, կատարելագործել համատեղ ուժերի և միջոցների մարտական կարողություններն ու կիրառման օպերատիվությունը: Զուգահեռաբար, քաղաքական փոխլրացնող ազդեցության լծակներ զարգացնելու նպատակով նախատեսվում է ակտիվացնել ռազմադիվանագիտական աշխատանքը միջազգային կազմակերպությունների և գործընկեր պետությունների հետ»[22]: Ինչպես երևում է, պետական կառավարման բարձրագույն մարմինների մակարդակով կարևորվում է ռազմադիվանագիտական աշխատանքը: Ընդ որում, նույն փաստաթղթի մեջ նշվում է, որ դա կարևորվում է տեխնոլոգիաների զարգացման արդի փուլում, երբ հակառակորդը նորագույն զինատեսակների ձեռքբերմամբ պատրաստվում է պատերազմի, իսկ մեր երկրի համար դրան դիմագրավելու կարևոր գործիքներից մեկը ռազմաքաղաքական և դիվանագիտական մեթոդներն են: Ռազմաքաղաքական և դիվանագիտական մեթոդներն իրենց մեջ ակնհայտորեն ներառում են կրթության, գիտության և տեխնոլոգիաների բաղադրիչներ:

Այս պարագայում անհրաժեշտ է պատրաստել ռազմադիվանագիտական աշխատանք կատարող մասնագետներ, ովքեր պետք է հմտացած լինեն ինչպես ռազմական գործի, այնպես էլ միջազգային հարաբերությունների և միջազգային իրավունքի մեջ: Իսկ այդպիսի մասնագիտություն ՀՀ բարձրագույն կրթական համակարգում չկա (տես՝ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը): ՀՀ երկու գերատեսչությունները՝ պաշտպանության նախարարությունը և կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, չեն մշակել համատեղ գործողությունների պլան, որը հնարավորություն կտա զինված ուժերի արդիականացման ծրագրի դրույթներին

[22]Տես՝ «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի 2018-2024 թվականների արդիականացման ծրագիր», հավելված 1 ՀՀ նախագահի 2018թ-ի փետրվարի 17-ի ՆՀ-103-Ա հրամանագրի, էջ 9

համապատասխան պատրաստել մասնագետներ բարձրագույն կրթության ոլորտում: Այսինքն փաստաթղթային ձևակերպումներով ապահովված է ռազմավարական հենք, ըստ որի պետք է հակառակորդի հնարավոր հարձակումներին դիմագրավել ռազմադիվանագիտական աշխատանքով, սակայն այդ նպատակին հասնելու համար չի իրականացվում մարտավարական գործողություններ կրթության և գիտության ոլորտում: Դա կարելի է բացատրել մի կողմից պատասխանատվության բացակայությամբ, մյուս կողմից համապատասխան պետական գերատեսչությունների ոչ ներդաշնակ գործունեությամբ:

Ակնհայտ է, որ թերագնահատվել է մարդկային և սոցիալական կապիտալի գործոնը պատերազմական իրավիճակին նախապատրաստվելու ընթացքում: Պետք է նշել որ այդ գործոնն էական չի եղել նաև տնտեսության ոլորտում: Այսպես, նախորդ ենթահարցում կատարված վերլուծությունը ցույց տվեց, որ մարդկային կապիտալի գործոնը գրեթե ոչ մի ազդեցություն չունի ՀՆԱ-ի ձևավորման վրա: Բոլոր այն ոլորտները, որոնք նշանակալի մասնակցություն են ունեցել ՀՆԱ-ի ստեղծմանը՝ գյուղատնտեսություն, հանքարդյունաբերություն, առևտուր, տրանսպորտ և այլն, այդ ցուցանիշներին չեն հասել մարդկային կապիտալի զարգացմամբ: Ավելին, աղյուսակ 3-ում նշված մասնագիտությունների մեջ այդ ոլորտներին վերաբերող բարձրագույն կրթության նկատմամբ պահանջարկը տարիներ շարունակ եղել է ցածր[23]: Օրինակ, գյուղատնտեսության ոլորտի համեմատաբար բարձր ցուցանիշների մեջ անորոշ է աղյուսակ 3-ում ներկայացված՝ «Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնային տնտեսություն և անասնաբուժություն» մասնագիտության որակավորումների բավականին լայն շրջանակ ունեցող մասնագետների դերը: Այդպիսի իրավիճակ է նաև «Լեռնային գործ» կամ «Երկրաբանություն» մասնագիտությունների գծով, որոնք ոչ մի դերակատարում չունեն հանքարդյունաբերության բարձր ցուցանիշի արձանագրման մեջ: Առևտուրը ևս ունի մեծ տեսակարար կշիռ ՀՆԱ-ի ձևավորման մեջ, սակայն պետք է նշել, որ դարձյալ առանց բարձրագույն կրթության մասնագիտությունների դերակատարման: Այսինքն այդ ոլորտներում համախառն ավելացված արժեքը ապահովվել են առանց մարդկային կապիտալի գործոնի: Դրանք ստեղծվել են հիմնականում բնական ռեսուրսների, արտերկրից ստացվող տրանսֆերտների և սպառողական

[23] «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի ամենամյա հաշվետվությունների մեջ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, Երևանի պետական համալսարանի և Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի համապատասխան մասնագիտությունների գծով մշտապես առկա են թափուր տեղեր:

հասարակության ձևավորման արդյունքում: Դա նշանակում է, որ տնտեսության ներկա կառուցվածքը ոչ մի ձևով փոխկապված չէ կրթական և գիտական ոլորտների հետ: Այդ դեպքում հնարավոր չէ ապահովել տնտեսություն-գիտություն-բանակ կապը, հետևաբար տնտեսության ներկա կառուցվածքով անհնար է ստեղծել ռազմական արդյունաբերություն: Ավելին, տնտեսության ներկա կառուցվածքը, որտեղ գերակայում են արտերկրից ստացվող տրանսֆերտները և հասարակության սպառողական վարքագիծը, խնդիրներ կստեղծի նաև պաշտպանական ու անվտանգային համակարգերի ստեղծման ու արդյունավետ կառավարման տեսանկյունից, քանի որ երաշխավորված չէ տնտեսության կայուն և երկարատև աճի հիմքը:

Ստորև ներկայացվում է ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում առկա մասնագիտությունների ցանկը, որոնց շրջանակում իրականացվում է մարդկային կապիտալի ձևավորում: Փորձելու է արվելու ուսումնասիրության միջոցով հասկանալ, թե այդ մասնագիտությունները որքանով կարող են ուղիղ կապվածություն ունենալ ռազմական արդյունաբերության հետ, կամ էլ նպաստել ՀՆԱ-ի ձևավորման վրա, որը, վերջին հաշվով, կապահովի պաշտպանական և անվտանգային համակարգերի գործունեությունը:

Ինչպես երևում է աղյուսակ 3-ից, ՀՀ բարձրագույն կրթության համակարգում մասնագիտությունների և դրանց շրջանակում ստացված որակավորումների մեծամասնությունն ունեն հումանիտար ուղղվածություն: Բացի այդ, ուսումնասիրելով «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի ամենամյա հաշվետվությունները բուհերի ընդունելության մրցույթների վերաբերյալ, կարող ենք փաստել, որ ոչ հումանիտար բնույթի բազմաթիվ մասնագիտություններ՝ որոնք ներկայացված են աղյուսակ 4-ի մեջ, վերջին տասնամյակում մշտապես ունեցել են թափուր տեղեր և դրանց մի մասն ընդհանրապես չի կայացել՝ շարունակելով մնալ որպես լիցենզավորված մասնագիտություն:

Աղյուսակ 3.

ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի մասնագիտությունները[24]

Հ/Հ	Մասնագիտություն	Մասնագիտական ուղղությունների քանակ	Որակավորման նկարագրություն[25]
1.	Կրթություն	6	կրթություն, մանկավարժություն
2.	Հումանիտար գիտություններ և արվեստ	24	արվեստ, կրոն, պատմություն, փիլիսոփայություն, արևելագիտություն, բանասիրություն
3.	Սոցիալական գիտություններ, լրագրություն և տեղեկատվական գիտություններ	12	տնտեսագիտություն, քաղաքագիտություն, հոգեբանություն, սոցիոլոգիա, միջազգային հարաբերություններ, լրագրություն,
4.	Գործարարություն, վարչարարություն և իրավունք	8	կառավարում, իրավագիտություն
5.	Բնական գիտություններ, մաթեմատիկա և վիճակագրություն	15	շրջակա միջավայր, քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն, աշխարհագրություն, մեխանիկա
6.	Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ	6	ինֆորմատիկա, տեղեկատվական անվտանգություն
7.	Ճարտարագիտություն, արդյունաբերություն և շինարարություն	28	քիմիական տեխնոլոգիա, էներգետիկա, էլեկտրոնիկա, մետալուրգիա, մեքենաշինություն, ավիացիոն և հրթիռային տեխնիկա, զենիթահրթիռային համալիրներ, նյութագիտություն, մեխատրոնիկա, պարենամթերքի տեխնոլոգիա, տեքստիլ, լեռնային գործ, քաղաքային տնտեսություն, շինարարություն
8.	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնային տնտեսություն և անասնաբուժություն	5	Ագրոնոմիա, անասնաբուծություն, անտառային տնտեսություն, ձկնային տնտեսություն
9.	Առողջապահություն և սոցիական աշխատանք	6	բժիշկ, ֆարմացիա, ստոմատոլոգիա, հանրային առողջապահություն, սոցիական աշխատանք
10	Ծառայություններ	8	սպորտ, զբոսաշրջություն, սերվիս, ստորաբաժանումների կառավարում, անվտանգություն, ոստիկանություն, օդաչու
	Ընդամենը	**118**	

Համաձայն աղյուսակ 4-ի՝ թափուր տեղեր և չկայացած մասնագիտություններ կան նաև այն ոլորտներում, որոնք ապահովում են ՀՆԱ-ի գերակշիռ մասը՝ գյուղատնտեսություն, վերամշակող արդյունաբերություն, հանքարդյունաբերություն և այլն: Ավելին, դրանք կան նաև այնպիսի ոլորտներում, որոնք ուղղակիորեն կապված են պետության անվտանգության և ռազմական գործի

[24] Տես՝ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, 23 հոկտեմբերի 2014թ. N1191-Ն

[25] Ներկայացված են ընդհանուր նկարագրություններ, իսկ մանրամասն նկարագրությունները ներկայացվել են հետազոտության վերլուծության մեջ՝ ըստ անհրաժեշտության:

հետ: Մասնավորապես, «ռադիոտեխնիկա և կապ», «էլեկտրատեխնիկա», «մեքենաշինություն և նյութերի մշակում», «մեքենագիտություն» և այլ մասնագիտությունների գծով տարիներ շարունակ թափուր են մնում բարձրագույն կրթական հաստատությունների համար նախատեսված տեղերը: Շատ հաճախ այդ մասնագիտություններն ընդհանրապես չեն կայանում: Այս համատեքստում պետք է նշել, որ «ռադիոէլեկտրոնային և օդային հետախուզության կարողությունների ստեղծումը, ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցառումները և ռազմական տեխնիկայի վերազինումը»՝ որոնք ուղղակիորեն առնչվում են վերոնշյալ մասնագիտություններին, համարվում են ՀՀ զինված ուժերի արդիականացման ծրագրի բաղկացուցիչ մաս: Կարելի է արձանագրել, որ մարդկային կապիտալի ստեղծումը ՀՀ բարձրագույն կրթական համակարգի վերոնշյալ մասնագիտությունների գծով բավականին թերի է:

Աղյուսակ 4.

Բուհերի ընդունելության մրցույթներով հիմնականում թափուր մնացող, չկայացող կամ հանրային հետաքրքրություն չներկայացնող մասնագիտություններ[26]

Հ/Հ	Ոլորտը	Մասնագիտություն
1.	Բնական գիտություններ, մաթեմատիկա և վիճակագրություն	կենսաբանություն, կենսաքիմիա, կենսաֆիզիկա, քիմիա, երկրաբանություն, աշխարհագրություն, ֆիզիկա, աստղագիտություն, մաթեմատիկա, մեխանիկա,
2.	Ճարտարագիտություն, արդյունաբերություն և շինարարություն	քիմիական տեխնոլոգիա, կենսագործունեության անվտանգություն, ավտոմատացում, ***ռադիոտեխնիկա և կապ***, էներգետիկա, ***էլեկտրատեխնիկա***, մետալուրգիա, մեքենաշինություն և նյութերի մշակում, ***մեքենագիտություն***, էներգետիկական մեքենաշինություն, տրանսպորտային մեքենաշինություն, սարքաշինություն և չափագիտություն, գյուղատնտեսության արտադրության մեքենայացում, ***ավիացիոն և հրթիռային տեխնիկա***, ***զենիթահրթիռային համալիրներ***, նյութագիտություն և նոր նյութերի տեխնոլոգիա, պարենամթերքի տեխնոլոգիա, ***քաղաքային տնտեսություն***
3.	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնային տնտեսություն և անասնաբուժություն	ագրոնոմիա, անասնաբուծություն, անտառային տնտեսություն, ձկնային տնտեսություն

Աղյուսակ 4-ում ներկայացված մի շարք մասնագիտությունների գծով, մասնավորապես՝ «Ավիացիոն և հրթիռային տեխնիկա», «Զենիթահրթիռային համալիրներ» և այլն, դիմորդների կամ

[26] Աղյուսակը կազմվել է, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N1191-Ն որոշումը և «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի հաշվետվությունները: Հանրային հետաքրքրության տեսանկյունից դիտարկվել են այն մասնագիտությունները, որոնք դպրոցների բարձր դասարանցիների կամ դիմորդների շրջանում հնարավորինս լայն ձևով չեն լուսաբանվում և խրախուսվում:

ծնողների հետաքրքրվածությունը չի խրախուսվում (այս մասնագիտությունների համար դիմորդներից պահանջվում է նաև ծնողների համաձայնությունը), դրանց անհրաժեշտության հետ կապված հանրայնացման բավարար աշխատանքներ չեն կատարվում: Այդ մասնագիտությունները մասնագետների պատրաստման միջոցով «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի 2018-2024 թվականների արդիականացման ծրագրի» շրջանակներում կարող են դառնալ պատերազմի սպասարկման կարևոր գործիք: Այս ոլորտում նույնպես մարդկային կապիտալի զարգացման հետևողական աշխատանք չի իրականացվում:

Աղյուսակ 3-ի և 4-ի կարևոր բացահայտումներից է այն, որ չնայած Հայաստանում մեծ զարգացում ունեն ջերմոցային տնտեսությունները՝ որոնց աջակցության ծրագրերից է ՀՀ կառավարության հաստատած որոշումը «Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին»[27], սակայն գյուղատնտեսության ոլորտի բարձրագույն կրթական ծրագրերով դրա զարգացմանն ուղղված մասնագիտություն նախատեսված չէ: Հատկանշական է, որ ՀՀ կառավարության վերոնշյալ որոշումն ընդունվել է ագրարային ոլորտի պետական քաղաքականության և պարենային ապահովվածության շրջանակներում, ըստ էության իր արացոլումը չգտնելով նույն ոլորտում կրթության ներդրման կամ մարդկային կապիտալի զարգացման մեջ: Այս հանգամանքը նույնպես ցույց է տալիս պետական քաղաքականության և բարձրագույն կրթական ծրագրերի անարդյունավետ փոխկապվածության մասին՝ տնտեսական քաղաքականության ոլորտում: Ընդ որում, այս երևույթն նորից արձանագրվում է պետության տնտեսական համակարգի կարևոր ոլորտներից մեկում՝ գյուղատնտեսությունում:

Աղյուսակներ 3-ի և 4-ի տվյալները, նախորդ ենթահարցում ուսումնասիրված տնտեսության կառուցվածքային առանձնահատկությունները, ինչպես նաև զինված ուժերի արդիականացման ծրագրի դրույթների համադրումը ցույց է տալիս, որ կրթության, տնտեսության և պատերազմական իրավիճակների միջև փոխգործակցությունը բավականին թույլ հիմքերի վրա է: Այսպես.

- Բարձրագույն կրթական մասնագիտությունների մեծ մասը հումանիտար են, որոնց շրջանակներում պատրաստված մասնագետները տնտեսության ներկա կառուցվածքային

[27] Տես՝ ՀՀ կառավարության որոշումը «Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» 14 նոյեմբերի 2019 թվականի N 1612-Լ:

առանձնահատկությունների պայմաններում գրեթե չեն մասնակցում ՀՆԱ-ի արտադրությանը:

- Ոչ հումանիտար մասնագիտությունների մեջ տարիներ շարունակ թափուր են մնում, կամ չեն կայանում այն մասնագիտությունները, որոնք փոխկապված են տնտեսության գործող կառուցվածքով առաջատար համարվող ոլորտների հետ (գյուղատնտեսություն, հանքարդյունաբերություն, վերամշակող արդյունաբերություն և այլն): Այսինքն պատերազմական իրավիճակում ոչ հումանիտար մասնագիտությունների նույնիսկ փոքր տեսակարար կշռի պայմաններում՝ որն անբնական երևույթ է, այնուամենայնիվ այդ փոքրաթիվ մասնագիտություններն ունեն կայացման հետ կապված խնդիրներ:
- Զինված ուժերի արդիականացման ծրագրի դրույթներով նախատեսված մի շարք գործողություններ՝ մասնավորապես ռազմադիվանագիտական աշխատանքների իրականացումը, ռազմարդյունաբերական համալիրի ստեղծումը, տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների գծով ղեկավարների ինստիտուտի ներդրումը, չեն ապահովվում ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների շրջանակում:

Այս իրավիճակում ակնհայտ է, որ մարդկային կապիտալի զարգացումը ՀՀ-ում և դրա կապը տնտեսության կամ պատերազմական իրավիճակների հետ, հատկապես ռազմարդյունաբերության տեսանկյունից, որևէ փոխկապվածություն չունի: Դա վտանգավոր է ոչ միայն տնտեսության, այլև պետության անվտանգության տեսանկյունից: Ակնհայտ է, որ մեր հանրապետության կրթության, տնտեսության և անվտանգության համակարգերի փոխկապվածության համատեքստում առկա է լրջագույն խնդիր: Ավելին, մարդկային կապիտալի զարգացման գործընթացները ոչ միայն չեն խրախուսվում, այլև դրանք չեն կապակցվում տնտեսության և պատերազմական իրավիճակների հետ: Սակայն մարդկային կապիտալի զարգացման և դրա կիրառական նշանակության վերաբերյալ հետազոտությունները նույնպես ունեն բազմաթիվ առանձնահատկություններ:

Մարդկային կապիտալի ոլորտին վերաբերող հետազոտություններում հաճախ շեշտադրում է կատարվում այն փաստին, որ այդ կապիտալի վրա կատարվող ներդրումները անհամաչափ ազդեցություն են ունենում մրցակցության և աճի վրա, բացի այդ, դրա դրական

ազդեցությունը տարբեր երկրներում կամ տարածաշրջաններում տարբեր է[28]: Դա նշանակում է, որ չնայած մարդկային կապիտալը կարող է զարգանալ, բայց, ցանկալի ազդեցություն չունենալ՝ կախված տվյալ երկրի տնտեսության կառուցվածքից, քաղաքական իրավիճակից կամ տարածաշրջանային առանձնահատկություններից: Դա կհանգեցնի մարդկային կապիտալի արտահոսքի, որի ականատեսը եղել ենք Հայաստանում երկար տարիներ: Այսինքն խնդիրը ոչ միայն մարդկային կապիտալի զարգացման, այլև նրա դրսևորման համար պայմանների ստեղծման մեջ է: Ինչպես ցույց է տալիս վերոնշյալ պնդումը (Jan Čadil), տարածաշրջանային գործոնը նույնպես ունի ազդեցություն, որը կարծում ենք բնորոշ է նաև մեր հանրապետությանը: Տարածաշրջանային գործոնի կարևոր առանձնահատկություններից մեկը մարդկային կապիտալի զարգացման ոլորտում կապակցությունների, համագործակցության և գործընկերության ստեղծումն է, որը խնդրահարույց է Հարավային Կովկասի տարածաշրջանում, մի շարք հակամարտությունների առկայության պատճառով:

Տնտեսագիտության և խաղաղության ինստիտուտի (Institute for Economics and Peace[29]) հետազոտություններից մեկում ուշադրության է արժանացել հետևյալ դրույթը: «Պետության անվտանգությունը կախված է ոչ միայն համապատասխան ռազմական կարողություններից, այլև տնտեսական կայունությունից: Տնտեսական պայմանները մեծ չափով փոխկապված են խաղաղության միջավայր ապահովող ինստիտուտների հետ: Այդ պատճառով պատերազմի տնտեսական հետևանքները պետք է քննարկել՝ հաշվի առնելով հասարակության տնտեսական հիմքերը»[30]:

Վերոնշյալ պնդումը ևս հաստատում է մեր կողմից իրականացված վերլուծությունները, որոնց համատեքստում կարող ենք եզրակացնել.

- ՀՀ տնտեսական կայունություն ապահովող ոլորտները՝ գյուղատնտեսություն, հանքարդյունաբերություն, առևտուր, վերամշակող արդյունաբերություն և այլն փոխկապված չեն խաղաղություն ապահովող ինստիտուտների[31] հետ:

---

[28]Տես՝ Jan Čadil et al, «Human Capital, Economic Structure and Growth», Procedia Economics and Finance 12 (2014) p.86

[29]Տես՝ https://www.economicsandpeace.org/ կազմակերպությունն իրականացնում է հետազոտություններ տնտեսության և խաղաղության ապահովման ոլորտներում:

[30] Տես՝ Economic Consequences of War on the U.S. Economy, Institute for Economics & Peace 2011. P.6

[31] Որպես խաղաղություն ապահովող ինստիտուտներ, մեր կողմից դիտարկվել են ՀՀ պաշտպանություն նախարարությունը և բարձրագույն կրթական հաստատությունները:

- Մարդկային կապիտալի դերը բավականին փոքր է տնտեսական հիմքերի ապահովման և տնտեսական արդյունքի ստեղծման տեսանկյունից, որը դրսևորվում է բարձրագույն մասնագիտական կրթության որակավորումների շրջանակում կայացող մրցույթների, և տնտեսության առաջատար համարվող ճյուղերի միջև կապի բացակայությամբ: Այդ պայմաններում չի կարող լինել տնտեսություն-գիտություն-բանակ գործուն համակարգ:
- Մարդկային կապիտալի դերը անհրաժեշտ չափով շեշտված է զինված ուժերի արդիականացման ծրագրով, սակայն այդ ուղղությամբ իրականացվող գործողությունները տեսանելի չեն բարձրագույն կրթության մասնագիտությունների որակավորումների, կամ այդ շրջանակում իրականացվող մրցույթների տեսանկյունից:

Ըստ էության, պատերազմական իրավիճակում անվտանգություն ապահովելու առումով բոլոր տիպի վերլուծությունները հանգեցնում են տնտեսական ուժեղ համակարգ ունենալու հրամայականի հետ, որը մեծապես կախված է մարդկային կապիտալից: Ոլորտում առկա են նաև հետազոտություններ, որոնք տնտեսական ուժեղ համակարգը պայմանավորում են քաղաքական համակարգով: Մասնավորապես, կարելի է համաձայնել «Կոմպասս» կենտրոնի կողմից իրականացված հետազոտության հետ, համաձայն որի «անհրաժեշտ է տնտեսությունը քաղաքական համակարգի ածանցյալի դերից ազատել և դարձնել առանձին համակարգ, որը կարող է ինքնուրույն զարգանալ ու կայանալ՝ ի վերջո նպաստելով նաև նույն քաղաքական համակարգի առողջացմանը»[32]: Այս պնդումը համապատասխանում է նախորդ ենթահարցում ներկայացված հետազոտության տվյալներին (աղյուսակ 1), որի համաձայն, նույնիսկ ժողովրդավարական համարվող քաղաքական համակարգի պարագայում տնտեսությունը կարող է արդյունավետ չլինել և հակառակը: Այսինքն քաղաքական համակարգի բնույթը տնտեսական արդյունավետություն ապահովող պարտադիր պայման չէ, հետևաբար տնտեսությունը պետք է աշխատի քաղաքական համակարգից անկախ:

ՀՀ-ում 2018թ-ից սկիզբ առած քաղաքական նոր համակարգը տնտեսության ոլորտում գրեթե ոչ մի փոփոխության չի հանգեցրել: Տնտեսության կառուցվածքային առանձնահատկությունները մնացել են նույնը, խոշոր հարկ վճարող կազմակերպությունների

[32] Տես՝ Տնտեսական վիճակը Հայաստանում, Կոմպասս կենտրոն, Հայաստան, փետրվար 2017 Friedrich Ebert Stiftung, Երևան, էջ 19

ցանկը, կարելի է ասել, էական փոփոխության չի ենթարկվել[33], ռազմավարական նոր ուղղություններ չեն մշակվել: Այսինքն քաղաքական փոփոխությունները չեն հանգեցրել տնտեսական փոփոխությունների: Դրանք նույնիսկ արտացոլված չեն հայեցակարգային մոտեցումներով: Իսկ տնտեսական փոփոխությունների բացակայությունը խիստ սահմանափակում է սոցիալական բարեփոխումների իրականացումը: Այդպիսի բարեփոխումներ անհրաժեշտ են հատկապես հետպատերազմական ժամանակաշրջանում:

«Հիմնական դասերը, որոնք ստացվել են հետազոտության արդյունքներից, նրանք են, որ պատերազմը կարող է ունենալ երկարաժամկետ ազդեցություն, որն ուղղակիորեն կապված չէ ֆիզիկական վնասների հետ»[34]. այս արտահայտությունը վերաբերում է հետպատերազմական Գերմանիային և առնչվում է սոցիալական ու հոգեբանական գործոնների հետ: Պատերազմի սոցիալ-հոգեբանական ազդեցությունը պետության տնտեսական համակարգի վրա հսկայական է: Այդ գործոնի ազդեցության թուլացմանը նույնպես պետք է գնալ մարդկային կապիտալի զարգացմամբ:

Սոցիալ-հոգեբանական ազդեցության ժամանակակից հզոր գործիք են համարվում սոցիալական ցանցերը: Տեղեկատվական հարթակների միջոցով ձևավորվող հանրային կարծիքները մեծ ազդեցություն են ունենում մարդկանց և կազմակերպությունների գործունեության վրա, որն անդրադառնում է տնտեսական կամ այլ բնույթի որոշումներ կայացնելու վրա: Իգոր Պանարինը, տեղեկատվական պատերազմի ռուսաստանցի փորձագետ և գիտնական, առանձնացրել է մեծամասշտաբ տեղեկատվական հակամարտության հիմնական գործիքները. քարոզչություն (սև, գորշ և սպիտակ), հետախուզություն (տեղեկատվության հավաքման նպատակով), վերլուծություն (լրատվամիջոցների նյութերի և առկա իրավիճակի) և կազմակերպում (քաղաքական գործիչների և լրատվամիջոցների կարծիքների ձևավորում)[35]: Կարծում ենք, որ այս մոդելը կարող է կիրառվել ոչ միայն տեղեկատվական հակամարտության տեսանկյունից նաև պետության ներում, հասարակության հետագա գործողություններն արդյունավետ ուղղորդելու տեսանկյունից: Օրինակ, Ղարաբաղյան պատերազմի ընթացքում

[33]Տես՝ https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTILists (վերջին անգամ դիտվել է 08.01.2021թ-ին)

[34] Տես՝ Christoph Koenig, Loose Cannons, War Veterans and the Erosion of Democracy in Weimar Germany, November 2015, p50

[35] Տես՝ Перспективы гибридной войны, Журнал по проблемам безопасности и обороны Европы, ТОМ 10, № 1, 2020, с. 10-11

պետության քարոզչությունը մեծ դերակատարում ունեցավ քաղաքացիների համախմբման և ոգևորության բարձրացման առումով: Սակայն իրավիճակի հանգուցալուծումից հետո այդ քարոզչության կտրուկ դադարեցումն առաջացրեց տեղեկատվական մեծ վակուում, որն անմիջապես լցվեց իրարամերժ տեղեկատվական հոսքերով, բնակչության շրջանում առաջ բերելով սոցիալ-հոգեբանական անհանգստության դրսևորումներ: Պետական քարոզչությունը չկարողացավ ճիշտ համադրել պատերազմի ընթացքում և դրանից հետո մատուցվող տեղեկատվական հոսքերի կառավարումը: Այդպիսի պայմաններում, երբ պետության դերը նվազում է տեղեկատվական հոսքերի կառավարման մեջ, պետք է բարձրանա հասարակական գիտակցության մակարդակը, որպեսզի այդ հասարակությունը երկարաժամկետ հատվածում չկրի պատերազմի անուղղակի հետևանքները, որոնք բնորոշվեցին հետազոտության նախորդ դրույթներում (Christoph Koenig, Loose Cannons): Կարծում ենք, որ հասարակական գիտակցության մակարդակի բարձրացման մեջ էական գործոններ են հանդիսանում մարդկային և սոցիալական կապիտալի զարգացումը: Փորձենք դրանք ներկայացնել սույն հետազոտության համատեքստում:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) մշակած զեկույցներում մարդկային կապիտալի կարևոր առանձնահատկություն է համարվում անհատի մեջ ձևավորված գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամբողջությունը, որոնք նպաստում են անձնական, սոցիալական և տնտեսական բարեկեցության ստեղծմանը[36]: Այսինքն մարդկային կապիտալի բարձր մակարդակով բնութագրվող անհատն իր համար ստեղծում է անձնական, սոցիալական և տնտեսական բարենպաստ միջավայր: Իսկ եթե հասարակության մեջ այդպիսի անհատները շատ են, ապա հանրային մակարդակում սոցիալական և տնտեսական բարեկեցության մակարդակը բարձր է, հետևաբար հասարակության դերը պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության իրականացման մեջ էականորեն կփոխվի:

Մարդկային կապիտալի և դրա նշանակության վերաբերյալ տարբեր բնորոշումներից ընդհանրական կարելի է համարել հետևյալը. «Մարդկային կապիտալը դիտարկվում է որպես մարդկանց ունակությունների, կարողությունների և գիտելիքների համախումբ, որը դրսևորվում է մասնագիտական, միջանձնային և քաղաքացիական հարաբերություններում: Հետևաբար, որքան բարձր լինի մարդկային կապիտալի արժեքը, այնքան արդյունավետ կլինի այդ արժեքի

[36] Տես՝ Organization for Economic Co-operation and Development (OECD) (2001). The Well-Being of Nations: The Role of Human and Social Capital. Paris: OECD.

կիրառական նշանակությունը սոցիալ-տնտեսական և քաղաքացիական ոլորտներում»[37]: Բոլոր ձևակերպումներում մարդկային կապիտալի զարգացումն ասոցացվում է սոցիալական, տնտեսական և քաղաքացիական բարձր մակարդակի արժեհամակարգ կրող անհատների հետ:

Հասարակական առողջ միջավայր ձևավորելու և պատերազմի սոցիալական հետևանքները նվազեցնելու առումով կարևորում ենք ոչ միայն մարդկային, այլ նաև սոցիալական կապիտալի զարգացումը ՀՀ-ում, որի բազմաթիվ բնորոշումներից սույն հետազոտության շրջանակում կարևորել ենք հետևյալը. Սոցիալական կապիտալը ռեսուրսների այն ամբողջությունն է, որին տիրապետում են անհատը կամ խումբը փոխադարձ ճանաչելիության հիմքով՝ ինստիտուցիոնալացված հարաբերությունների պայմաններում[38]: Այս ձևակերպման[39] կարևոր շեշտադրումներ ենք համարում փոխադարձ չանաճելիությունը և ինստիտուցիոնալացումը, որոնք կարող են իրականացվել հասարակական կառույցների, քաղաքական կուսակցությունների, պետական ու մասնավոր կազմակերպությունների հետ հարաբերությունների շրջանակում: Ըստ էության, եթե մարդկային կապիտալն ավելի շատ բնորոշ է անհատին, ապա սոցիալական կապիտալը դիտարկվում է խմբի տեսանկյունից՝ որի հետ հարաբերության մեջ է մտնում անհատը:

ՀՀ-ում սոցիալական կապիտալի զարգացման հիմքում պետք է դնել քաղաքական, հասարակական, պետական ու մասնավոր կառույցների կազմակերպական վարքագիծը: Էթիկայի կանոնները, սոցիալական պատասխանատվությունը, աշխատողների իրավունքների պաշտպանության համակարգերը պետք է ամբողջացնեն կազմակերպության վարքագիծը անհատի հետ հարաբերություններում: Ակնհայտ է, որ այս հարաբերությունը կլինի կատարյալ, եթե ոչ միայն կազմակերպությունները հանդես գան արժեքային համակարգով, այլև անհատն օժտված լինի մարդկային կապիտալի բարձր հատկանիշներով:

Մարդկային և սոցիալական կապիտալի արդյունավետությունը պատերազմի հետևանքների վերացման առումով կլինի բարձր, եթե դրանց զարգացման հիմքում դրվեն ՀՀ

---

[37] Տես՝ Ս. Խաչիկյան, «Մարդկային կապիտալի զարգացման առանձնահատկությունները ՀՀ մարզերում», ՀՀ մարզերի տնտեսության զարգացման հիմնախնդիրները, հանրապետական գիտաժողովի նյութեր, ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ, Եղեգնաձոր 2016, էջ 15

[38] Տես՝ Bourdieu, P. and L. Wacquant (1992), An Invitation to Reflexive Sociology, The University of Chicago Press, Chicago, IL, p. 119

[39] Ձևակերպումը բառացի թարգմանություն չէ և ներկայացվել է հեղինակի հիմնական միտքը մեր մեկնաբանությամբ (Ս.Խ.)

ռազմավարական ծրագրերով գերակա համարվող դրույթներ: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է.

- սոցիալական կապիտալի զարգացման նպատակով կուսակցական ծրագրերը, հասարակական կառույցների գործունեության ուղղությունները, պետական ու մասնավոր կազմակերպությունների զարգացման սոցիալ-տնտեսական ռազմավարական ուղղությունները պետք է բխեն ՀՀ ռազմավարական զարգացման ծրագրերից,
- մարդկային կապիտալի զարգացման ուղղությունները համադրել ՀՀ սոցիալական, տնտեսական ու քաղաքական առաջնահերթությունների, զինված ուժերի արդիականացման ծրագրի դրույթների հետ՝ վերափոխելով բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերը:

Վերլուծությունները ցույց են տալիս, որ մարդկային և սոցիալական կապիտալի դերը տնտեսության ներկա կառուցվածքում բավականին անորոշ է: Թույլ է նաև բարձրագույն կրթության մասնագիտությունների դերը համախառն արդյունքի ձևավորման ոլորտում: Ունենալով բարձրագույն կրթության 118 մասնագիտություններ, նրանք գրեթե արտացոլված չեն տնտեսության կառուցվածքային գերակայություններ համարվող ոլորտերում: Այդ մասնագիտությունները փոխկապակցված չեն նաև ՀՀ ռազմավարական զարգացման ծրագրերի հետ: Պատերազմական իրավիճակի մեջ գտնվելով, բարձրագույն կրթության մասնագիտությունների մեծ մասն ունեն հումանիտար բնույթ, իսկ ոչ հումանիտար բնույթի մասնագիտություններով թափուր տեղերը կամ չկայացող մասնագիտությունները բավականին շատ են: Այս համատեքստում կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները:

- ՀՀ բարձրագույն կրթության մասնագիտությունների շրջանակը լիարժեք փոխկապվածություն չունի պաշտպանական ոլորտում ներդրված արդիականացման ծրագրի հետ: Այդ ծրագրում առկա են մի շարք դրույթներ, որոնք ուղղակիորեն ենթադրում են մասնագիտական կարողությունների և հմտությունների բարձրացում բարձրագույն կրթության միջոցով:
- ՀՆԱ-ի արտադրության մեջ բարձրագույն կրթության մասնագիտությունների դերը չափելի չէ, իսկ պարզ վերլուծությունների համաձայն տնտեսության մեջ առաջատար ցուցանիշներ արձանագրող ոլորտները սպասարկող մասնագիտությունները վերջին տասնամյակում հիմնականում ունեցել են թափուր տեղեր, կամ չեն կայացել:

Այս խնդիրների չեզոքացման և պատերազմի հետևանքների վերացման նպատակով անհրաժեշտ ենք համարում զարգացնել սոցիալական և մարդկային կապիտալը: Դրա համար, կարծում ենք, պետք է.

- Բոլոր տիպի կազմակերպությունների համար պետական քաղաքականության շրջանակներում ձևավորել կազմակերպական համընդհանուր վարքագծի կանոններ և դրանց արդյունավետ կիրառման համար ներդնել աջակցության համակարգեր: Վարքագծի կանոնները պետք է վերաբերեն կազմակերպության նկատմամբ քաղաքացիական պատասխանատվությանը, միջանձնային հարաբերություններին և կազմակերպությունների ինստիտուցիոնալացմանը՝ որոնք հանդիսանում են սոցիալական կապիտալի ձևավորման հիմքը:
- Պետական քաղաքականությունն ուղղորդել այնպես, որ մասնավոր, պետական, հասարակական ու քաղաքական կազմակերպությունների գործունեության ծրագրերը բխեն ՀՀ ռազմավարական զարգացման ծրագրերից:
- ՀՀ բարձրագույն կրթական ծրագրերի համար սահմանել չափանիշներ, որոնց համաձայն նրանք պետք է մշակվեն պետության համար առաջնահերթություններ համարվող ուղղությունների զարգացման համատեքստում: Դա կհանգեցնի մարդկային կապիտալի և պետության ռազմավարական ուղղությունների ներդաշնակ զարգացմանը:

3. Պատերազմի ազդեցությունը մակրոտնտեսական իրավիճակի վրա

Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական իրավիճակի վրա վերջին երկու տասնամյակներում մեծ է եղել տնտեսության կառուցվածքի և արտաքին տրանսֆերտների ազդեցությունը: ՀՀ կառավարության կողմից մշակված և ընդունված որևէ փաստաթղթով որպես մակրոտնտեսական իրավիճակի վրա ազդող հավանական ռիսկ չի կանխատեսվել պատերազմական իրավիճակը: Այս համատեքստում սույն հետազոտության առումով կարևոր փաստաթուղթ ենք համարում «Հայաստանի Հանրապետության 2020-2022 թվականների

պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը»[40] (այսուհետ՝ Ծախսերի ծրագիր), որը հաստատվել է ՀՀ կառավարության որոշմամբ՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն[41]:

Ծախսերի ծրագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «Պետական հատվածում» (2.2.7 կետ) կանխատեսված է ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ աստիճանական նվազում և 2023թ-ին 50%-ից ցածր ցուցանիշի ապահովում: Իսկ ՀՆԱ-ի իրական աճն ըստ հիմնական ճյուղերի, մինչև 2022թ-ը դարձյալ պետք է ապահովվի արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության և ծառայությունների հաշվին: Ընդ որում կառուցվածքային առումով պահպանվում է այժմ գործող համամասնությունն այդ ճյուղերի միջև և տնտեսության կառուցվածքային փոփոխություն չի նախատեսվում:

Հատկանշական է, որ չնայած ՀՆԱ-ի ապահովման հիմնական ճյուղերի մեջ չի նշվում հանքարդյունաբերությունը, սակայն տնտեսության ներքին միջավայրի բարելավման շրջանակում՝ որպես տնտեսական աճին նպաստող էական գործոն, կարևորվում է Ամուլսարի և Թեղուտի հանքավայրերի, ինչպես նաև Ալավերդու պղնձաձուլարանի շահագործումը: Դա նշանակում է, որ հանքարդյունաբերությունը ներառված է արդյունաբերության ընդհանուր ծավալի մեջ և ունի էական դերակատարում, քանի որ ինչպես տնտեսական աճի ապահովման, այնպես էլ դանդաղեցման ռիսկի մեջ ներառված են այդ ոլորտին վերաբերող կանխատեսումներ:

Ծախսերի ծրագրի 2.3.1 կետում ներկայացված են ենթադրություններ, որոնք ընկած են կանխատեսումների հիմքում: Այսպես. առաջին կետով նշվում է, որ «Հայաստանը, որպես փոքր և բաց տնտեսություն ունեցող երկիր, շատ արագ է արձագանքում համաշխարհային տնտեսական զարգացումներին: Դրանով էլ պայմանավորված ենթադրվում է, որ ՀՀ տնտեսության զարգացումը կլինի հիմնական գործընկեր երկրների տնտեսական զարգացումների ուղղվածությանը համահունչ՝ պահպանելով ՀՀ տնտեսության աճի միտումները նաև միջնաժամկետ հատվածում»: Կանխատեսման մեջ կարևորվում է Ռուսաստանի տնտեսական աճի տմպերը՝ դեպի Հայաստան դրամական փոխանցումների ներհոսքի համատեքստում: Հետաքրքիր է, որ որպես

[40] ՀՀ կառավարության որոշումը «Հայաստանի Հանրապետության 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին», 10 հուլիսի 2019թ. N900-Ն

[41] Միջնաժամկետ ծախսային ծրագրի ընդունումը պարտադիր է և կարգավորվում է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով: Դրա շրջանակում իրականացվում են հիմնական մակրոտնտեսական կանխատեսումները և նախանշվում են ռազմավարական զարգացման ուղղությունները:

կանխատեսումների իրականացման հավանական ռիսկ, ներկայացվել է Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները և նավթի գների ցածր մակարդակը, որը կարող է նվազեցնել արտահանումը դեպի ՀՀ ներհոսող տրանսֆերտների ծավալը (Ծախսերի ծրագրի 2.3.2 կետ): Կարծում ենք, քաղաքական տեսանկյունից կոռեկտ չէ այլ երկրի տնտեսական վիճակը ներկայացնել որպես ՀՀ մակրոտնտեսական կայունության ռիսկ մինչև 2022թ-ը՝ դրա փոխարեն չառաջարկելով տնտեսության կառուցվածքային փոփոխության որևէ տարբերակ:

Կանխատեսումների հետ կապված ռիսկերին անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև Ծախսային ծրագրի հետևյալ հիմնավորումների տեսանկյունից:

- ՀՆԱ-ի աճի տեմպերի դանդաղման առումով կարևորվել է մետաղների գների հնարավոր նվազումը (հանքարդյունաբերության ոլորտ):
- ՀՆԱ-ի աճի տեմպերի վրա բացասակաբար կարող է անդրադառնալ բնակլիմայական անբարենպաստ պայմանները (գյուղատնտեսության ոլորտ):

Այսինքն առնվազն մինչև 2022թ-ը տնտեսության կառուցվածքի ներկա վիճակը պետք է պահպանվի: Բացի այդ, պարզվում է, բնակլիմայական պայմանները կարող են էական բացասական ազդեցություն ունենալ գյուղատնտեսության արդյունքի վրա, իսկ բարձրագույն կրթության մասնագիտությունների ցանկի մեջ ներառված և այդ ոլորտում համապատասխան որակավորումներ ստացող մասնագետները չեն կարող ունենալ դրական ազդեցություն: Դա, կարծում ենք, էական բացթողում է պետական քաղաքականության շրջանակում, երբ պետական բուհը փոխգործակցության մեջ չի մտնում պետության ռազմավարական ծրագրով առաջնահերթություն համարվող և նույն ոլորտում գտնվող տնտեսության ճյուղի հետ: Ավելին, փոխգործակցության բացակայության պայմաններում ավելանում է այդ ճյուղի բնականոն գործունեության վրա արտաքին ռիսկերի ազդեցության հավանականությունը:

Հետպատերազմական ժամանակաշրջանում գյուղատնտեսության ոլորտի մակրոտնտեսական ռիսկերն այսքանով չեն սահմանափակվում և կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ առկա է պարենային անվտանգության էական ռիսկ՝ պայմանավորված հացահատիկի և հատիկաընդեղենի ցանքատարածությունների էական կրճատման հետ: Այդ ռիսկն առաջացել է ինչպես Լեռնային Ղարաբաղի, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում վարելահողերի կրճատման ցուցանիշի պատճառով: Այդ ցուցանիշի կրճատման պատճառը պայմանավորված են ոչ միայն տարածքների հանձնումով, այլև ՀՀ-ում

սահմանամերձ նոր տարածքների ի հայտ գալով Վայոց ձորի և Սյունիքի մարզերում, որտեղ հողերի սեփականատերերը ռիսկային են համարել կատարել հացահատիկի և հատիկաընդեղենի ցանքս: Ստորև ներկայացվող աղյուսակում ներկայացվում է տեղեկատվություն այդ ցուցանիշների վերաբերյալ:

Աղյուսակ 5

ՀՀ-ում և Լեռնային Ղարաբաղում հացահատիկի և հատիկաընդեղենի 2020թ-ի մշակված ցանքատարածությունները՝ 2020թ-ին 2019թ-ի համեմատ (տոկոսով)[42]

Հայաստանի Հանրապետություն		Լեռնային Ղարաբաղ
	93.8	***26.1***
այդ թվում՝ Տավուշ	51.9	
Վայոց ձոր	62.4	
Սյունիք	92.1	

Աղյուսակ 5-ի տվյալների համաձայն Հայաստանի Հանրապետությունում 2020թ-ին իրականացվել է նախորդ տարվա համեմատ ավելի քան 6%-ով պակաս հացահատիկի և հատիկաընդեղենի ցանքս: Դա բավականին ռիսկային ցուցանիշ է Լեռնային Ղարաբաղում մոտ 75%-ով պակաս ցանքս կատարելու համատեքստում, քանի որ Լեռնային Ղարաբաղում արտադրված հացահատիկի մեծ մասը ներկրվում էր ՀՀ: Ակնհայտ է, որ 2020թ-ի ցանքատարածությունների հաշվին պետք է սպասարկվի 2021թ-ի պարենային անվտանգության մի կարևոր բաղադրիչ: Հետևաբար արդեն իսկ նախանշվում են հետպատերազմական Հայաստանի պարենային անվտանգության ռիսկերը: Այդ ռիսկերն ավելի են մեծանում, եթե դիտարկենք այն փաստը, որ ներքին առաջարկի կտրուկ անկման համատեքստում իրականացվելու է հացահատիկի և հատիկաընդեղենի ներմուծում, որը կունենա բարձր գին, քանի որ ՀՀ դրամն արժեզրկվել է: Այսինքն մի կողմից ցանքատարածությունների ցուցանիշի կտրուկ նվազեցումը, մյուս կողմից դրամի արժեզրկումը, կհանգեցնեն հացահատիկի և հատիկաընդեղենի գների բարձրացման: Հաշվի առնելով, որ այդ ցանքատարածություններից ստացվող բերքն օգտագործվում է նաև անասնապահության բնագավառում, ապա գյուղմթերքի առումով 2021-ին սպասվում են թանկացումներ: Այս տեսանկյունից հետաքրքիր է աղյուսակ 5-ի այն ցուցանիշները, որոնք վերաբերում են Տավուշի և Վայոց ձորի մարզերի ցանքատարածություններին: Քանի որ աշնանացանը կատարվում է հոկտեմբեր-նոյեմբեր

[42] ՀՀ վիճակագրական կոմիտեի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության 2021թ-ի համապատասխան հրապարակումներ:

ամիսներին, որը 2020թ-ին համընկավ Ղարաբաղյան պատերազմի ժամանակաշրջանի հետ, ապա այդ մարզերում ցանքատարածությունների կտրուկ նվազումը պայմանավորված է նաև սահմանային լարվածությամբ: Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում ավելի քան 400կմ-ով ավելանալով սահմանային գիծն Ադրբեջանի հետ, տասնյակ նոր համայնքներ են հայտնվել սահմանամերձ կարգավիճակում, որոնք այսուհետ ունենալու են սահմանամերձ հողատարածությունների մշակման ռիսկ: Այդ հանգամանքը նույնպես բավականին մեծացնում է հետպատերազմական Հայաստանի մակրոտնտեսական կայունության ռիսկը, քանի որ ՀՆԱ-ի արտադրության մեջ գյուղատնտեսությունն ունի նշանակալի տեսակարար կշիռ:

Ծախսային ծրագրի կանխատեսումների կարևոր դրույթ ենք համարում նաև այն, որ մինչև 2022թ. առկա ռիսկերի հիմնական նկարագրի մեջ նշվում են «ներքին և արտաքին տնտեսական գործոնները»: Այսինքն, տնտեսական գործոններից բացի այլ ռիսկեր չեն դիտարկվեր: Սակայն փաստ է, որ COVID 19 համավարակը և Ղարաբաղյան պատերազմը էական բացասական ազդեցություն կունենան այդ կանխատեսումների վրա: Չնայած դրանք համարվում են ֆորսմաժորային իրավիճակներ, այնուամենայնիվ այդպիսի իրավիճակներիկց բխող գործողություններն անհրաժեշտ են, սակայն բացակայում են պետական քաղաքականության ծրագրերում:

Ինչպես ցույց է տալիս Ծախսերի ծրագրի այս հատվածի վերլուծությունը, մինչև 2022թ-ը, կարծում ենք, առկա է լինելու հետևյալ իրավիճակը.

- տնտեսության կառուցվածքային փոփոխություն նախատեսված չէ, իսկ գործող կառուցվածքով կախվածությունը բավականին մեծ է արտերկրից ստացվող տրանսֆերտներից,
- տնտեսության մեջ գյուղատնտեսության, արդյունաբերության (որի մեջ մեծ է հանքարդյունաբերությունը) և ծառայությունների (ներառյալ առևտուրը, որն ունի մեծ տեսակարար կշիռ) ոլորտները շարունակելու են մնալ գերակա, իսկ դրանց ռիսկայնության նվազեցման վրա ոչ մի ազդեցություն չունի մարդկային կապիտալը,
- կանխատեսումների մեջ հաշվի չի առնված Ղարաբաղյան հակամարտության գործոնը, չնայած ՀՀ-ն երկու տասնամյակից ավել ներգրավված է հակամարտության մեջ, իսկ եթե դրանք կարգավորվում են այլ փաստաթղթերով, ապա այդ կարգավորումներն արտացոլված չեն Ծախսերի ծրագրում:

Կարծում ենք, մակրոտնտեսական իրավիճակի վերաբերյալ ներկայացված կանխատեսումները և դրանց հիմնավորումներն իրական չեն, քանի որ բացի պատերազմի ազդեցությունից, ռիսկերը բավականին մեծ են նաև այնպիսի գործոնների առումով, որոնք կարող էին չեզոքացվել կառավարման որակի բարձրացման կամ մարդկային կապիտալի օգտագործման միջոցով: Մասնավորապես, տնտեսության մեջ մեծ տեսակարար կշիռներ ունեցող ճյուղերի արդյունավետությունը կախված է բնակլիմայական պայմաններից, համաշխարհային շուկայում մետաղների գներից կամ այլ երկրի՝ տվյալ դեպքում Ռուսաստանի, տնտեսական աճից:

ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի և Ղարաբաղյան պատերազմով պայմանավորված հետագա կանխատեսումների համատեքստում կարևոր ենք համարում քննարկել նաև Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից իրականացված մի շարք վերլուծություններ: ԱՄՀ 2017թ-ին պատրաստված զեկույցում արտաքին ցնցումների նկատմամբ Հայաստանի խոցելիությունը մեկնաբանվում է հետևյալ կերպ. «Հայաստանը փոքր, դեպի ծով ելք չունեցող երկիր է, որը ենթակա է արտաքին ցնցումների: Չլինելով ապրանքների խոշոր արտահանող՝ այն խոցելի է մնում պղնձի և ոսկու գնի ցնցումների նկատմամբ, որոնք երկուսն էլ վերջին մի քանի տարիներին զգալի անկում ապրեցին: Կարևոր է նշել, որ մասնավոր սպառումն ու բնակարանաշինության շուկան զգալի կախվածության մեջ են դրամական փոխանցումների ներհոսքերից, հիմնականում՝ Ռուսաստանից: 2012-2017 թթ. ընթացքում ըստ հաշվարկների դրամական փոխանցումները նվազել են՝ ՀՆԱ-ի 19 տոկոսից հասնելով 13-ի: Արտաքին գործոններով պայմանավորված մակրոտնտեսական նման տատանողականությունը ստեղծում է հարկաբյուջետային քաղաքականության վարման համար լարվածություն՝ ազդեցություն, որն ավելի է խորանում համամատաբար ցածր հարկային եկամուտների (2016 թ. ՀՆԱ-ի 20 տոկոսը) և դրա հետևանքով առաջացող հայեցողական ծախսերի թույլ բուֆերների պայմաններում»[43]: Զեկույզի այս մասում ՀՀ մակրոտնտեսական կայունության վերաբերյալ ներկայացված մտահոգությունները հիմնականում համընկնում են Ծախսային ծրագրում ներառված կանխատեսումների հետ: Զեկույցի հետագա մեկնաբանություններում առաջարկվում է, որ Հայաստանն արդիականացնի հարկաբյուջետային շրջանակը՝ անցնելով ապագայամետ,

[43] Հայաստան. Հարկաբյուջետային կանոնների արդիականացում, ԱՄՀ երկրի զեկույց թիվ 17/330, հոկտեմբեր 2017, էջ 14

ցնցումների նկատմամբ ամուր և հակացիկլային շրջանակի, միաժամանակ պահպանելով վստահելիությունը և հարկաբյուջետային կայունությունը[44]:

ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի բարելավման հետ կապված կարևոր փաստաթուղթ ենք համարում «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգի (GSP+)[45]» արտոնյալ առևտրային ռեժիմին միանալը: 2014թ. հունվարի 1-ից Եվրոպական Հանձնաժողովի որոշմամբ Հայաստանի Հանրապետությունն ընդգրկվել է ԵՄ վերանայված «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգի (GSP+)» արտոնյալ առևտրային ռեժիմի նոր փուլում[46]: Դա հնարավորություն է տալիս հայկական ծագման ավելի քան 6200 ապրանքատեսակ արտահանել ԵՄ շուկա զրոյացված կամ նվազեցված մաքսատուրքերով: Այս գործիքը խիստ կարևոր է արտահանման խրախուսման տեսանկյունից՝ մակրոտնտեսական կայունության ապահովման առումով: Արտահանման այդ մեխանիզմը հնարավորություն է տալիս տրանսֆերտների ներհոսքով համալրվող ՀՀ արտարժույթի պաշարը դիվերսիֆիկացնել նաև արտահանման միջոցով: Այդպիսի դիվերսիֆիկացումն ակնհայտ էր նաև Ծախսային ծրագրի ուսումնասիրությունից, որը ցույց տվեց, որ տրանսֆերտային ներհոսքը պարունակում է որոշակի ռիսկեր, պայմանավորված այլ երկրների սոցիալ-տնտեսական իրավիճակով: Դրա կարևորությունն ընդգծվեց հատկապես Ղարաբաղյան պատերազմի ժամանակաշրջանում, որի արդյունքում մեծացավ արտարժույթի պահանջարկը:

Կարևոր ենք համարում նշել, որ բացի «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգի (GSP+)» տնտեսական փաստաթղթից, Հայաստանը ԵՄ հետ ստորագրել է նաև քաղաքական փաստաթուղթ՝ «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը»[47] (Armenia-The EU Comprehensive and Enhanced Partnership Agreement (CEPA)): Ըստ էության ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական ոլորտներում ստորագրվել են կարևորագույն փաստաթղթեր միևնույն՝ ԵՄ շրջանակում, որոնք արդյունավետ կառավարման պարագայում պետք է փոխլրացնեն միմյանց և ապահովեն տնտեսական ու քաղաքական կայունություն: Սակայն ՀՀ արտահանման կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ

[44] Նույն տեղում՝ էջ 25

[45] Regulation (EU) no 978/2012 of the European Parliament and of the Council of 25 October 2012, applying a scheme of generalised tariff preferences and repealing Council Regulation (EC) No 732/2008

[46] https://www.mineconomy.am/page/790 (վերջին անգամ դիտվել է 22.12.2020թ-ին)

[47] Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրն ստորագրվել է 2017թ-ի նոյեմբերի 24-ին, Բրյուսելում:

ծավալները ըստ պետությունների՝ այդ տրամաբանությամբ չեն փոփոխվել, հետևաբար նշված փաստաթղթերը տնտեսության կառուցվածքի վրա էական ազդեցություն չեն ունեցել (աղյուսակ 6): Արտահանման ուղղությամբ որոշակի լավատեսական հիմքեր կան 2021թ-ին, կապված դրամի արժեզրկման հետ՝ որի արդյունքում ՀՀ արտադրանքը միջազգային շուկայում կդառնա առավել մրցունակ:

Արտահանման հետ կապված ընդհանուր մակրոտնտեսական վիճակն ամբողջացնելու նպատակով նշենք, որ այդ ցուցանիշի ծավալը 2020թ-ի հունվար-դեկտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ կազմել է 96.1%[48]: Այսինքն մոտ 4%-ով նվազել է ընդհանուր արտահանումը: Այսինքն չի ապահովվել Ծախսային ծրագրով 2020թ-ի համար կանխատեսված 7.1% արտահանման աճ: Այս ցուցանիշները, ինչպես նաև աղյուսակ 6-ի տվյալները ցույց են տալիս, որ ԵՄ հետ կնքված համաձայնագրերն էական ազդեցություն չունեն արտահանման միջոցով արտարժույթի կայուն պաշար ապահովելու և տրանսֆերտների ներհոսքը դիվերսիֆիկացնելու առումով: ՀՀ-ից ԵՄ արտահանման ցուցանիշը 2020թ-ին նախորդ տարվա համեմատ նվազել է 5%-ով, որն էական է միջինացված կշռով տարեկան մոտ 25% արտահանում ապահովող ցուցանիշի մեջ: Այդ բացասական միտումը կպահպանվի հետպատերազմական փուլում՝ 2021թ-ին:

Աղյուսակ 6.

Արտահանման կառուցվածքն ըստ երկրների խմբերի 2017-2019թթ. (տոկոս)[49]

Երկրներ	2017	2018	2019	2020[50]
ԱՊՀ	26	30	31	29
ԵՄ	29	28	22	17
Այլ	45	42	47	54
Ընդամենը	100	100	100	100

Ինչպես տեսնում ենք, ԵՄ հետ տնտեսական և քաղաքական համաձայնագրերի կիրառման արդյունավետությունը բարձր չէ մակրոտնտեսական կայունություն ապահովելու տեսանկյունից: Դրա փոխարեն արդյունավետ են աշխատում ավանդական տնտեսական կապերը ԱՊՀ երկրների

[48] Տես՝ նույն տեղում

[49] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից, հիմք ընդունելով ՀՀ վիճակագրական կոմիտեի 2020թ-ի հրապարակումը արտաքին տնտեսական գործունեության վերաբերյալ՝ https://www.armstat.am/file/article/armenia_2020_14_.pdf (վերջին անգամ դիտվել է 23.01.2021թ-ին)

[50] 2020թ-ի տվյալները վերցվել են 2021թ-ի վիճակագրական հրապարակումից՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020թ-ի հունվար-դեկտեմբերին. Արտաքին հատված, էջ 14

հետ: Կարծում ենք, դա պայմանավորված է այն հանգամանքով, որ համաձայնագրերի դրույթները կյանքի կոչելու նպատակով անհրաժեշտ է կատարել բավականին մեծ աշխատանք համապատասխան մեխանիզմներ մշակելու առումով, որը պահանջում է որակյալ կառավարում, բարձրակարգ մասնագետներ, ինչպես նաև կազմակերպական հմտություններ:

Այսպիսով հետպատերազմական տնտեսական համակարգում ունենք այնպիսի իրավիճակ, որ մակրոտնտեսական ցուցանիշների կայունության ապահովումը պարունակում է մեծ ռիսկեր ի դեմս բնակլիմայական անբարենպաստ պայմանների (գյուղատնտեսություն), մետաղների գների (հանքարդյունաբերություն) և տրանսֆերտների ներհոսքի: Ռիսկերը մասամբ չեզոքացնելու հնարավորություններ են առկա ԵՄ հետ կնքված տնտեսական և քաղաքական համաձայնագրերով, սակայն այդ համաձայնագրերի դրույթները լիարժեք կյանքի չեն կոչվում անհրաժեշտ մեխանիզմների կամ կազմակերպչական աշխատանքների բացակայության պատճառով:

Սակայն կարծում ենք հետպատերազմական Հայաստանում մակրոտնտեսական ռիսկերն այդքանով չեն սահմանափակվում: ՀՀ տնտեսության կառուցվածքային առանձնահատկություն ենք համարում նաև տարածքային և համայնքային տնտեսական համակարգերը: Հատկապես տնտեսության կենտրոնացվածությունը Երևանում (տես՝ աղյուսակ 2) առաջ է բերում մեծ ռիսկեր մարզերի ներուժի օգտագործման տեսանկյունից: Տարածքային և համայնքային տնտեսությունների զարգացումը պետք է դիտարկել ոչ միայն համախառն արդյունքի ձևավորման, այլև պետական անվտանգության տեսանկյունից: Այս առումով կարևոր ենք համարում Երևանի տնտեսական զարգացումը օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում տնտեսական գործունեություն իրականացնելու միջոցով: Հիմնվելով արդեն իսկ իրականացված հետազոտության վրա, ցույց տանք Երևանի բյուջեի մի շարք առանձնահատկություններ, որոնք ներկայացված են աղյուսակ 7-ում[51]:

[51] Խաչիկյան Ս. Վ., «Տեղական ինքնակառավարման հիմնախնդիրները Երևանի տնտեսական զարգացման համատեքստում», Հայկական տնտեսագիտական հանդես N1 2020թ, էջ 103

Աղյուսակ 7.

Երևան համայնքի բյուջետային եկամուտների հիմնական աղբյուրները 2015-2020թթ ժամանակահատվածում (տոկոսներով)

Հ/հ	Բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրները	2015	2016	2017	2018	2019	2020
1	Եկամուտներ՝ ընդամենը	100	100	100	100	100	100
2	Համայնքային հարկեր և տուրքեր	19.1	18.6	17.5	17.9	17.9	17.1
3	Պետական բյուջեից	71.1	74.4	75.6	72.6	71.2	74.7
4	Այլ	9.8	7	6.9	9.5	10.9	8.2

Եթե այս արդյունքները համադրենք սույն հետազոտության շրջանակում ուսումնասիրված և Երևանի տնտեսական ներուժին վերաբերող ցուցանիշների հետ (աղյուսակ 2), ապա կարող ենք արձանագրել հետևյալը: Չնայած այն հանգամանքին, որ Երևանը համարվում է ՀՀ համախառն արդյունքի մեծ մասի ստեղծման կենտրոն, այնուամենայնիվ օրենսդրական առումով տեղական ինքնակառավարման լայն տիրույթում առաջնահերթ չի համարվում քաղաքային տնտեսության զարգացումը: Տեղական ինքնակառավարման մարմինները սեփական (կամավոր) լիազորությունների շրջանակում ունենալով տնտեսական գործունեություն իրականացնելու իրավասություն, դա չեն անում: Դրա արդյունքում Երևանի համայնքային բյուջեի մոտ 90%-ը չի ստեղծվում տեղական ինքնակառավարման մարմինների տնտեսական գործունեության արդյունքով, այլ ստացվում է պետական բյուջեից և տեղական հարկերի հավաքագրումից: Հարկ է ընդգծել, որ 70-75%-ը ստացվում է պետական բյուջեից:

Կարծում ենք, հետպատերազմական Հայաստանում այս երևույթը կարիք ունի խորքային վերանայման և տնտեսության կառուցվածքային փոփոխությունների համատեքստում անհրաժեշտ է փոխել Երևանի կառավարման համակարգը և նվազեցնել պետական բյուջեից ստացվող դրամաշնորհները: Միևնույն ժամանակ, քանի որ պետական բյուջեի դրամաշնորհներով (դոտացիա և այլն) կառավարումը բնորոշ է տեղական ինքնակառավարման բոլոր մարմիններին, կարելի է Երևանը դիտարկել հարակից գյուղական համայնքների հետ միասին որպես տնտեսական համակարգ: Այդ գործընթացն իրականացնելու համար անհրաժեշտ է կատարել իրավական մի շարք փոփոխություններ, որոնք պետք է վերաբերեն վարչատարածքային բաժանմանը, պետական բյուջից ֆինանսական համահարթեցման

սկզբունքով համայնքներին հատկացվող միջոցներին և համայնքային տնտեսական գործունեություն իրականացնելու առաջնահերթություններին:

Ընդհանրապես, հետպատերազմական Հայաստանում մակրոտնտեսական կայունություն ապահովելու տեսանկյունից անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել պետական բյուջեի միջոցների օգտագործմանը: Հարկաբյուջետային քաղաքականության առանձնահատկություններին՝ ինչպես արդեն ներկայացվեց հետազոտության նախորդ դրույթներում, անդրադարձել է նաև Արժույթի միջազգային հիմնադրամը՝ արձանագրելով, որ անհրաժեշտ է Հայաստանն արդիականացնի հարկաբյուջետային շրջանակը՝ անցնելով ապագայամետ հարկաբյուջետային քաղաքականության: Իսկ հարկաբյուջետային քաղաքականության ապագայամետ շրջանակը՝ համայնքների հետ փոխհարաբերություններում, կարծում ենք պետք է լինի ոչ թե ծախսային միջոցներ տրամադրող, այլ տնտեսական ներուժ զարգացնող:

Հայտնի է, որ յուրաքանչյուր տարի ՀՀ պետական բյուջեի առնվազն 4%-ը ֆինանսական համահարթեցման նպատակով տրամադրվում է համայնքային բյուջեներին[52]: Սակայն այդ միջոցները չեն ներդրվում արդիականացման ծրագրերում, դրանք հիմնականում ծախսվում են համայնքների վարչական գործառույթների իրականացման ուղղությամբ: Նաև այս համատեքստում պետք է կատարվեն իրավական փոփոխություններ, որ այդ միջոցները հատկացվեն ոչ թե որպես ֆինանսական համահարթեցում, այլ համայնքային տնտեսության զարգացում:

Կարծում ենք ինչպես Երևանի, այնպես էլ ՀՀ մյուս համայնքների կառավարման համար անհրաժեշտ է մշակել այնպիսի մոդել, որտեղ առաջնահերթություն կտրվի տնտեսական գործունեությանը և պետական բյուջեից կախվածության նվազեցմանը: Տնտեսության կառուցվածքային այդպիսի փոփոխությունը կմեծացնի մակրոտնտեսական քաղաքականության հնարավորությունները բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման և դրանք պատերազմի հետևանքների վերացմանն ուղղորդելու առումով: Համայնքների և պետական բյուջեի միջև փոխհարաբերությունները պետք է բխեն ոչ թե ծախսերի ֆինանսավորման, այլ ներդրումային ծրագրերի իրականացման տրամաբանությունից: Այդ պարագայում կստեղծվեն համայնքային տնտեսություններ, որոնք ոչ միայն չեն «ծանրանա» պետական բյուջեի վրա, այլև

[52] Այս դրույթն ամրագրվում է յուրաքանչյուր տարվա ՀՀ պետական բյուջեի մասին օրենքով:

կստեղծեն հավելյալ արդյունք: Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին ՀՀ օրենքը[53] և տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի[54] այն դրույթները, համաձայն որոնց համայքները կարող են իրականացնել տնտեսական գործունեություն (հոդված 52), ինչպես նաև կարող են ստեղծել միջհամայնքային միավորումներ ծախսերն օպտիմալացնելու նպատակով (հոդված 78), հիմք են հանդիսանում համայնքային տնտեսություն ստեղծելու համար: Սակայն իրավական այս ռեսուրսը մինչ այժմ տնտեսական արդյունք չի ապահովել (կամ այդ արդյունքն աննշան է և արտացոլված չէ որևէ հաշվետվության կամ վիճակագրության մեջ), որի պատճառով պետական բյուջեն ավելի մեծ միջոցներ չի ուղղել պաշտպանական և անվտանգության համակարգերին, դրա փոխարեն այդ միջոցները տրամադրվել են համայնքներին որպես դրամաշնորհներ:

Ինչպես երևում է, համայնքային տնտեսության զարգացման նպատակադրումը Երևանում և ՀՀ մարզերում կարող է դառնալ տնտեսության կառուցվածքային փոփոխությունների հիմնական ուղղություններից մեկը՝ նպաստելով հետպատերազմական Հայաստանում պետական բյուջեի միջոցների արդյունավետ օգտագործմանը և մակրոտնտեսական կայունության ապահովմանը: Այս առումով պետք է համալիր գործողությունների շրջանակում քննարկել հետևյալ երեք դրույթները.

1. Երևան քաղաքում կենտրոնացած է տնտեսական մեծ ներուժ, որը նշանակալի է հանրապետության մասշտաբով, սակայն այդ ներուժը չի օգտագործվում քաղաքային տնտեսություն զարգացնելու նպատակով:
2. Երևան քաղաքի բյուջեի հիմնական մասը ձևավորվում է պետական բյուջեից կամ տեղական հարկերից: Սեփական նախաձեռնությամբ՝ օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում, Երևանի տեղական իշխանությունները չեն իրականացնում տնտեսական գործունեություն:
3. ՀՀ տարածքային համաչափ զարգացման քաղաքականությունն արդյունք չի տվել և մարզերում ստեղծվող նոր արժեքը հիմնականում ձևավորվում է գյուղատնտեսության կամ հանքարդյունաբերության ոլորտներում, որոնց մեջ մարդկային կապիտալի գործոնը տեսանելի չէ:

[53] «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենք ընդունված է 2015 թվականի դեկտեմբերի 21-ին:
[54] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք ընդունված է 2002 թվականի մայիսի 7-ին:

Այսպիսով, ՀՀ մակրոտնտեսական կայունությունը ռիսկային էր նույնիսկ մինչպատերազմական իրավիճակը հետևյալ պատճառներով:

- Տնտեսական ցուցանիշների կանխատեսումների հիմքում ռիսկային համարվող և կառավարման բնույթից անկախ գործոնները բազմազան են՝ անբարենպաստ բնակլիմայական պայմաններ, մետաղների միջազգային գներ, այլ երկրներից ստացվող տրանսֆերտների նվազում և այլն:
- ԵՄ հետ կնքված տնտեսական և քաղաքական փաստաթղթերը՝ «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգը (GSP+)» և «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը», չեն ապահովել արտահանման այնպիսի աճ, որի միջոցով հնարավոր կլիներ դիվերսիֆիկացնել տրանսֆերտների տեսքով ՀՀ ներհոսող արտարժույթի պաշարները:
- Արտաքին տնտեսական ավանդական համակարգը ԱՊՀ և ԵԱՏՄ երկրների հետ ապահովել է առևտրաշրջանառության բարձր ցուցանիշներ, սակայն մակրոտնտեսական կայունության ապահովման տեսանկյունից այդ ոլորտում առկա հիմնախնդիրները չեն քննարկվել:
- Տնտեսության կառուցվածքային առանձնահատկություն է այն, որ Երևանում կենտրոնացված է հանրապետության տնտեսական ներուժի հսկայական մաս, սակայն այդքանով հանդերձ չունի համայնքային տնտեսություն և պետական բյուջեից ծախսում է մեծ միջոցներ:

Այս պարագայում մակրոտնտեսական իրավիճակը չի կարող համարվել կայուն հետպատերազմական իրավիճակում: Ավելին, տնտեսության վերականգնման համար անհրաժեշտ կլինեն լրացուցիչ միջոցներ, որոնք կավելացնեն պարտքային բեռը: Բացի այդ, տրանսֆերտների ներհոսքի կրճատման ռիսկը՝ որը 2020-ի վերջին արդեն ունեցավ բացասական ազդեցություն ՀՀ դրամի կայունության վրա, կբարձրացնի ներմուծվող ապրանքների գինը՝ նվազեցնելով ՀՀ-ում դրանց սպառման ծավալները: Չնայած դրամի արժեզրկումը նպաստավոր պայմաններ է ստեղծում արտահանման տեսակյունից, սակայն, հաշվի առնելով արտահանման մեջ գյուղատնտեսական ապրանքների և հանքարդյունաբերության տեսակարար կշիռները և դրանց առումով գնահատված ռիսկերը, այդ գործոնը նույնպես չի կարող ապահովել մակրոտնտեսական կայունություն:

4. ՀՀ ֆինանսական համակարգը. մինչ և հետպատերազմյան իրողությունները

«Պատերազմում հաղթում կամ պարտվում են բանակները» ձևակերպումը մասնակի կամ կիսաճշմարտություն է: Պատերազմի արդյունքը տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքական և այլ դաշտերում փաստացի իրողությունների արտացոլումն է[55]: Իրողությունների, որոնք մինչ պատերազմը միգուցե անբացահայտ են կամ էլ անտեսվում են՝ ցանկալի պատկերը չխեղաթյուրելու, իր գորշ գույներով չխաթարելու համար: Սակայն միևնույն է՝ պարտության դառնությունը ստիպում է ավելի լրջորեն և անաչառ կերպով փորձել անդրադառնալ անցյալի պատկերներին, իրողություններին ու հետահայաց հայտնաբերել նաև, որ իրականում այդտեղ բավականին շատ գորշ բծեր կային, որոնք ներկա աղետալի ձախողումների նախերգանքն են եղել:

Արտաքին միջավայրի ազդեցությամբ պայմանավորված անկայունության կամայական դրսևորում ի թիվս տնտեսության բաղադրիչների, թիրախավորում է ֆինանսական համակարգը: Վերջինը մի կողմից չափազանց զգայուն է, մյուս կողմից՝ բազմարկչի էֆեկտով նույնիսկ փոքր թվացող խնդիրները կարող է բազմապատկել՝ հանգեցնելով անկանխատեսելի հետևանքների: Ըստ այդմ, հատկապես հետպատերազմյան շրջանում չափազանց կարևոր է ֆինանսական համակարգում տեղի ունեցող գործընթացների մշտադիտարկումը, դրանցում հնարավոր խնդիրների նախանշանների վաղ հայտնաբերումն ու չեզոքացումը:

ՀՀ բանկային համակարգի ակտիվները դիտարկվող ամբողջ ժամանակահատվածում կայուն աճի միտում են ցուցաբերել: Ընդ որում, միտումը պահպանվել է նույնիսկ 2018թ. քաղաքական վայրիվերումների շրջանում, ավելին՝ 2020թ. համավարակով պայմանավորված ճգնաժամային իրողությունների պայմաններում, հետո՝ նաև պատերազմական գործողությունների ընթացքում որոշ ճշգրտումներ գրանցելով՝ ընդհանուր առմամբ պահպանել է աճի երկարաժամկետ միտմանը համապատասխանող տեմպը (գծ. 1 և 2):

[55] Ավելի մանրամասն տես՝ Force Report No. 77. https://www.cfr.org/report/keeping-our-edge/pdf/TFR_Innovation_Strategy.pdf; Bar-El, Ronen, Eyal Pecht & Asher Tishler. 2018. 'Human Capital and National Security.' Defence and Peace Economics 1–21;



Գծ. 1. ՀՀ բանկային համակարգի ակտիվները, տրլն. դրամ[56]

ՀՀ բանկային համակարգի ակտիվները 2019թ. տարեվերջին, նախորդ տարվա վերջի համեմատությամբ, ավելացել են 800 մլրդ դրամով կամ 16 տոկոսով: 2020թ. տարեկան աճը կազմել է 13,7% (գծ. 2):



Գծ. 2. ՀՀ բանկային համակարգի ակտիվները 2018-2020թթ., ամսվա վերջի դրությամբ, տրլն. դրամներով[57]

Հատկանշական է, որ ՀՀ բանկային համակարգի ակտիվներ/ՀՆԱ հարաբերակցությունը դիտարկվող ժամանակահատվածում էլ ավելի արագ է աճել՝ հաշվի առնելով հատկապես 2020թ. տնտեսական ակտիվության անկման միտումները:

[56] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), հեղինակային հաշվարկներ՝ առևտրային բանկերի հաշվեկշռային ցուցանիշների հիման վրա:
[57] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), հեղինակային հաշվարկներ՝ առևտրային բանկերի հաշվեկշռային ցուցանիշների հիման վրա:



Գծ. 3. Բանկային համակարգի ակտիվներ/ՀՆԱ հարաբերակցությունը, տարեվերջի դրությամբ, տոկոսներով[58]

Արդյունքում 2020թ-ի տարեվերջին բանկային համակարգի ակտիվները գերազանցեցին անվանական ՀՆԱ մեծությունը. ակտիվներ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմեց 104%, այն դեպքում, երբ 2019թ-ի վերջին այդ ցուցանիշը 89% էր (գծ. 3):

2020թ-ի տարեվերջին ՀՀ բանկերի սեփական կապիտալը կազմել է շուրջ 900 մլրդ դրամ՝ տարեսկզբի համեմատությամբ մոտ 150 մլրդ դրամով ավելի: Բանկերի սեփական կապիտալի դեպքում ևս ընդհանուր առմամբ արձանագրվել են նույն միտումները, ինչ ակտիվների պարագայում (գծ. 4): Նախորդ տարվա վերջին ամիսներին ցուցանիշը պահպանել է աճի տեմպը՝ դրա մակարդակի որոշ թուլացմամբ:



Գծ. 4. ՀՀ բանկերի սեփական կապիտալը[59]

[58] Տես՝ նույն տեղում:

2020թ. տարեվերջի դրությամբ բանկերի ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթի մեծությունը կազմել է մոտ 70 մլրդ դրամ, ինչը շուրջ 9 մլրդ դրամով ավելի է նախորդ տարվա արդյունքից (գծ. 5)։



Գծ. 5. Բանկերի ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ (վնաս), մլրդ դրամ[60]

Բանկերի նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթի մեծությունը 2020թ. տարեվերջին գերազանցել է 170 մլրդ դրամը, ինչը սակայն պակաս է տարեսկզբի մակարդակից (գծ. 6)։ Այնուհանդերձ, երկարաժամկետ հատվածում արձանագրված միտումները այստեղ ևս շարունակում են պահպանվել՝ իրավիճակին բնորոշ որոշ ճշգրտումներով, շտկումներով։



Գծ. 6. Նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ/վնաս/, մլրդ դրամներով[61]

---

[59] Տես՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), հեղինակային հաշվարկներ՝ առևտրային բանկերի հաշվեկշռային ցուցանիշների հիման վրա։

[60] Տվյալները ներկայացված են կուտակային։ Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), հեղինակային հաշվարկներ՝ առևտրային բանկերի հաշվեկշռային ցուցանիշների հիման վրա։

Վարկային կազմակերպությունների պարագայում հիմնական հաշվեկշռային ցուցանիշների աճի արագացում է նկատվում հատկապես վերջին տասնամյակի ընթացքում: Ընդ որում, 2016-ից աճի տեմպերի կտրուկ ավելացում է արձանագրվել, որը պահպանվել է մինչև 2020թ. սկիզբը: Այնուհետև, համավարակով և պատերազմական իրավիճակով պայմանավորված ճգնաժամային երևույթների, նաև՝ այլ գործոնների ազդեցությամբ ակտիվների և պարտավորությունների ընդհանուր մեծությունները 2-3 տոկոսանոց նվազում են գրանցել, որը սակայն նախորդ տարվա վերջին ամսվա ընթացքում վերականգնման նախանշաններ ի ցույց դրեց (գծ. 7):



Գծ. 7. ՀՀ վարկային կազմակերպությունների ակտիվները, պարտավորությունները և հաշվեկշռային ընդհանուր կապիտալը[62]

Վարկային կազմակերպությունների ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթը զգալի վայրիվերումն է գրանցել՝ 2020թ-ի առաջին երեք ամիսներին իջնելով բացասական մակարդակի: Հետագա ամիսներին վերականգնման միտումներ են գրանցվել, չնայած տարեվերջի դրությամբ ցուցանիշի մեծությունը էականորեն ցածր է 2019թ-ի դեկտեմբերի վերջին արձանագրված մակարդակից (գծ. 8):

[61] Տվյալները ներկայացված են կուտակային: Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), հեղինակային հաշվարկներ՝ առևտրային բանկերի հաշվեկշռային ցուցանիշների հիման վրա:
[62] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), հեղինակային հաշվարկներ՝ վարկային կազմակերպությունների հաշվեկշռային ցուցանիշների հիման վրա:



Գծ. 8. Վարկային կազմակերպությունների չբաշխված շահույթի դինամիկան, մլրդ դրամներով[63]

ՀՀ բանկերը հիմնական նորմատիվների պահպանման հարցում բարդություններ չեն ունեցել: Հատկապես կապիտալի համարժեքության և իրացվելիության նորմատիվների պարագայում փաստացի գնահատականները էականորեն գերազանցում են շեմային մեծությունները: Ճիշտ է, 2020թ. վերջին ամիսներին նորմատիվների գնահատականների որոշ նվազում է գրանցվել, սակայն դա եղել է ոչ նշանակալի, 1,0-1,5 տոկոսային կետի շրջակայքում և իրավիճակի որևէ փոփոխության չի հանգեցրել:

Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը ($Ն_{12}$) 2020թ. տարեվերջին կազմել է 16,9%, այն դեպքում, երբ նորմատիվի նվազագույն թույլատրելի շեմը 12% է:

Բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների հարաբերակցությունը 2020-ին էապես չի փոխվել, իսկ տարեվերջին կազմել է 24,7%, (նվազագույն թույլատրելի շեմը 15% է): Նույն կերպ, $Ն_{22}$ նորմատիվի գնահատականը (բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունը) մոտ 108% է՝ 60% նվազագույն շեմի դեպքում (գծ. 9):

[63] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), հեղինակային հաշվարկներ՝ վարկային կազմակերպությունների հաշվեկշռային ցուցանիշների հիման վրա:



Գծ. 9. ՀՀ բանկային համակարգի կապիտալի համարժեքության և իրացվելիության նորմատիվները[64]

Կապիտալի համարժեքության և իրացվելիության նորմատիվների գնահատականների բարձր մակարդակը մի կողմից համակարգի կայունության կարևոր գրավական է, ինչը հատկապես կարևորվում է հետպատերազմյան իրողությունների և ռիսկերի պայմաններում: Մյուս կողմից, որոշակիորեն առկա է համակարգում ռեսուրսների ոչ բավարար արդյունավետության օգտագործման խնդիրը, ինչը բազմիցս բարձրաձայնվել է և այսօր էլ ոչ պակաս արդիական նշանակություն ունի:

ՀՀ ապահովագրական ընկերությունների ակտիվները 2015թ-ի կեսերից կայուն աճ են ցուցաբերում՝ ընդհուպ մինչև նախորդ տարվա առաջին եռամսյակը: Դրան հաջորդած երկու եռամսյակներում ակտիվների կրճատման գործընթաց է արձանագրվել: Դրանով հանդերձ, 4-րդ եռամսյակում նվազման տեմպերի կայունացում է նկատվում (գծ. 10): Ապահովագրական պահուստների պարագայում նկատելի են նույն միտումները, ինչ ակտիվների դեպքում:

[64] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), հեղինակային հաշվարկներ՝ առևտրային բանկերի հաշվետվություններում ամփոփված տեղեկատվության հիման վրա:



Գծ. 10. Ապահովագրական ընկերությունների ակտիվներն ու ապահովագրական պահուստները[65]

Ապահովագրական ընկերությունների ընդհանուր կապիտալը 2020թ-ի վերջին կազմել է 23 մլրդ դրամ, ինչը 2019թ-ի համեմատությամբ 7,6%-ով ավելի է: 2020թ-ի ընթացքում ապահովագրական ընկերությունների չբաշխված շահույթի որոշ ավելացում է արձանագրվել, միայն վերջին եռամսյակում ցուցանիշը փոքր-ինչ նվազել է (գծ. 11):



Գծ. 11. Ապահովագրական ընկերությունների ընդհանուր կապիտալը և չբաշխված շահույթը, մլրդ դրամներով[66]

[65] Ապահովագրական ընկերությունների 31.12.05-ից մինչև 31.03.08թ. ակտիվների նվազումը պայմանավորված է ապահովագրական ընկերթությունների քանակի նվազմամբ: Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), հեղինակային հաշվարկներ՝ ապահովագրական ընկերությունների հաշվեկշռային ցուցանիշների հիման վրա:

[66] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), հեղինակային հաշվարկներ՝ ապահովագրական ընկերությունների հաշվետվություններում ամփոփված տեղեկատվության հիման վրա:

Աչքի է զարնում ապահովագրավճարների աճի միտումը՝ ապահովագրական հատուցումների հարաբերական կայունության պայմաններում (գծ. 12)։ Ըստ այդմ, ապահովագրական հատուցումների աճի խիստ ցածր տեմպը ապահովագրական ընկերությունների կայունության կարևոր հենք է հանդիսանում, ինչը ապահովագրավճարների աճի պայմաններում լրացուցիչ ռիսկերի, հատկապես՝ հետպատերազմյան իրավիճակին բնորոշ, արդյունավետ կառավարման նշանակալի նախադրյալ է։



Գծ. 12. Ապահովագրական ընկերությունների գործունեության ցուցանիշները, մլրդ դրամներով, տարվա սկզբից՝ աճողական[67]

Ապահովագրական պայմանագրերի և դրանցով նախատեսված ապահովագրական գումարների աճի՝ վերջին տարիներին ակնառու միտումը 2019թ-ի վերջին եռամսյակից դանդաղել և թույլ կրճատման է վերափոխվել, ինչն ավելի ընդգծված դրսևորում է ստացել համավարակով և 44-օրյա պատերազմով պայմանավորված ճգնաժամային իրողությունների պայմաններում։ Այն մի կողմից տրամաբանական կարելի է համարել՝ շուկայի մասնակիցների կողմից ցուցաբերվող որոշ զգուշավորության համապատկերում։ Մյուս կողմից, նույնիսկ ճգնաժամային սրացումներով պայմանավորված, դիտարկվող ցուցանիշների աճի դանդաղումը համակարգի զարգացման նոր ռեսուրսների որոնման, նորարարական մոտեցումների ներդրման, նոր պրոդուկտների մշակման խթան պետք է հանդիսանա (գծ. 13)։

[67] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), հեղինակային հաշվարկներ՝ ապահովագրական ընկերությունների հաշվետվություններում ամփոփված տեղեկատվության հիման վրա։



Գծ. 13. Գործող ապահովագրական պայմանագրերի քանակը և ապահովագրական գումարները[68]

Ներդրումային գործունեություն իրականացնող սուբյեկտների պարագայում 2020թ-ի ճգնաժամային դրսևորումները էական ազդեցություն չեն թողել, ինչը բխում է, մասնավորապես, այդօրինակ սուբյեկտների ակտիվների և կուտացված շահույթի դինամիկայի ուսումնասիրությունից: Ըստ որում, աճի կայուն միտումների էական փոփոխություն չի արձանագրվել, ավելին՝ 2020թ-ի մարտից ակտիվների ընդհանուր մեծության աճի արագացում է նկատվում (գծ. 14):



Գծ. 14. Ներդրումային գործունեություն իրականացնող ընկերությունների ընդամենը ակտիվները և կուտակված շահույթը[69]

<u>Փողի ագրեգատները և տնտեսության վարկավորումը</u>

[68] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), հեղինակային հաշվարկներ՝ ապահովագրական ընկերությունների հաշվետվություններում ամփոփված տեղեկատվության հիման վրա:

[69] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), հեղինակային հաշվարկներ՝ ներդրումային գործունեություն իրականացնող ընկերությունների հաշվեկշռային ցուցանիշների հիման վրա:

Տնտեսությունում փողի բազայի ընդլայնումը տեղի է ունենում կայուն աճի տրամաբանությամբ: Որոշ բաղադրիչների պարագայում միտումների փոփոխություն է արձանագրել 2017-2018-ին՝ արտարժույթով ավանդների աճի դանդաղում է գրանցվել՝ դրամով ժամկետային ավանդների արագ ընդլայնման համապատկերում (գծ. 15, 16):



Գծ. 15. Փողի ագրեգետների բաղադրիչները, մլրդ դրամ[70]



Գծ. 16. Փողի ագրեգատների բաղադրիչների դինամիկան 2019-2020թթ., ամսական[71]

2020թ-ի տարեվերջին առևտրային բանկերի ներգրաված ավանդները կազմել են շուրջ 3,7 տրլն դրամ, տարվա ընթացքում բացարձակ ավելացումը եղել է մոտ 150 մլրդ դրամ: Ըստ որում, ավանդների աճի տեմպը ճգնաժամի տեսանկյունից առավել խոցելի ամիսներին էապես ցածր չի

[70] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն:
[71] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն:

եղել՝ մյուս ամիսների համեմատությամբ (գծ. 17)։ 2020թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին, նույն տարվա օգոստոսի համեմատությամբ, ավանդների ընդհանուր ծավալը նվազել է մոտ 150 մլրդ դրամով, սակայն դեկտեմբերին ավելի քան 200 մլրդ դրամով ավելացումը թույլ է տվել լիարժեքորեն հակակշռել նկարագրված բացասական միտումը։



Գծ. 17. Առևտրային բանկերի ներգրաված ընդամենը ավանդները, մլրդ դրամ[72]

Ավանդների կառուցվածքում առավել արագ աճ են արձանագրել ռեզիդենտներից ներգրավված ավանդները։ Ոչ ռեզիդենտների պարագայում վերջին տարվա ընթացքում որոշ դանդաղում է նկատվում (գծ. 18)։



Գծ. 18. Ավանդները ըստ ռեզիդենտայնության, 2007թ. հունվարից 2020թ. դեկտեմբեր, մլրդ դրամ[73]

Հետաքրքրական է ըստ արժույթի ավանդների ծավալի փոփոխման միտումը։ Դրամով ավանդները կայուն տեմպով աճ են արձանագրել՝ ընդհուպ մինչև դիտարկվող ժամանակահատվածի վերջը, մինչդեռ արտարժույթով ավանդների ծավալը վերջին երկու տարիների ընթացքում կայունացել է 1,1 տրլն դրամի տիրույթում, իսկ 2019թ-ից նույնիսկ

[72] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն։
[73] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն։

նվազման թույլ միտում է ցուցաբերում (գծ. 19)։ 2020թ.սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին դրամով ավանդների ընդհանուր ծավալը կրճատվել է մոտ 45 մլրդ դրամով, դեկտեմբերին, սակայն, նոյեմբերի համեմատությամբ տեղի է ունեցել մոտ 70 մլրդ դրամի աճ։



Գծ. 19. Ռեզիդենտներից ներգրավված ավանդները, ըստ արժույթի, 2007թ. հունվարից 2020թ. դեկտեմբեր, մլրդ դրամ[74]

Ռեզիդենտներից ներգրավված ավանդների ժամկետային կառուցվածքում գերակշռում են ժամկետային ավանդները, որոնք վերջին 10 տարիների ընթացքում աճի ընդգծված արագ տեմպ են ցուցաբերում՝ ի համեմատություն ցպահանջ ավանդների (գծ. 20)։ Պետք է արձանագրել, որ նախորդ տարվա վերջին ամիսներին ռեզիդենտներից ժամկետային ավանդների ներգրավման նվազում է արձանագրվել։ Այսպես, 2020թ. վերջին 4 ամիսներին ժամկետային ավանդները նվազել են մոտ 80 մլրդ դրամով, այն դեպքում, երբ նույն ժամանակահատվածում ցպահանջ ավանդների ծավալն ընդլայնվել է ավելի քան 110 մլրդ դրամով։

[74] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն։



Գծ. 20. Ռեզիդենտներից ներգրավված ժամկետային և ցպահանջ ավանդների դինամիկան, 2007թ. հունվարից 2020թ. դեկտեմբեր, մլրդ դրամ[75]

Ժամկետային ավանդների տեսակարար կշիռը ռեզիդենտներից ներգրավված ավանդների կառուցվածքում վերջին տասնամյակի ընթացքում գտնվում է 70 տոկոսի տիրույթում, ինչը բավականին լավ արդյունք է (գծ. 21)։



Գծ. 21. Ժամկետային ավանդների տեսակարար կշիռը ռեզիդենտներից ներգրավված ավանդների կառուցվածքում, տոկոս[76]

Բանկերի ներգրված ավանդների աճի տեմպերը էականորեն տարբերվում են ըստ տնային տնտեսությունների և մասնավոր ձեռնարկությունների։ Այսպես, ձեռնարկություններից ներգրված ավանդները կազմում են 535 մլրդ դրամ, տնային տնտեսություններից ներգրավված ավանդները՝ 1,66 տրլն դրամ։ Ընդ որում, տնային տնտեսություններից ներգրված ավանդների

[75] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն։
[76] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն։

պարագայում 2020-ի վերջին ամիսներին աճի որոշակի զսպում է նկատվում, այն դեպքում, երբ ձեռնարկություններից ներգրավված ավանդների պարագայում նախորդ ժամանակահատվածների համեմատությամբ էական տարբերություն չի գրանցվել: Այսպես, 2020-ի սեպտեմբեր-նոյեմբերին մասնավոր ձեռնարկություններից ներգրավված ավանդները կրճատվել են 7 մլրդ դրամով, դեկտեմբերին ավելացել 25-ով, իսկ տնային տնտեսություններից ներգրավված ավանդները կրճատվել են մոտ 100 մլրդ դրամով, որից դեկտեմբերին վերականգնվել է մոտ 70 մլրդ դրամը (գծ. 22):



Գծ. 22. Ռեզիդենտ մասնավոր ձեռնարկություններից և տնային տնտեսություններից ներգրավված ավանդները, 2007թ. հունվարից 2020թ. դեկտեմբեր, մլրդ դրամ[77]

Առևտրային բանկերից ռեզիդենտներին տրամադրված վարկերը կազմում են մոտ 3,9 տրլն դրամ: Ընդ որում, 2020թ. ճգնաժամային դրսևորումները վարկի պահանջարկի և դրա բավարարման միտումների վրա կարծես չեն անդրադարձել (գծ. 23):

Դրամով վարկերի հարաբերակցությունը ընդամենը վարկերի ծավալի նկատմամբ դիտարկվող ժամանակահատվածում նկատելի վայրիվերումներ է գրանցել: 2009թ-ին հաջորդած տարիներին դրամով վարկերի մասնաբաժինը կրճատվել է, իսկ հետագայում որոշակիորեն վերականգնվելով՝ ներկայումս կազմում է 50 տոկոս: Սա դեռևս ցածր է մինչճգնաժամային մակարդակից, ինչը վարկերի սպասարկման առումով տնային տնտեսությունների համար լրացուցիչ ռիսկեր է ստեղծում՝ հետպատերազմյան ժամանակահատվածում արձանագրված փոխարժեքի շոկային տատանման համապատկերում: 2020թ. սեպտեմբեր-նոյեմբերի ընթացքում

[77] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն:

ռեզիդենտներին վարկերի ծավալը ավելացել է 60 մլրդ դրամով, իսկ դեկտեմբերին՝ նոյեմբերի համեմատությամբ կրճատվել է մոտ 28 մլրդ դրամով։



Գծ. 23. Ռեզիդենտներին վարկերը և դրանցում դրամով վարկերի մասնաբաժինը[78]

Հետաքրքրական դինամիկա է ցուցաբերում ռեզիդենտ ձեռնարկություններին և տնային տնտեսությունների տրամադրված վարկերի մեծությունները։ Մինչճգնաժամային հատվածում համաչափ աճելով, 2009թ-ից սկսած ձեռնարկություններին տրամադրվող վարկերի ծավալը գերազանցեց տնային տնտեսությունների վարկավորման ծավալները։ Ըստ էության, բանկերի բիզնեսին վարկավորում էին ավելի հաճույքով, քան տնային տնտեսություններին։ 2019թ-ից սկսած այս երկու հատվածների միջև ճեղքվածքը ըստ էության վերացավ, չնայած վերջին ամիսներին նորից ընդլայնման միտում է ցուցաբերվում (գծ. 24)։ Սա ինչպես տնտեսական նոր իրողությունների արտացոլումն է, այնպես էլ հետպատերազմյան ժամանակաշրջանի առանձնահատկությունների դրսևորումը։

[78] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն։



Գծ. 24. Ռեզիդենտ ձեռնարկություններին և տնային տնտեսություններին առևտրային բանկերի տրամադրած վարկերը, մլրդ դրամ[79]

Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալը կազմում է մոտ 300 մլրդ դրամ: Համավարակով պայմանավորված սահմանափակումների շրջանում վարկավորման տեմպերի աճի զրոյացում է նկատվում՝ ընդհուպ մինչև 2020թ. ավարտը (գծ. 25): Մեկ այլ կարևոր միտում է դրամով վարկերի մասնաբաժնի աստիճանական նվազումը, չնայած այն բանին, որ վարկային կազմակերպությունների վարկային պորտֆելում արտարժույթով վարկերի տեսակարար կշիռն ավելի ցածր է, քան բանկերի պարագայում: 2020թ. սեպտեմբեր-նոյեմբերի ընթացքում ռեզիդենտներին վարկերի ծավալը ավելացել է 14 մլրդ դրամով, իսկ դեկտեմբերին՝ նոյեմբերի համեմատությամբ կրճատվել է մոտ 26 մլրդ դրամով



Գծ. 25. Վարկային կազմակերպությունների տրամադրած վարկերը ռեզիդենտներին[80]

[79] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն:
[80] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն:

Առևտրային բանկերի վարկային պորտֆելի թռիչքային աճի գլխավոր բաղադրիչը սպառողական վարկավորման ծավալների ընդլայնումն է: Այս գործիքը, սակայն, հետպատերազմման շրջանում էական կրճատում է արձանագրել՝ ավելի քան 30 մլրդ դրամով: Նույն կերպ, աճի թույլ դանդաղում է արձանագրվել առևտրի վարկավորման ոլորտում, մինչդեռ արդյունաբերության վարկային պորտֆելի աճը, ինչպես և հիպոթեկային վարկավորմանը, շարունակվում է (գծ. 26):



Գծ. 26. Ռեզիդենտներին տրված վարկերն ըստ ոլորտների, մլրդ դրամ[81]

Գծ. 27-ից էլ ավելի ակնառու է, որ վերջին տարիներին ռեզիդենտներին տրված վարկերի կառուցվածքում ընդլայնվում է սպառողական վարկավորման տեսակարար կշիռը՝ ի հաշիվ առաջին հերթին առևտրի վարկավորման մասնաբաժնի նվազման:



Գծ. 27. Առանձին ոլորտների մասնաբաժինը ռեզիդենտներին տրված վարկերի կառուցվածքում, տոկոսներով[82]

[81] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն:

Տոկոսադրույքներ

ՀՀ ֆինանսական համակարգի կարևոր դրսևորումներից է տոկոսադրույքների նվազման միտումը, ինչը համակարգի կայունության բարձրացման, ռիսկայնության նվազման, արդյունավետության բարձրացման կարևոր նախադրյալ է հանդիսանում:

Հետաքրքրական է, որ մինչև 1 տարի ժամկետով դրամային ավանդների տոկոսադրույքները ավելի դանդաղ են նվազում, քան ԱՄՆ դոլարով ավանդներինը (գծ. 28):



Գծ. 28. Մինչև 1տ. ժամկետով ավանդների տոկոսադրույքները, %[83]

Բացի այդ, մինչև 1տ. ժամկետով վարկերի տոկոսադրույքի կրճատումն ավելի սահուն բնույթ է կրում, քան ավանդներինը (գծ. 29):



Գծ. 29. Մինչև 1տ. ժամկետով վարկերի տոկոսադրույքը[84]

[82] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն:
[83] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն:

Ընդհանուր առմամբ, ԱՄՆ դոլարի պարագայում տոկոսադրույքների սփրեդն ավելի բարձր է, քան դրամինը: Ավելին, դոլարի պարագայում վերջին ամիսներին սփրեդի աճ է նկատվում: Որոշակի աճ կա նաև դրամով տոկոսադրույքների սփրեդի պարագայում: Ըստ էության, պետք է արձանագրել, որ հետպատերազմյան շրջանում առկա և հնարավոր ռիսկերի աճը արդեն իսկ իր արտացոլումն է գտել տոկոսադրույքների սփրեդում:



Գծ. 30. Տոկոսադրույքների սփրեդը, մինչև 1տ. ժամկետով, տոկոս[85]

<u>Շահութաբերություն</u>

Վերջին ամիսներին տնտեսությունում արձանագրված ճգնաժամային դրսևորումներն ու շոկերը իրենց արտացոլումն են գտել բանկերի շահութաբերության վրա: Այսպես, ըստ կապիտալի շահութաբերությունը 2020թ-ի հունիսից սկսած նվազման միտում է գրանցել՝ 12,4 տոկոսից նվազելով 10,9 տոկոսի (գծ. 31): Թույլ նվազում կա նաև ըստ ակտիվների շահութաբերության ցուցանիշի պարագայում:

[84] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն:
[85] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն:



Գծ. 31. Ֆինանսական համակարգի շահութաբերության դինամիկան[86]

Մեկ այլ ուշագրավ միտում է նաև չաշխատող վարկերի տեսակարար կշռի ավելացումը: 2020թ-ի երկրորդ կեսից ցուցանիշը սկսել է աճել՝ 5,2 տոկոսից տարեվերջին հասնելով 7,1 տոկոսի (գծ. 32):

Գծ. 32. Չաշխատող վարկերի հարաբերակցությունն ընդհանուր վարկերին, տոկոսներով[87]

Փոխարժեք

2009թ-ի կեսերից ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկման միտում է ցուցաբերում: Այն որոշ պոռթկումներ է արձանագրել 2015-ին՝ հետագա տարիներին պահպանելով սահուն արժեզրկման միտումը: 2020թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ԱՄՆ

[86] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն:
[87] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն:

դոլարի փոխարժեքն ավելացել է 20 դրամով՝ տարեվերջին հասնելով շուրջ 519 դրամի: Նույն ժամանակահատվածում, սակայն, օրինակ վրացական լարիի նկատմամբ դրամի փոխարժեքի էական փոփոխություն չի արձանագրվել (գծ. 33):



Գծ. 33. ՀՀ դրամի նկատմամբ որոշ արժույթների փոխարժեքները[88]

Միևնույն ժամանակ, իրական և անվանական արդյունավետ փոխարժեքների նվազման թույլ միտումներ են նկատվում (գծ. 34), ինչը մեր տնտեսության արտաքին մրցունակության որոշակի բարելավմանը նպաստող գործոն կարող է հանդիսանալ:



Գծ. 34. Իրական և անվանական արդյունավետ փոխարժեքները[89]

4. ՀՀ արտաքին առևտուրը և դրա առանձնահատկությունները հետպատերազմյան շրջանում

[88] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), արտաքին հատվածի վիճակագրություն:
[89] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ (www.cba.am), արտաքին հատվածի վիճակագրություն:

Հայաստանի Հանրապետությունն իր հռչակումից ի վեր ունի ապրանքների և ծառայությունների արտահանման բացասական հաշվեմնացորդ: Հետճգնաժամային շրջանում ՀՆԱ կառուցվածքում արտահանման մասնաբաժինը շարունակաբար աճում է: Ներմուծումը ևս աճում է, սակայն համեմատաբար ցածր տեմպով, ինչի շնորհիվ արտաքին առևտրի բացասական հաշվեմնացորդը որոշակիորեն նվազել է (գծ. 35)



Գծ. 35. Ապրանքների և ծառայությունների արտահանումն ու ներմուծումը, Հայաստան, տոկոսներով[90]

ՀՀ-ում արտահանում/ՀՆԱ հարաբերակցությունը մի փոքր ավելի է 40 տոկոսից: Գծ. 36-ում դիտարկված երկրների շարքում Հայաստանն այս ցուցանիշով զիջում է իր հիմնական մրցակիցներին, ինչպես նաև առևտրային գործընկեր-երկրներին:

[90] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, WDI:



Գծ. 36. Ապրանքների և ծառայությունների արտահանումն ու ներմուծումը առանձին երկրներում, % ՀՆԱ նկատմամբ, 2019թ.[91]

ՀՀ ապրանքային արտահանման կառուցվածքում բարձր տեխնոլոգիական արտադրանքի արտահանումը 2015-ից ի վեր աճում է՝ 2019-ին ընդհուպ մոտենալով 10 տոկոսի շեմին (գծ. 37)։



Գծ. 37. Բարձր տեխնոլոգիական ապրանքների արտահանումը ՀՀ-ից, տոկոսներով ապրանքների արտահանման նկատմամբ[92]

Բարձր տեխնոլոգիական արտադրանքի արտահանման հարաբերական ցուցանիշով Հայաստանը գերազանցում է հարևան բոլոր երկրներին, նաև՝ որոշ առևտրային գործընկեր երկրների, սակայն մյուս կողմից մեր մակարդակն այս առումով զգալիորեն ցածր է ՏՀԶԿ և միջինից բարձր եկամտով երկրների միջինից (գծ. 38)։

[91] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, WDI:
[92] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, WDI:



Գծ. 38. Բարձր տեխնոլոգիական ապրանքների արտահանումը առանձին երկրներում, տոկոսներով ապրանքների արտահանման նկատմամբ, 2019թ.[93]

Վերջին տարիներին նվազում է նաև բացասական հաշվեմնացորդը զբոսաշրջային ծառայությունների արտաքին առևտրի մասով (գծ. 38)։ Բացի այդ, նվազում են արտահանման կառուցվածքում զբոսաշրջային ծառայությունների արտահանումից մուտքերը։ Սա ոչ այնքան զբոսաշրջային ծառայությունների ցածր մրցունակության հետևանք է, այլ արտահանման մյուս հոդվածների գծով առաջանցիկ աճերի, ինչը դրական պետք է համարել։ Ի վերջո արտահանման կառուցվածքում զբոսաշրջային ծառայությունների մասնաբաժինը շարունակում է բարձր մնալ 25 տոկոսից։ Սա հատկապես զբոսաշրջության առումով բարդ ժամանակահատվածներում արտահանման կատարողականի ապահովման ռիսկեր է ստեղծում, ինչի ականատեսը լինում ենք հիմա։ Ավելին, դիտարկվող երկրների շարքում զբոսաշրջություն/արտահանում հարաբերակցության մակարդակի գնահատականով Հայաստանը հետ է մնում միայն Վրաստանից (գծ. 39)։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զբոսաշրջային ծառայությունների մատուցումը հակված է զգալի տատանողականության՝ արտաքին պայմանների նույնիսկ աննշան փոփոխությունների դեպքում, իսկ հայաստանյան ներկա հետպատերազմյան իրողությունները այս առումով առավել քան խնդրահարույց են, ուստի արտահանման կատարողականի առումով

[93] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, WDI։

զբոսաշրջության մասնաբաժնի բացի լրացումը կարող է տևական ժամանակ ու զգալի ջանքեր պահանջել:



Գծ. 39. Զբոսաշրջային ծառայությունների արտահանումը և ներմուծումը ՀՀ-ում[94]



Գծ. 40. Զբոսաշրջային ծառայությունների արտահանման և ներմուծման համադրումն ըստ առանձին երկրների, 2019թ.[95]

Հանքահումքային արտադրանքի արտահանումը կազմում է ընդհանուր ապրանքային արտահանման մոտ 1/3 մասը: Ըստ որում, հետճգնաժամային տարիներին այս ցուցանիշը անշեղորեն նվազում է՝ 50 տոկոսը գերազանցող խիստ բարձր մակարդակից (գծ. 41):

[94] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, WDI:
[95] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, WDI:



Գծ. 41. Հանքահումքային արտադրանքի արտահանումը ՀՀ-ում, տոկոս ապրանքային արտահանման նկատմամբ[96]

Այնուհանդերձ, դիտարկվող երկրների շարքում հանքահումքային արտահանման տեսակարար կշռով Հայաստանը առաջատար է (գծ. 40), ինչը մի կողմից հետպատերազմյան շրջանում տնտեսական կայունության յուրօրինակ բարձիկ կարելի է համարել, մյուս կողմից դա չի կարող դիտվել որպես տնտեսության մրցունակության բարձրացմանը նպաստող հանգամանք:



Գծ. 42. Մետաղի և հանքաքարի արտահանումը առանձին երկրներում, % ապրանքային արտահանման նկատմամբ[97]

[96] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, WDI:
[97] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, WDI:



Գծ. 43. Վառելիքի արտահանումը առանձին երկրներում, % ապրանքային արտահանման նկատմամբ[98]

Ընդհանուր առմամբ, արտահանման արժեքի ինդեքսը Հայաստանում վերջին 20 տարիների ընթացքում ավելացել է մոտ 9 անգամ, ընդ որում, առավել արագ աճ գրանցելով վերջին 4 տարիների ընթացքում:



Գծ. 44. ՀՀ արտահանումը 2019-2020թթ., ըստ ամիսների, մլն ԱՄՆ դոլար[99]

[98] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, WDI:
[99] Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտե, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2019 և 2020թթ. ամսական զեկույցներ (www.armstat.am):

Գծ. 44-ում ներկայացված են արտահանման ամսական ցուցանիշները, 2019-2020թթ. համար: Կարելի է նկատել, որ 2020-ի ընթացքում երկու նվազումներ են արձանագրվել՝ մարտ-ապրիլից՝ համավարակով պայմանավորված, նաև՝ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին՝ պատերազմական իրավիճակով պայմանավորված: Հետաքրքրական է, որ 2020թ. դեկտեմբերին հաջողվել է գերազանցել 2019-ի դեկտեմբերի մակարդակը:

Նույն կերպ նվազում է արձանագրվել նաև ներմուծման դեպքում: Սակայն ներմուծման պարագայում 2020թ. ամսական ցուցանիշները ցածր են 2019-ի համապատասխան մակարդակներից, այն դեպքում, երբ արտահանման պարագայում այդօրինակ նվազում գրանցվել էր միայն առավել խիստ կարանտինային սահմանափակումների ու առավել ինտենսիվ պատերազմական գործողությունների ժամանակահատվածում:



Գծ. 45. ՀՀ ներմուծումը 2019-2020թթ., ըստ ամիսների, մլն ԱՄՆ դոլար[100]

ՀՀ արտահանման կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին ունեն ԱՊՀ երկրները: Նկատելի է ԵՄ երկրների մասնաբաժնի կտրուկ նվազումը (6 տոկոսային կետով՝ մեկ տարվա ընթացքում, գծ. 46):

[100] Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտե, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2019 և 2020թթ. ամսական զեկույցներ (www.armstat.am):



Գծ. 45. ՀՀ արտահանման կառուցվածքը ըստ երկրների խմբերի, % ընդհանուրի նկատմամբ[101]

Ըստ երկրների ՀՀ արտահանման կառուցվածքում առաջատար դերակատարում ունի ՌԴ-ն, զգալի է 2019-2020 թվականների ընթացքում Չինաստանի մասնաբաժնի ավելացումը (գծ. 46)։



Գծ. 46. ՀՀ արտահանման կառուցվածքում առանձին երկրների մասնաբաժինը, տոկոսներով[102]

Ներմուծման կառուցվածքում ավելանում է ԵԱՏՄ երկրների մասնաբաժինը՝ գլխավորապես ի հաշիվ ՌԴ մասնաբաժնի ավելացման, իսկ ԵՄ երկրներին բաժին է ընկնում ներմուծման 1/5 մասը (գծ. 47)։

[101] Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտե, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2019 և 2020թթ. ամսական զեկույցներ (www.armstat.am)։
[102] Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտե, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2019 և 2020թթ. ամսական զեկույցներ (www.armstat.am)։



Գծ. 47. ՀՀ ներմուծման կառուցվածքը ըստ երկրների խմբերի, % ընդհանուրի նկատմամբ[103]



Գծ. 48. ՀՀ ներմուծման կառուցվածքում առանձին երկրների մասնաբաժինը, տոկոսներով[104]

Վերջին 1 տարվա ընթացքում զգալիորեն ավելացել է հանքահումքային արտադրանքի արտահանումը (գծ. 49), փոխարենը նվազել է պատրաստի սննդի արտադրանքի արտահանումը: Շարունակում են էական դերակատարում ունենալ թանկարժեք քարերի ու մետաղների արտահանման հոդվածները:

[103] Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտե, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2019 և 2020թթ. ամսական զեկույցներ (www.armstat.am):
[104] Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտե, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2019 և 2020թթ. ամսական զեկույցներ (www.armstat.am):



Գծ. 49. ՀՀ արտահանման կառուցվածքն ըստ հիմնական ապրանքային խմբերի, մլն ԱՄՆ դոլար, հունվար-դեկտեմբեր, կուտակային[105]

44-օրյա պատերազմի ամիսներին նվազել է հանքահումքային արտադրանքի արտահանումը, մյուս կողմի՝ պատրաստի սննդի արտադրանքի արտահանումը որոշակիորեն ընդլայնվել է և այդ միտումը պահպանվել է մինչև 2020թ. դեկտեմբեր: Ավելացում է արձանագրվել նաև ոչ թանկարժեք մետաղների, դրանցից իրերի արտահանման հոդվածի մասով (գծ. 50):



Գծ. 50. Արտահանումն ըստ առանձին ապրանքային խմբերի, ամսական, մլն ԱՄՆ դոլար[106]

[105] Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտե, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2019 և 2020թթ. ամսական զեկույցներ (www.armstat.am):
[106] Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտե, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2019 և 2020թթ. ամսական զեկույցներ (www.armstat.am):

6. Ներդրումներն ու ներդրումային միջավայրը՝ հետպատերազմական իրավիճակի համատեքստում

Տնտեսությունում ներդրումների, կայուն տնտեսական աճի կարևոր նախադրյալ են հանդիսանում խնայողությունները: Այս առումով Հայաստանը ոչ շահեկան վիճակում է՝ խնայողություններ/ՀՆԱ հարաբերակցությունը տարեցտարի նվազում է և 2019-ին գտնվել է վերջին տարիների համար նվազագույն մակարդակի վրա՝ 10,2% (գծ. 51)



Գծ. 51. ՀՀ-ում համախառն խնայողություններ/ՀՆԱ հարաբերակցության դինամիկան, տոկոսներով[107]

Դիտարկվող երկրների շարքում Հայաստանի ցուցանիշը նվազագույնն է (գծ. 52): Սույն գնահատականով մենք ավելի քան երկու անգամ զիջում ենք Վրաստանին, 2,5 անգամ՝ Թուրքիային, մոտ 3 անգամ՝ Ադրբեջանին:

[107] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, WDI:



Գծ. 52. Համախառն խնայողություններ/ՀՆԱ հարաբերակցություն դիտարկվող երկրներում, տոկոսներով, 2019թ.[108]

Որպես վերը նկարագրվածի հետևանք, Հայաստանում ցածր է նաև համախառն կապիտալի ձևավորման ցուցանիշը: Այն գտնվում է վերջին 20 տարիների համար նվազագույն մակարդակի վրա (գծ. 53): Եվ բնականաբար, այս պարագայում ևս միջերկրային համեմատությունը ի վնաս մեզ է (գծ. 54):



Գծ. 53. Կապիտալի համախառն ձևավորումը ՀՀ-ում, % ՀՆԱ նկատմամբ[109]

[108] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, WDI:
[109] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, WDI:



Գծ. 54. Կապիտալի համախառն ձևավորում, % ՀՆԱ նկատմամբ, միջերկրային համադրություն, 2019թ.[110]

Հետճգնաժամային ամբողջ ժամանակահատվածում, 2009-ից սկսած, ՕՈՒՆ զուտ ներհոսք/ՀՆԱ հարաբերակցությունը Հայաստանում անշեղորեն նվազում է (գծ. 55)։ Ներկայումս ՕՈՒՆ զուտ ներհոսքը չի գերազանցում ՀՆԱ 2,0 տոկոսը, այն դեպքում, երբ Մոլդովայում շուրջ 5 տոկոս է, իսկ Վրաստանում՝ 7 տոկոսից բարձր (գծ. 56)։



Գծ. 55. ՕՈՒՆ զուտ ներհոսք/ՀՆԱ հարաբերակցությունը ՀՀ-ում, տոկոսներով[111]

[110] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, WDI:
[111] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, WDI:



Գծ. 56. ՕՈՒՆ զուտ ներհոսքը դիտարկվող երկրներում, % ՀՆԱ նկատմամբ[112]

Գծ. 57-ում ներկայացված են ներդրումների զուտ հոսքերն ըստ եռամսյակների: 2020թ. երրորդ եռամսյակում ՕՈՒՆ զուտ ներհոսքը նույնիսկ բացասական է:



Գծ. 58. Ներդրումների զուտ հոսքերը, 2019-2020թթ. եռամսյակներով, մլրդ դրամ[113]

2019-ին ներդրումների առավել մեծ ներհոսք ապահովել է Ռուսաստանը, մինչդեռ 2020-ին ներդրումների զուտ ներհոսքն այդ երկրից բացասական է եղել՝ առաջին եռամսյակում, իսկ 2-րդ և 3-րդ եռամսյակներում՝ զրոյական (գծ. 59): Նմանատիպ իրավիճակ է նաև ՕՈՒՆ զուտ ներհոսքի պարագայում (գծ. 60):

[112] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, WDI:
[113] Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտե, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2019 և 2020թթ. ամսական զեկույցներ (www.armstat.am):



Գծ. 59. Ներդրումների զուտ հոսքերն ըստ առանձին երկրների, մլրդ դրամ[114]



Գծ. 60. ՕՈՒՆ զուտ հոսքերն ըստ առանձին երկրների[115]

[114] Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտե, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2019 և 2020թթ. ամսական զեկույցներ (www.armstat.am):
[115] Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտե, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2019 և 2020թթ. ամսական զեկույցներ (www.armstat.am):

Աղյուսակ 8.

ՕՈՒՆ զուտ հոսքերն ըստ գործունեության առանձին տեսակների, մլրդ դրամ[116]

	2019.I	2019.II	2019.III	2020.I	2020.II	2020.III
Մետաղական հանքաքարի արդյունահանում	-10.6	13.9	-1.7	0	-0.4	-0.1
Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր	-7	6.3	5.1	0.4	-1.8	5.2
Սննդամթերքի արտադրություն	0.2	0.3	0.3	0.1	0.4	0.2
Խմիչքների արտադրություն	-3	-2.4	2.4	0.5	-4.5	1.4
Հիմնական մետաղների արտադրություն	-0.2	-1.5	-5.8	1.6	-12.3	1.3
Էլեկտրականության, գազի, գոլորշու, լավորակ օդի մատակարարում	21	-6.7	11.7	-10	-2.5	-1.1
Մեծածախ առևտուր	1.8	1	0.9	-0.6	2	0.7
Հեռահաղորդակցություն	1.3	-13.3	5.7	-2.7	-3.9	1.7

2019թ. ՕՈՒՆ ներհոսքի հիմնական ուղղությունը մետաղական հանքաքարի արդյունահանումն էր, նաև՝ հանքագործական արդյունաբերությունն ու բացահանքերի շահագործումը: Զգալի ներդրումներ են արվել նաև էներգետիկայի ոլորտում, որոնք, սակայն, հակակշռվել են 2020-ի առաջին եռամսյակում ոչ պակաս զգալի արտահոսքով (աղյուսակ 1):

<u>Դրամական փոխանցումներ</u>

Ստորև ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով արտասահմանից ստացված և արտասահման փոխանցված բոլոր միջոցների (անկախ դրանց բնույթից) վերաբերյալ տեղեկատվություն, որոնք իրականացվել են ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի) կողմից: Այն ներառում է նաև առանց բանկային հաշվի բացման դրամական փոխանցումներ իրականացնող համակարգերի միջոցով ստացված և փոխանցված գումարները:

2020թ. հունվար-մայիս ժամանակահատվածում գրանցվել է դրամական փոխանցումների ներհոսքի նվազագույն մակարդակ, որը հետագա ամիսներին աստիճանաբար վերականգնվել է:

[116] Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտե, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2019 և 2020թթ. ամսական զեկույցներ (www.armstat.am):

Դեկտեմբերին ներհոսքը կազմել է շուրջ 200 մլն ԱՄՆ դոլար, որը վերջին 3 տարիների դիտարկումներում առավելագույն մակարդակներից է (գծ. 61)։



Գծ. 61. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով մուտք եղած և արտերկիր կատարված փոխանցումները, 2018-2020թթ., մլն ԱՄՆ դոլար[117]

Զարգացող տնտեսություններում օտարերկրյա ներդրողների շրջանում անցկացված հարցումներն ի ցույց են դնում, որ ՕՈւՆ-երի վերաբերյալ որոշումների կայացման վրա ազդում են մեծ թվով գործոններ: Ըստ կարևորության դասակարգված գործոնների առաջին եռյակը կազմում են քաղաքական կայունությունը և անվտանգությունը (գործոնը շատ կարևոր են համարել ներդրողների 50%-ը, կարևոր՝ 37%-ը), օրենքներն ու իրավակարգավորումները (շատ կարևոր՝ 40%, կարևոր՝ 46%), տնտեսության կամ ներքին շուկայի տարողունակությունը (շատ կարևոր՝ 42%, կարևոր՝ 38%): Ի հակադրություն վերը նշվածի, հարկային դրույքաչափերը կամ դրանց ցածր լինելը շատ կարևոր են պոտենցիալ ներդրողների միայն 19%-ի, իսկ աշխատուժի և ներդրանքի ցածր ծախսերը՝ 18%-ի համար (գծ. 62): Այս արդյունքները հիմք ընդունելով՝ կարելի է հստակորեն թիրախավորել ՀՀ-ում ներդրումային միջավայրի բարելավման հիմնական ուղղությունները:

[117] Աղբյուրը՝ ՀՀ Կենտրոնական բանկ:



Գծ. 62. Ներդրումային որոշումների վրա ազդող գործոնները[118]

Զարգացող տնտեսություններում քաղաքական ռիսկերը ՕՈւՆ-երի վրա նշանակալի ազդեցություն ունեցող հիմնարար գործոն են հանդիսանում: Ներդրողների հարցումները վկայում են, որ քաղաքական ռիսկի բաղադրիչներից առավել նշանակալի են հանրային մարմինների հետ հարաբերություններում թափանցիկության և կանխատեսելիության պակասը (սա անկարևոր է համարել ներդրողների միայն 23%-ը, իսկ մնացած բոլոր դեպքերում կայացվել են ներդրումների չեղարկման կամ կրճատման որոշումներ), իրավակարգավորումների հանկարծակի փոփոխությունը (անկարևոր է համարում ներդրողների միայն 27%-ը): Ներդրումային որոշումների վրա նշանակալի ազդեցություն ունի կառավարության կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարումը (86% դեպքերում այն հանգեցնում է ՕՈւՆ-երի չեղարկման կամ հետաձգման)[119]:

Ներդրումային միջավայրի բարելավման քաղաքականության արդյունավետությունը, ներդրումային խթանների ստեղծման գործընթացի թիրախայնությունը մեծապես պայմանավորված են այն հանգամանքով, թե ներդրողի վարքագծում ներդրումային ո՞ր շարժառիթներն են առաջնային: Փորձը ցույց է տալիս, որ եթե ներդրումն իրականացվում է շուկա մտնելու կամ բնական ռեսուրսների արդյունահանման համար, ապա ՕՈւՆ-երի խթանները

[118] Աղբյուրը՝ Global Investment Competitiveness Report 2017/2018: Foreign Investor Perspectives and Policy Implications. Washington, DC: World Bank. 2018. – p. 6.
[119] Global Investment Competitiveness Report 2017/2018: Foreign Investor Perspectives and Policy Implications. Washington, DC: World Bank. 2018. – p. 8.

էական դերակատարում չունեն: Եվ հակառակը՝ ներդրումային խթանները կարևորվում են արդյունավետության որոնման շարժառիթով (efficiency-seeking) արվող ներդրումների պարագայում: Ըստ այդմ, ներդրումային խթանները նպատակահարմար է կիրառել տնտեսության այն հատվածներում, որտեղ ներդրումների կառուցվածքում համեմատաբար մեծ է արդյունավետության որոնման շարժառիթով կատարվող ներդրումների մասնաբաժինն ու բարձր է պոտենցիալ ներդրողների միջև մրցակցությունը:



Գծ. 63. Ներդրումային միջավայրի առանձին գործոններն ըստ կարևորության (թվերով նշված են առանձնացված պատասխանների տոկոսները)[120]

Զարգացող տնտեսություններում օտարերկրա ներդրողները ներդրումային միջավայրի գործոնների շարքում առավել կարևոր են համարում հանրային մարմինների հետ հարաբերությունների թափանցիկությունը և կանխատեսելիությունը (կարևոր կամ շատ կարևոր է հարցումներին մասնակցած ներդրողների 82%-ի համար, գծ. 63): Ներդրումների պաշտպանության օրենսդրական երաշխիքները չափազանց կարևոր են համարել ներդրողների 45%-ը, կարևոր՝ 36%-ը: Հարկային արտոնությունները, արտոնյալ առևտրային համաձայնագրի կամ երկկողմ ներդրումային պայմանագրի առկայությունը չափազանց կարևոր են համարել ներդրողների միայն 14-15%-ը: Այս կերպ հստակ տարանջատվում են երկրի քաղաքական ռիսկի տեսանկյունից առաջնային և երկրորդային նշանակության գործոնները: Առավել ևս՝ ի ցույց է դրվում, որ ներդրումային դաշտի բարելավման տեսանկյունից առաջնահերթ լուծում պահանջող

[120] Աղբյուրը՝ Global Investment Competitiveness Report 2017/2018: Foreign Investor Perspectives and Policy Implications. Washington, DC: World Bank. 2018. – p. 9.

հարցերից են հանրային կառավարման մարմինների թափանցիկության և կանխատեսելիության աստիճանի բարձրացումը, երկրի օրենսդրությամբ ներդրումների պաշտպանության արդյունավետ երաշխիքների հստակեցումը, բիզնես սկսելու ընթացակարգերի շարունակական պարզեցումը:

7. Խաղաղությունը և ֆինանսատնտեսական զարգացման մակարդակը

Պատերազմը լրջագույն անվտանգային սպառնալիքներ է ստեղծել հանրապետության համար, որի տնտեսական հետևանքների ամփոփ դիտարկման առումով կարևոր նշանակություն ունի երկրի գնահատումն ըստ անվտանգության մակարդակի և ֆինանսատնտեսական ցուցանիշների վրա դրա ազդեցության գնահատումը: Այս նպատակով մեր կողմից կատարվել է միջերկրային համեմատություն՝ որպես երկրի անվտանգային գնահատական դիտարկելով Տնտեսագիտության և խաղաղության ինստիտուտի կողմից հաշվարկվող Գլոբալ խաղաղության ինդեքսի արժեքները[121]: Դրանք հաշվարկված են մեծ թվով երկրների համար և հետազոտությունների համար առատ նյութ են հանդիսանում: Մասնավորապես, հնարավոր է դիտվում գնահատել խաղաղության տնտեսական էֆեկտը: Այսպես, 2019թ. համար համաշխարհային տնտեսության վրա բռնության ազդեցությունը կամ դրանով պայմանավորված կորուստները գնահատված են 14,5 տրլն ԱՄՆ դոլարի չափով (գնողունակության համարժեքությամբ հաշվարկված)[122]:

Հավելվածի աղյուսակ Հ.1-ում ներկայացված են առանձին երկրների համար հաշվարկված Գլոբալ խաղաղության ինդեքսի արժեքները, նաև՝ նույն երկրներում մի շարք ֆինանսատնտեսական ցուցանիշների մակարդակները:

Հայաստանի խաղաղության ինդեքսի գնահատականը 2,14 է, գրեթե նույնքան, որքան օրինակ Վրաստանի, Բելառուսի կամ Ղրղզստանի պարագայում: Ըստ որում, այն փոքր-ինչ ավելի բարվոք է, քան Ադրբեջանի կամ Իրանի գնահատականը: Սա նշանակում է, որ առնվազն դիտարկվող ցուցանիշի մասով Հայաստանի ընկալումը գլոբալ խաղաղության կամ

[121] Institute for Economics & Peace. Global Peace Index 2020: Measuring Peace in a Complex World, Sydney, June 2020. Available from: http://visionofhumanity.org/reports.
[122] Նույն տեղում, էջ 5:

անվտանգային համատեքստում ավելի վատ չէ, քան տարածաշրջանի կամ ԵԱՏՄ գործընկերների պարագայում։

Խաղաղության և տնտեսական ցուցանիշների կապի ուսումնասիրության նպատակով երկրները ըստ խաղաղության ինդեքսի արժեքների դասակարգվել են հետևյալ 4 խմբերի[123]՝

1. Խումբ 1. ինդեքսի արժեքը մինչև 1,5
2. Խումբ 2. ինդեքսի արժեքը 1,5-ից մինչև 2,0;
3. Խումբ 3. ինդեքսի արժեքը 2,0-ից մինչև 2,5;
4. Խումբ 4. ինդեքսի արժեքը 2,5-ից բարձր։

Հայաստանը տեղ է գտել 3-րդ խմբում։ Այս խմբում առանձին ֆինանսատնտեսական ցուցանիշների միջին մակարդակները և դրանց համեմատությունը ՀՀ համապատասխան ցուցիչների հետ ներկայացված է գծ. 64-ում։ Կարելի է նկատել, որ գլոբալ խաղաղության ցուցիչով ՀՀ հետ համադրելի մակարդակ ունեցող երկրների համեմատությամբ ՀՀ-ում ավելի քիչ ներդրումներ են ներգրավվում, համախառն կապիտալի ձևավորումը զգալիորեն ցածր է (մեզ մոտ ՀՆԱ-ի 17,4%-ը, մինչդեռ 3-րդ խմբի միջինը՝ մոտ 25%)։ Մյուս կողմից, դիտարկվող երկրների համեմատությամբ մեզ մոտ գնաճի մակարդակը զգալիորեն ցածր է, բարձր է ռեզիդենտների վարկավորման հարաբերական մակարդակը, նաև՝ փոքր-ինչ բարձր է տնտեսության արտաքին մրցունակությունը՝ արտահայտված ՀՆԱ կառուցվածքում արտահանման հարաբերակցությամբ, ինչպես նաև արտահանման կառուցվածքում բարձր տեխնոլոգիական ապրանքների և ծառայությունների տեսակարար կշռով։ Եվ սա այն դեպքում, երբ նույն խմբի երկրների համեմատությամբ Հայաստանի արտահանման կառուցվածքում վառելիքի մասնաբաժինը գրեթե 16տոկոսային կետով ցածր է։

[123] Գլոբալ խաղաղության ինդեքսի ցածր արժեքը վկայում է խաղաղության բարձր մակարդակի մասին և հակառակը։



Գծ. 64. Հայաստանի և գլոբալ խաղաղության ինդեքսի ցուցանիշով 3-րդ խումբը կազմավորած երկրների առանձին ֆինանսատնտեսական ցուցանիշների համեմատություն

Վերը նկարագրվածը վկայում է այն մասին, որ արտաքին շուկաներում հայրենական արտադրանքի մրցունակության, բարձր տեխնոլոգիական արտահանման, գնաճի կառավարման հարթություններում Հայաստանն ավելի բարվոք վիճակում է, քան գլոբալ անվտանգային մակարդակի գնահատականով նույն խմբում ներառված մյուս երկրները միջինում: Մյուս կողմից, ներդրումային ռեսուրսների գեներացման և ներգրավման տեսանկյունից հայաստանյան տնտեսության կատարողականը չափազանց ցածր է՝ նույն խմբի միջինների համեմատությամբ: Այս վերջին իրողությունը, մտահոգիչ լինելով հանդերձ, կարելի է մեկնաբանել նաև առանց անվտանգային մակարդակի էական փոփոխության ՀՀ տնտեսության ներդրումային ցուցանիշների բարելավման ներուժային հնարավորությունների առկայության վկայություն:

Հետազոտական հետաքրքրություն է ներկայացնում նաև այն հարցը, թե արդյոք դիտարկվող ցուցանիշների գծով երկրների միջին մակարդակները նշանակալիորեն տարբերվում են գլոբալ խաղաղության ինդեքսի գնահատականների հիման վրա ձևավորված խմբերի միջև: Այս հարցի պարզաբանման համար վերը նկարագրված 4 խմբերի ընդգրկմամբ կատարվել է դիսպերսիոն վերլուծություն, որի արդյունքները ներկայացված են հավելվածի աղյուսակ Հ.2-ում:

Դիսպերսիոն վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ կապիտալի համախառն ձևավորման և ՕՌԻՆ ներգրավման մակարդակները դիտարկվող խմբերում նշանակալիորեն չեն տարբերվում: Սա կարելի է մեկնաբանել, որ ներդրումային գրավչության, ներդրումային ռեսուրսների ձևավորման և ներգրավման առումով գլոբալ խաղաղության մակարդակի տարբերությունները վճռական դերակատարում չունեն:

Մյուս կողմից, միջխմբային տարբերությունները նշանակալի են հատկապես ապրանքների և ծառայությունների արտահանման, ու մասնավորապես՝ բարձր տեխնոլոգիական արտադրանքի արտահանման տեսանկյունից: Այսինքն՝ գլոբալ անվտանգային համակարգում երկրի նպաստավոր դիրքը տնտեսական օգուտների տեսքով կապիտալացվում է հատկապես տնտեսության արտաքին մրցունակության համեմատաբար բարձր մակարդակի, տեխնոլոգիական զարգացման տեսքով:

Աղյուսակ 9.

Գլոբալ խաղաղության ինդեքսի գնահատականների կոռելացվածությունը առանձին ֆինանսատնտեսական ցուցանիշների մակարդակների հետ[124]

	ՕՌԻՆ զուտ ներհոսք (% ՀՆԱ նկ.)	Համախառն կապիտալի ձևավորում (% ՀՆԱ նկատմամբ)	Գնաճ, սպառողական գների ինդեքս (տարեկան, %)	Մասնավոր հատվածի ռեզիդենտների վարկավորում (% ՀՆԱ նկատմամբ)	Վառելիքի արտահանում (% ապրանքային արտահանման նկատմամբ)	Բարձր տեխնոլոգիական արտահանում (% ապրանքների արտահանման [illegible])	Ապրանքների և ծառայությունների արտահանում (% ՀՆԱ նկատմամբ)
Կոռելացիայի գործակիցը[125]	-0.025	-0.085	0.299**	-0.361**	0.169	-0.261**	-0.472**
Նշանակա-լիությունը	0.789	0.356	0.001	0.000	0.064	0.004	0.000

Գլոբալ խաղաղության ինդեքսի արժեքների հետ դիտարկվող ցուցանիշների զույգային կոռելացիաների հաշվարկման արդյունքները ցույց են տալիս, որ գլոբալ անվտանգային միջավայրում երկրի դիրքը և օտարերկրյա ներդրումների ներգրավման ունակությունը նշանակալիորեն կապված չեն (աղյուսակ 9): Մյուս կողմից, գնաճի, արտահանման ծավալի ու

[124] Հեղինակային հաշվարկներ՝ 121 երկրների տվյալների հիման վրա

[125] Դիտարկվում է Պիրսոնի զույգային կոռելացիայի գործակիցը, որը բնութագրում է գծային կապի ուժգնությունը [-1;1] սանդղակով:

դրանում բարձր տեխնոլոգիական բաղադրիչի հարաբերակցության ցուցանիշների հետ խաղաղության ինդեքսի արժեքները կոռելացված են։ Ըստ այդմ, ընդհանրացնելով կարելի է արձանագրել, որ գլոբալ անվտանգային միջավարում առավել խոցելի համարվող երկրներում համեմատաբար բարձր է գնաճի մակարդակը, ցածր է մասնավոր հատվածի վարկավորման ինտենսիվությունը, ցածր է նաև արտաքին շուկաներում հայրենական արտադրության մրցունակությունը։ Սա կարող է նշանակել, որ երկրի անվտանգային մակարդակի բարելավումը առաջին հերթին կարող է նպաստել գների միջին մակարդակի նվազմանը, վարկային շուկայի ակտիվացմանը, տնտեսության արտաքին մրցունակության աճին։

Ամփոփում.

Կատարված հետազոտությունը ցույց է տալիս, որ ՀՀ տնտեսական կառուցվածքն ընդհանուր առմամբ չի համապատասխանում պատերազմական իրավիճակներին և խնդիրներ ունի պետության պաշտպանական ու անվտանգության ապահովման առումով: Մասնավորապես.

- Համախառն ներքին արդյունքի համեմատաբար մեծ ցուցանիշներ են ապահովում գյուղատնտեսությունը, հանքարդյունաբերությունը, առևտուրը, շինարարությունը, սակայն այս ոլորտները ոչ մի ձևով չեն առնչվում ռազմական արդյունաբերության հետ: Բացի այդ, նրանց կողմից ստեղծվող ավելացված արժեքն այնքան փոքր է, որ չեն կարող լիարժեք սպասարկել պետության պաշտպանության և անվտանգության հետ կապված ծախսերը:
- Միջնաժամկետ ծախսերի ծրագրով ՀՀ տնտեսության համար ռիսկային են համարվում գյուղատնտեսության և հանքարդյունաբերության ոլորտները (որոնք տնտեսության գերակա ոլորտներից են), ինչպես նար տրանսֆերտների ներհոսքի տատանումները: Դրանց բարելավման կամ դիվերսիֆիկացման ուղղությամբ որևէ գործողություն նախատեսված չէ, որը հետպատերազմական Հայաստանում կհանգեցնի մակրոտնտեսական կայունության խարխլման:
- Լեռնային Ղարաբաղի ցանքատարածությունների էական կրճատման, ինչպես նաև ՀՀ սահմանամերձ համայնքների ցանկի ընդլայնման պարագայում հացահատիկային մշակաբույսերից ստացվող բերքի առաջարկի կտրուկ նվազեցման պարագայում առաջանում է ներմուծման անհրաժեշտություն: Դրամի արժեզրկումը կնպաստի ներմուծման գների թանկացմանը, որն ընդհանուր առմամբ կառաջացնի պարենային անվտանգության հետ կապված խնդիր: Այդ խնդիրն առավել ակնհայտ կդրսևորվի, քանի որ ՀՀ տնտեսության կառուցվածքում գյուղատնտեսության ոլորտն ունի գերակա դիրք:
- ՀՀ կողմից ընդունված միջազգային տնտեսական և քաղաքական մի շարք փաստաթղթեր գրեթե կիրառելի չեն, քանի որ դրանց արդյունքում տնտեսական անվտանգության, արտարժույթի կայուն ներհոսքի ապահովման, մակրոտնտեսական կայունության երաշխավորման գործընթացները տեսանելի չեն:
- ՀՀ տնտեսության կառուցվածքային առանձնահատկություններից է Երևան քաղաքում համախառն ներքին արդյունքի ձևավորման մեծ տեսակարար կշիռը, միևնույն ժամանակ

Երևանի տեղական ինքնակառավարումը հիմնականում ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացնելը: Այսինքն տնտեսական ռեսուրսների մեծ կենտրոնացվածության պայմաններում Երևանը՝ որպես տեղական ինքնակառավարման մարմին, գրեթե չի ստեղծում նոր արժեք:

- Մարդկային կապիտալի գործոնը դրական ոչ մի ազդեցություն չունի տնտեսության գերակա ճյուղ հանդիսացող ոլորտների (գյուղատնտեսություն, հանքարդյունաբերություն, շինարարություն և այլն) կողմից ստեղծվող ցուցանիշների վրա: ՀՀ բուհերի համար սահմանված մասնագիտությունները գրեթե ոչ մի դեր չեն ունենում տնտեսության համախառն արդյունքի ապահովման վրա:

Այս համատեքստում կարելի է կատարել մի շարք ընդհանրական առաջարկություններ, որոնք հետպատերազմական կարճաժամկետ կամ երկարաժամկետ հատվածներում կբարելավեն տնտեսական ցուցանիշները և կապահովեն մակրոտնտեսական կայունություն:

- Տնտեսության համար գերակա ոլորտներ հանդիսացող ուղղությունները կապակցել երկու այլ ուղղությունների հետ՝ (1)ռազմական արդյունաբերություն (նաև՝ պաշտպանական ու անվտանգության ոլորտների սպասարկում), և (2)կրթություն և գիտություն: Այսինքն մարդկային կապիտալը դարձնել ռազմական արդյունաբերության և տնտեսական արդյունքի ստեղծման (թեկուզև գյուղատնտեսության, շինարարության, կամ հանքարդյունաբերության ոլորտներում) հիմք:
- Հատուկ ուշադրություն դարձնել համայնքային տնտեսության զարգացմանը՝ հատկապես Երևան քաղաքում: Աստիճանաբար նվազեցնել պետական բյուջեից տրամադրվող հատկացումները, դրա փոխարեն մեծացնել համայնքային տնտեսության ստեղծման հնարավորությունները:

Պարենային անվտանգության ապահովման նպատակով իրականացնել պետական միջամտություն մասնավորեցված, սակայն չօգտագործվող հողերի մասով: Նպաստել այդ հողերի մշակմանը օրենսդրական փոփոխությունների միջոցով, որը նաև կարող է դիտարկվել համայնքային տնտեսության զարգացման համատեքստում:

- ✓ ՀՀ ֆինանսաբանկային համակարգը հաջողությամբ դիմագրավել է հետպատերազմյան առաջին շոկերին և ունի կայունության բավականին մեծ պաշար՝ հետագա հնարավոր ցնցումները հաղթահարելու համար։
  - Բանկային համակարգի կապիտալի համարժեքության և իրացվելիության նորմատիվների մեծությունները փոքր-ինչ նվազել են, սակայն զգալիորեն բարձր են կարգավորումներով սահմանված շեմային մակարդակներից։
  - Ֆինանսական կազմակերպությունների շահույթի մակարդակի աճի միտումները 2020-ի երկրորդ կիսամյակում պահպանվել են՝ զգալիորեն նվազելով։
  - 2020թ. առևտրային բանկերի ներգրաված ավանդները աճել են մոտ 150 մլրդ դրամով։ Ավանդների աճի տեմպը ճգնաժամի տեսանկյունից առավել խոցելի ամիսներին էապես ցածր չի եղել՝ մյուս ամիսների համեմատությամբ։ 2020թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին, նույն տարվա օգոստոսի համեմատությամբ, ավանդների ընդհանուր ծավալը նվազել է մոտ 150 մլրդ դրամով, սակայն դեկտեմբերին ավելի քան 200 մլրդ դրամով ավելացումը թույլ է տվել լիարժեքորեն չեզոքացնել այդ նվազումը։
  - Ավանդների կառուցվածքում առավել արագ աճ են արձանագրել ռեզիդենտներից ներգրավված ավանդները։ Ոչ ռեզիդենտների պարագայում վերջին տարվա ընթացքում որոշ դանդաղում է նկատվում։
  - 2020թ. վերջին 4 ամիսներին ժամկետային ավանդները նվազել են մոտ 80 մլրդ դրամով, այն դեպքում, երբ նույն ժամանակահատվածում ցպահանջ ավանդների ծավալն ընդլայնվել է ավելի քան 110 մլրդ դրամով։
  - 2020-ի սեպտեմբեր-նոյեմբերին մասնավոր ձեռնարկություններից ներգրավված ավանդները կրճատվել են 7 մլրդ դրամով, դեկտեմբերին ավելացել 25-ով, իսկ տնային տնտեսություններից ներգրավված ավանդները կրճատվել են մոտ 100 մլրդ դրամով, որից դեկտեմբերին վերականգնվել է մոտ 70 մլրդ դրամը։
  - Առևտրային բանկերի վարկային պորտֆելի աճի գլխավոր բաղադրիչը սպառողական վարկավորման ծավալների ընդլայնումն է։ Այս գործիքը, սակայն, հետպատերազմման շրջանում էական կրճատում է արձանագրել՝ ավելի քան 30 մլրդ դրամով։ Աճի դանդաղում է արձանագրվել առևտրի վարկավորման ոլորտում,

մինչդեռ արդյունաբերության վարկային պորտֆելի աճը, ինչպես և հիպոթեկային վարկավորմանը, շարունակվում է։

- Չաշխատող վարկերի տեսակարար կշիռը 2020թ. երկրորդ կեսից սկսել է աճել՝ 5,2 տոկոսից տարեվերջին հասնելով 7,1 տոկոսի։
- 2020թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ԱՄՆ դոլարի փոխարժեքն ավելացել է 20 դրամով՝ տարեվերջին հասնելով շուրջ 519 դրամի։ Նույն ժամանակահատվածում, սակայն, օրինակ վրացական լարիի նկատմամբ դրամի փոխարժեքի էական փոփոխություն չի արձանագրվել։ Միևնույն ժամանակ, իրական և անվանական արդյունավետ փոխարժեքների նվազման թույլ միտումներ են նկատվում։

✓ Արտաքին առևտուրը ի ցույց է դնում հայաստանյան տնտեսության բոլոր բացերը՝ հանքահումքային հատվածից, զբոսաշրջությունից կախվածությունը, բարձր տեխնոլոգիական արտադրանքի արտահանման ոչ բավարար մակարդակը, առևտրային գործընկեր-երկրների ցածր դիվերսիֆիկացիան։

- 2020-ի ընթացքում արտահանման ամսական ցուցանիշի երկու նվազումներ են արձանագրվել՝ մարտ-ապրիլից՝ համավարակով պայմանավորված, նաև՝ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին՝ պատերազմական իրավիճակով պայմանավորված։ 2020թ. դեկտեմբերին հաջողվել է գերազանցել 2019-ի դեկտեմբերի մակարդակը։
- Ըստ երկրների ՀՀ արտահանման կառուցվածքում առաջատար դերակատարում ունի ՌԴ-ն, զգալի է 2019-2020 թվականների ընթացքում Չինաստանի մասնաբաժնի ավելացումը։
- Ներմուծման կառուցվածքում ավելանում է ԵԱՏՄ երկրների մասնաբաժինը՝ գլխավորապես ի հաշիվ ՌԴ մասնաբաժնի ավելացման, իսկ ԵՄ երկրներին բաժին է ընկնում ներմուծման 1/5 մասը։
- 44-օրյա պատերազմի ամիսներին նվազել է հանքահումքային արտադրանքի արտահանումը, մյուս կողմի՝ պատրաստի սննդի արտադրանքի արտահանումը որոշակիորեն ընդլայնվել է և այդ միտումը պահպանվել է մինչև 2020թ. դեկտեմբեր։ Ավելացում է արձանագրվել նաև ոչ թանկարժեք մետաղների, դրանցից իրերի արտահանման հոդվածի մասով։

- ✓ ՀՀ ներդրումային ներուժը խիստ ցածր է և տարեցտարի էլ ավելի է նվազում։ Հետպատերազմյան շոկերը ավելի խաթարեցին ներդրումային միջավայրը, որն առանց այդ էլ լրջագույն և համակարգված կերպափոխության կարիք ուներ։ Երկրի ներդրումային գրավչությունը բարձրացնելու հիմնական ուղին արդյունավետության վրա հիմնված ներդրումների ներգրավումն է, գլոբալ և տարածաշրջանային արժեշղթաներին ինտեգրումը, մարդկային կապիտալի զարգացումը։
    - 2020թ. հունվար-մայիս ժամանակահատվածում գրանցվել է դրամական փոխանցումների ներհոսքի նվազագույն մակարդակ, որը հետագա ամիսներին աստիճանաբար վերականգնվել է։ Դեկտեմբերին ներհոսքը կազմել է շուրջ 200 մլն ԱՄՆ դոլար, որը վերջին 3 տարիների դիտարկումներում առավելագույն մակարդակներից է։
    - Արտաքին շուկաներում հայրենական արտադրանքի մրցունակության, բարձր տեխնոլոգիական արտահանման, գնաճի կառավարման հարթություններում Հայաստանն ավելի բարվոք վիճակում է, քան գլոբալ անվտանգային մակարդակի գնահատականով նույն խմբում ներառված մյուս երկրները միջինում։ Մյուս կողմից, ներդրումային ռեսուրսների գեներացման և ներգրավման տեսանկյունից հայաստանյան տնտեսության կատարողականը չափազանց ցածր է՝ նույն խմբի միջինների համեմատությամբ։ Այս վերջին իրողությունը, մտահոգիչ լինելով հանդերձ, կարելի է մեկնաբանել նաև առանց անվտանգային մակարդակի էական փոփոխության ՀՀ տնտեսության ներդրումային ցուցանիշների բարելավման ներուժային հնարավորությունների առկայության վկայություն։

Վերջաբանի փոխարեն

Պետք է խոստովանել, որ գրեթե բոլոր ուղղություններով, հետևողականորեն և կայուն կերպով, ձախողել ենք բարեփոխումների իրագործման հնարավորությունները, կորցրել ենք արժեքավոր ժամանակը, նահանջել ենք տնտեսության մրցունակությունը պայմանավորող առանցքային դիրքերում, զիջել ենք նախաձեռնողականությունը: Փոխարենը՝ տուրք տալով ազգային սնապարծությանը, անտեսելով ներքին խնդիրներն ու արտաքին սպառնալիքները, շարունակել ենք ապավինել բացառապես աստվածային ողորմածությանն ու հրաշքին, որը չէր կարող շրջանցել մեզ՝ ընտրյալ ազգիս ներկա սերնդին: Հերթական անգամ, սակայն, այսօրինակ պատրանքները հօդս ցնդեցին՝ պահանջելով վերջապես առերեսվել դաժան իրականությանը, լրջանալ, նորովի իմաստավորել անկախ պետականությունն ու ձեռնամուխ լինել նոր, ավելի կայուն հիմքերի վրա, գլոբալ մասշտաբով մրցունակ տնտեսության կառուցմանը:

Օգտագործված գրականություն

1. «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենք ընդունված է 2015 թ-ի դեկտեմբերի 21-ին
2. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք ընդունված է 2002 թ-ի մայիսի 7-ին
3. ՀՀ կառավարության որոշումը «Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին», 14 նոյեմբերի 2019 թվականի N 1612-Լ
4. ՀՀ կառավարության որոշումը «Հայաստանի Հանրապետության 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին», 10 հուլիսի 2019թ. N900-Ն
5. ՀՀ կառավարության որոշումը «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկը հաստատելու մասին», 23 հոկտեմբերի 2014թ. N1191-Ն
6. «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի 2018-2024 թվականների արդիականացման ծրագիր», հավելված 1 ՀՀ նախագահի 2018թ-ի փետրվարի 17-ի ՆՀ-103-Ա հրամանագիր
7. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2020, ՀՀ ՎԿ. Եր. 2020
8. Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանը թվերով, ՀՀ ՎԿ 2020
9. Հայաստան. Հարկաբյուջետային կանոնների արդիականացում, ԱՄՀ երկրի զեկույց թիվ 17/330, հոկտեմբեր 2017, 74 էջ
10. Եղիազարյան Ա., «Հայաստանի տնտեսության կառուցվածքային վերլուծությունը (հատվածային, զբաղվածության և եկամտային ասպեկտներ)», 21-րդ ԴԱՐ», թիվ 3 (55), 2014թ., էջ 41-67
11. Խաչատուրյան Վահագն «ՀՀ տնտեսության կառուցվածքային փոփոխությունները և դրանց գնահատումը», Բանբեր ՀՊՏՀ 2019.3, էջ 58-70
12. Խաչիկյան Ս. Վ., «Տեղական ինքնակառավարման հիմնախնդիրները Երևանի տնտեսական զարգացման համատեքստում», Հայկական տնտեսագիտական հանդես N1 2020թ, էջ 97-114

13. Խաչիկյան Ս., «Մարդկային կապիտալի զարգացման առանձնահատկությունները ՀՀ մարզերում», ՀՀ մարզերի տնտեսության զարգացման հիմնախնդիրները, հանրապետական գիտաժողովի նյութեր, ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ, Եղեգնաձոր 2016, էջ 12-17
14. Տնտեսական վիճակը Հայաստանում, Կոմպասս կենտրոն, Հայաստան, փետրվար 2017 Friedrich Ebert Stiftung, Երևան, էջ 19
15. Ahonen, P. (2017). Germany and the Aftermath of the Second World War. Journal of Modern History, 89 (2), pp 355-387
16. Bourdieu, P. and L. Wacquant (1992), An Invitation to Reflexive Sociology, The University of Chicago Press, Chicago, IL, 332p.
17. Caner Sancaktar, Political and Economic Reconstruction in Bosnia-Herzegovina, Journal of Balkan Research Institute-2018, pp 211-237
18. Christoph Koenig, Loose Cannons , War Veterans and the Erosion of Democracy in Weimar Germany, November 2015, 74p
19. Economic Consequences of War on the U.S. Economy, Institute for Economics & Peace 2011. 20p.
20. Force Report No. 77. https://www.cfr.org/report/keeping-our-edge/pdf/TFR_Innovation_Strategy.pdf; Bar-El, Ronen, Eyal Pecht & Asher Tishler. 2018. 'Human Capital and National Security.' Defence and Peace Economics 1–21
21. Helge Berger, Albrecht Ritschl, "Germany and the Political Economy of the Marshall Plan, 1947-52: A Re-Revisionist View", in: Barry Eichengreen (ed.), Europe's Post-War Recovery, Cambridge: Cambridge University Press, 1995, pp. 199-245.
22. Jan Čadil et al, «Human Capital, Economic Structure and Growth», Procedia Economics and Finance 12 (2014) pp 85 – 92
23. Justin Yifu Lin, «New Structural Economics, A Framework of Rethinking Development», World Bank Policy Research Paper 5197, February 2010, 38p.
24. Monty G. Marshall, Gabrielle Elzinga-Marshall, "Global Report 2017, Conflict, Governance and State Fragility" Center for Systemic Peace
25. Global Investment Competitiveness Report 2017/2018: Foreign Investor Perspectives and Policy Implications. Washington, DC: World Bank. 2018. – p. 6

26. Organization for Economic Co-operation and Development (OECD) (2001). The Well-Being of Nations: The Role of Human and Social Capital. Paris: OECD.
27. Kenkichiro Koizumi, "In Search of 'Wakon': The Cultural Dynamics of the Rise of Manufacturing Technology in Postwar Japan." Technology and Culture 43, no. 1 (2002), 40
28. The Effect of War on Economic Growth. Clifford F. Thies and Christopher F. Baum, Cato Journal, Vol. 40, No. 1 (Winter 2020). DOI:10.36009/CJ40.1.10. 14 pages.
29. Transformation Experiences of Coal Regions: Recommendations for Ukraine and other European Countries. Center for Environmental Initiative Ecoaction. 118p.
30. Regulation (EU) no 978/2012 of the European Parliament and of the Council of 25 October 2012
31. Shigeru T. Otsubo, Post-war development of the Japanes economy, April 2007,Nagoya University, Japan. 73p.
32. Перспективы гибридной войны, Журнал по проблемам безопасности и обороны Европы, ТОМ 10, № 1, 2020
33. https://www.armstat.am/file/article/armenia_2020_14_.pdf
34. https://www.armstat.am/am/?nid=12&id=10003
35. https://www.mineconomy.am/page/790
36. https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTILists
37. https://www.economicsandpeace.org/
38. https://www.systemicpeace.org/
39. https://www.britannica.com/place/Bochum
40. https://germanwatch.org/sites/germanwatch.org/files/Study_Transformation_Experiences_Coal_Regions_EN.pdf

Հավելված.

Աղյուսակ Հ.1. Գլոբալ խաղաղության ինդեքսը և ֆինանսատնտեսական ցուցանիշների մակարդակները ըստ առանձին երկրների

Երկիրը	Գլոբալ խաղաղության ինդեքս	ՕՈՒՆ զուտ ներհոսք (% ՀՆԱ նկ.)	Հանախառն կապիտալի ձևավորում (% ՀՆԱ նկատմամբ)	Զինած, սպառողական զենքի ինդեքս (տարեկան, %)	Մանավոր հատվածի ռեզիդենտների վարկավորում (% ՀՆԱ նկատմամբ)	Վառելիքի արտահանում (% ապրանքային արտահանման նկատմամբ)	Բարձր տեխնոլոգիական ապրանքների արտահանման (% ապրանքների արտահանման նկատմամբ)	Ապրանքների և ծառայությունների արտահանում (% ՀՆԱ նկատմամբ)
Իսլանդիա	1.1	-2.0	20.1	3.0	90.6	1.6	38.1	45.3
Ավստրալիա	1.3	-1.8	25.5	1.5	85.8	2.2	11.5	55.6
Կանադա	1.3	2.8	22.7	1.9	70.0	24.0	16.5	31.6
Չեխիա	1.3	3.7	26.9	2.8	50.6	1.7	20.8	74.4
Ճապոնիա	1.4	0.7	24.3	0.5	174.7	2.0	17.0	18.5
Ֆինլանդիա	1.4	3.3	24.2	1.0	95.1	8.9	9.2	40.2
Սլովակիա	1.6	2.2	23.6	2.7	62.9	2.9	9.9	92.4
Բուլղարիա	1.6	2.2	21.1	3.1	49.8	9.5	10.9	64.2
Իտալիա	1.7	1.5	18.1	0.6	74.3	3.0	7.8	31.5
Ղազախստան	1.9	2.0	26.8	4.0	24.3	67.1	29.8	36.2
Մոլդովա	2.0	5.0	26.0	4.8	24.8	0.0	3.0	31.4
Ղրղզստան	2.1	2.5	32.9	1.1	25.8	6.0	6.8	37.4
Բելառուս	2.1	2.0	29.0	5.6	29.4	20.7	4.3	66.4
Վրաստան	2.1	7.3	27.2	4.9	67.7	0.9	2.6	54.8
Հայաստան	2.1	1.9	17.4	1.4	59.9	2.8	9.8	41.2
Ադրբեջան	2.3	3.1	20.1	2.6	23.1	90.7	5.0	49.2
Իրան	2.7	2.5	40.7	39.9	25.0	68.7	0.8	25.3
Իսրայել	2.8	4.8	21.4	0.8	65.4	2.1	23.1	29.3
Ուկրաինա	2.9	3.8	12.6	7.9	30.1	1.8	5.6	41.2
ՌԴ	3.0	1.9	23.1	4.5	52.4	52.0	13.0	28.3

Աղյուսակ Հ2. Դիսպերսիոն վերլուծության արդյունքները

Կախյալ փոփոխական	Խմբերը		Միջինների տարբերությունը	Ստանդարտ սխալ	Նշանա-կալիությունը
ՕՈՒՆ զուտ ներհոսք (% ՀՆԱ նկ.)	1	2	-3.7313	2.7143	.685
		3	-.8629	1.9086	.998
		4	-.7426	1.8843	.999
	2	1	3.7313	2.7143	.685
		3	2.8684	2.0611	.673
		4	2.9888	2.0386	.620
	3	1	.8629	1.9086	.998
		2	-2.8684	2.0611	.673
		4	.1204	.6565	1.000
	4	1	.7426	1.8843	.999
		2	-2.9888	2.0386	.620
		3	-.1204	.6565	1.000
Համախառն կապիտալի ձևավորում (% ՀՆԱ նկատմամբ)	1	2	-.7313	1.7782	.999
		3	-.3299	1.8382	1.000
		4	2.2417	2.1809	.895
	2	1	.7313	1.7782	.999
		3	.4014	1.8329	1.000
		4	2.9730	2.1764	.700
	3	1	.3299	1.8382	1.000
		2	-.4014	1.8329	1.000
		4	2.5716	2.2257	.831
	4	1	-2.2417	2.1809	.895
		2	-2.9730	2.1764	.700
		3	-2.5716	2.2257	.831
Գնաճ, սպառողական գների ինդեքս (տարեկան, %)	1	2	-1.3778*	.4657	.026
		3	-1.6251	.6382	.083
		4	-5.5257	2.5185	.238
	2	1	1.3778*	.4657	.026
		3	-.2474	.7457	1.000
		4	-4.1479	2.5479	.546
	3	1	1.6251	.6382	.083
		2	.2474	.7457	1.000
		4	-3.9005	2.5850	.623
	4	1	5.5257	2.5185	.238
		2	4.1479	2.5479	.546
		3	3.9005	2.5850	.623
Մասնավոր հատվածի ռեզիդենտների վարկավորում (% ՀՆԱ նկատմամբ)	1	2	40.1279*	11.4718	.010
		3	46.4312*	12.1932	.003
		4	62.7551*	11.9376	.000
	2	1	-40.1279*	11.4718	.010
		3	6.3033	8.7867	.979
		4	22.6272	8.4285	.062
	3	1	-46.4312*	12.1932	.003
		2	-6.3033	8.7867	.979
		4	16.3238	9.3868	.428
	4	1	-62.7551*	11.9376	.000
		2	-22.6272	8.4285	.062
		3	-16.3238	9.3868	.428
Վառելիքի արտահանում (% ապրանքային արտահանման նկատմամբ)	1	2	-6.0868	4.7861	.755
		3	-9.3698	5.3500	.415
		4	-13.0239	7.8866	.516

Կախյալ փոփոխական	Խմբերը		Միջինների տարբերությունը	Ստանդարտ սխալ	Նշանա-կալիությունը
	2	1	6.0868	4.7861	.755
		3	-3.2830	5.6259	.993
		4	-6.9371	8.0764	.953
	3	1	9.3698	5.3500	.415
		2	3.2830	5.6259	.993
		4	-3.6542	8.4228	.999
	4	1	13.0239	7.8866	.516
		2	6.9371	8.0764	.953
		3	3.6542	8.4228	.999
Բարձր տեխնոլոգիական արտահանում (% ապրանքների արտահանման նկատմամբ)	1	2	8.0555	3.1560	.092
		3	10.1922*	3.2449	.021
		4	11.6753*	3.2041	.006
	2	1	-8.0555	3.1560	.092
		3	2.1366	2.4616	.947
		4	3.6198	2.4076	.595
	3	1	-10.1922*	3.2449	.021
		2	-2.1366	2.4616	.947
		4	1.4832	2.5229	.993
	4	1	-11.6753*	3.2041	.006
		2	-3.6198	2.4076	.595
		3	-1.4832	2.5229	.993
Ապրանքների և ծառայությունների արտահանում (% ՀՆԱ նկատմամբ)	1	2	15.3110	9.6336	.556
		3	27.6774*	9.3498	.047
		4	35.2335*	9.5288	.008
	2	1	-15.3110	9.6336	.556
		3	12.3664*	3.9030	.013
		4	19.9225*	4.3143	.000
	3	1	-27.6774*	9.3498	.047
		2	-12.3664*	3.9030	.013
		4	7.5561	3.6368	.244
	4	1	-35.2335*	9.5288	.008
		2	-19.9225*	4.3143	.000
		3	-7.5561	3.6368	.244

Սոս Խաչիկյան

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ: Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկան:

Հետազոտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է տարածքային կառավարումը, տեղական ինքնակառավարումը, մարդկային ու սոցիալական կապիտալի զարգացումը, կրթությունը, տեխնոլոգիաները:

Զբաղվում է նաև հասարակական գործունեությամբ՝ իրականացնելով քաղաքացիական կրթության, սոցիալական նորարարությունների և հանրային արդիականացման վերաբերյալ նախագծեր: Կրթության և գիտության ոլորտներում ունի գործընկերային հարաբերություններ Գերմանիայի, ԱՄՆ-ի, ՌԴ-ի և այլ երկրների համալսարանական կառույցների ու հետազոտողների հետ: Պարբերաբար ընդգրկվում է միջազգային ծրագրերում՝ որպես փորձագետ:

Արմեն Քթոյան

Մասնագիտական կրթությունը ստացել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում՝ տնտեսագետ-մաթեմատիկոս որակավորմամբ: Հեղինակ է երեք տասնյակից ավելի գիտական հոդվածների:

Հետազոտական հետաքրքրությունների շրջանակը ներառում է բնակչության կյանքի որակի, բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման, ներդրումային միջավայրի բարելավման, տնտեսության գլոբալ մրցունակության բարձրացման խնդիրները, ինչպես նաև տնտեսական գործընթացների մոդելավորման հարցերը: